




# Զիաց Մեր Հանապազորդ

ՅՈՒՆԿԱՐ | ՓԵՏՐՎԱՐ | ՄԱՐՏ 2021



Անսպառ են Տիրոջ ողորմությունները,  
նրա գթությունները չեն նվազում: Ամեն նոր  
առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը,  
Տէր:  
ՈՂԲ ԵՐԵՄԻԱՅԻ 3. 22-23

Հարգելի՛ բարեկամ,  
Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

**Սբ. Թադեոս (Թադե) Առաքյալի վանքը հայկական ճարտարապետական հուշարձան է Իրանի Արտազ գավառի Մակու քաղաքից 20 կմ հարավ-արևելքում՝ Չալդրանի Ղարաքիլիսա գյուղում: Կոչվում է Թադեոս առաքյալի անունով, որն ըստ ավանդության՝ եղել է Հայաստան Քրիստոնեություն բերողներից մեկը:**

**Կառույցը քանիցս ավերվել է երկրաշարժերից և վերանորոգվել: Վանքի գմբեթը բրգածն է և բաղկացած 12 մասերից: Արևելյան հատվածը սև քարից է և 14-րդ դարի երկրաշարժից կանգուն մնացած միակ մասն է՝ Իսկ կենտրոնական ու արևմտյան հատվածները կառուցվել են երկրաշարժից հետո՝ սպիտակ քարով: Վանքի առաստաղը և ներսի պատերը պարզունակ են, բայց դրսի պատերը զարդարված են սրբաքանդակներով ու զարդաքանդակներով:**

**Ձանգակատունը կառուցված է չորս հսկա սյուների վրա, որոնք միացված են կամարներով:**

**2008 թ. Ս. Թադեոսի վանքը գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության մեջ՝ «Հայկական եկեղեցիները Իրանում» խորագրի ներքո: ([www.wikipedia.org](http://www.wikipedia.org)):**

Լուսանկարիչ՝ վերապատվելի Վազրիկ Սաֆարյան  
Թեհրան, Իրան



## Ձեռագ մեր հանապազորդ

ՀՈՒՆՎԱՐ | ՓԵՏՐՎԱՐ | ՄԱՐՏ 2021

**ԼՔ. ՏԱՐԻ**

**Ա. ԵՌԱՄՍԵԱԿ**

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Եթե ջրերի միջով անցնես, քեզ հետ կլինեն: (Ես. 43.2)

## **ՉՆԱՎԱՐԿՎԱԾ ՋՐԵՐ**

**Տ**արբեր վայրերում տարբեր կերպ են դիմավորում Նոր տարին. Նյու Յորքում մեծ ու փայլուն գնդակ է իջնում գլխավոր հրապարակում, Լոնդոնում մարդիկ հաշվում են Բիգ Բենի ժամացույցի հնչյունները, Սիդնեյի երկինքը ալեկոծվում է հրավառության պայթյուններից: Այդ բոլորի մեջ մի գրավիչ բան կա. այն, որ Նոր Տարում բոլորս սկսում ենք նոր ջրերում նավարկել, սպասում ենք նոր բարեկամություններ ու նոր, լավ իրադարձություններ:

Բայց միշտ չէ, որ Նոր տարին հաճելի է լինում: Ոչ ոք չգիտես ապագան: Ամանորի հրախաղերը ստեղծվել են Ջինաստանում՝ ենթադրաբար չար ոգիները հեռացնելու և նոր, արդյունավետ ու բարեկեցիկ եղանակի ակնկալիքով: Իսկ Նոր տարում նոր որոշումներ կայացնելու սովորույթը գալիս է դեռևս Բաբելոնի ժամանակներից, երբ զանազան ուխտեր էին անում աստվածների բարեհաճությանն արժանանալու համար: Այդ բոլորը անհայտ ապագան ապահով դարձնելու փորձեր են եղել: Իսկ երբ ուխտ չէին անում, բաբելոնացիներն զբաղված էին լինում երկրներ ու ժողովուրդներ գրավելով, որոնց մեջ էին նաև իսրայելցիները: Ժամանակին Աստված ստրկացած հրեա ժողովրդին պատգամեց. «Մի՛ վախեցիր... եթե ջրերի միջով անցնես, քեզ հետ կլինես» (Ես. 43.1-2): Հետագայում Հիսուսը այդպես ասաց, երբ Ինքն ու Իր աշակերտները սաստիկ ալեկոծության մեջ ընկան: Նախքան ջրերը խաղաղեցնելը՝ նա ասաց. «Ինչո՞ւ եք վախկոտ, թերահավատներ՝» (Մատթ. 8.23-27): Ինչ էլ դիմագրավելու լինենք, Նա մեզ հետ է և ունի ալիքները խաղաղեցնելու զորություն:

**Աղոթք** - Հայր, ինչ էլ բերի այս Նոր տարին, շնորհակալ եմ, որովհետև Դու ինձ հետ ես լինելու: Ամեն:

**Նոր տարում անհանգստություններ ու մտահոգություններ կունենանք, սակայն կարելի է աղավինել Աստուծո:**

Իմ խոսքերը լսողն ու չաճողը մնան է մի մարդու, որ տունը հողի վրա կառուցեց, առանց հիմքի: (Պուկ. 6. 49)

### **ԵՐԲ ՀԵՂԵՂՆԵՐԸ ԳԱՆ**

**Ա**մերիկյան Կոլորադո նահանգը հայտնի է իր ապառաժոտ լեռներով ու ձնառատ ձմեռներով: Բայց այստեղի ամենավատ բնական աղետը կապված է ոչ թե առատ ձյան, այլ անձրևի հետ: Մեծ Թոմսոն անունով հեղեղը պատահեց 1976-ի հուլիսի 31-ին էսթա պարկ գյուղաքաղաքի մերձակայքում: Դրա հետևանքով 144 մարդ զոհվեց: Այդ հեղեղից հետո ուսումնասիրվեցին տարածքի ճանապարհների ու մայրուղիների հիմքերը: Հաստատուն էին մնացել ցեմենտով լցվածները:

Մեր կյանքում էլ նման հեղեղներ կարող են լինել: Այդ առումով ճիշտը «եթե հեղեղները գան» արտահայտությունը չէ, այլ «երբ հեղեղները գան»: Նախագգուշական ազդարարումներ լինում են, սակայն ոչ միշտ: Հիսուսը նման ժամանակների համար շեշտում է զորավոր հիմքեր ունենալու անհրաժեշտությունը: Հիմքեր, որոնք շինված կլինեն ոչ միայն Իր խոսքերը լսելով, այլև ավետարանը ապրելով (Ղուկ. 6.47) : Սա նման է մեր կյանքի հիմքերը ցեմենտով լցնելուն: Երբ հեղեղները գան, իսկ դրանք անպայման գալու են, մենք կկարողանանք անսասան մնալ, որովհետև «ժայռի վրա ենք հաստատված» (Հմ.48): Ամուր հիմքի բացակայությունը մեր կյանքը կտանի դեպի «տապալում ու կործանում» (Հմ.49) :

Սա նման է իմաստունի ու անմիտի տարբերությունը:  
Լավ կլինի երբեմն կանգ առնել մի պահ ու ստուգել հիմքերը: Հիսուսը մեզ կօգնի զորացնել մեր թույլ կողմերը, որպեսզի երբ հեղեղները մոտենան, կարողանանք հաստատուն մնալ Իր զորություն մեջ:

**Աղոթք** - Տե՛ր, ուզում եմ ոչ միայն լսող լինել, այլև գործադրող: Օգնի՛ր ինձ՝ տեսնելու իմ հիմքերի թույլ մասերը, որոնք ուշադրության կարոտ են: Ամեն:

**Թույլ սեղեր մեր կյանքում մի՛ս էլ կլինեն, բայց դե՛ս է Տիրոջն աղավիհնել:**

Մարթան Հիսուսին ասաց. «Տե՛ր, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի: (Ռոմ. 11.21)

## **ՀԻՍՈՒՍԻ ՀԵՏ ՔԱՅԼԵԼ**

**Վ**երջերս մեքենաս նորոգելու անհրաժեշտություն եղավ, և այն արհեստանոցում թողնելուց հետո որոշեցի քայլելով տուն գնալ: Շուտով նկատեցի, որ աղմկոտ ու բանուկ պողոտայում բոլորն արագ էին քայլում: Այնուհետև անդրադարձա, որ մենք վարժվել ենք ամեն ինչ շատ արագ անելու: Դա դեռ բավական չէ, ես հաճախ սպասում եմ, որ Աստված նույնպես արագ գործի, որ ինձ համար ունեցած իր ծրագրերը հարմարեցնի իմ ժամանակացույցին: Երբ Հիսուսն աշխարհում էր, Նրա նպատակային դանդաղ ընթացքը բարեկամներից շատերին հուսախաբ արեց: Հովհաննու 11-ում Մարիամն ու Մարթան Հիսուսին լուր ուղարկեցին, որ իրենց եղբայր Ղազարոսը հիվանդ է: Նրանք գիտեին, որ Հիսուսը կարող է օգնել (Հմ. 1-3): Սակայն Նա Բեթանիա հասավ չորս օր անց (Հմ.17), երբ Ղազարոսն արդեն մահացել էր: Մարթան Հիսուսին ասաց. «Տե՛ր, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի (Հմ.21): Նշանակում է՝ Հիսուսը բավականաչափ արագ չէր շարժվել: Սակայն Նա Ղազարոսին մեռելներից կենդանացնելու ավելի մեծ ծրագրեր ուներ (Հմ. 38-44): Դու կարո՞ղ ես պատկերացնել Մարթային պատած հուսահատությունը: Ես կարող եմ: Երբեմն ես ուզում եմ, որ Հիսուսն ավելի արագ պատասխանի իմ աղոթքին: Երբեմն ինձ էլ է թվում, թե Նա ուշանում է: Բայց Հիսուսի ինքնիշխան ժամանակացույցը շատ տարբեր է մերինից: Նա իր Փրկության ծրագրեր իրագործում է ոչ թե մեր, այլ Ի՛ր ժամանակացույցով: Եվ փառքի ու բարություն գերագույն արդյունքն էլ ցույց է տալիս այնպիսի ձևերով, որ մեր ծրագրերից շատ ավելի մեծ են:

**Աղոթք** - Հայր, երբեմն անհամբեր եմ դառնում: Օգնի՛ր՝ կարողանամ հավատով վստահել Քո կատարյալ ժամանակացույցին ու փարվել Քո բարությանը նույնիսկ առանց պատճառը հասկանալու: Ամեն:

**Յուսահասվում եմ, երբ մեր աղոթքների դասասխանները ուժանում են: Բայց շեւնում եմ, որ Տերը մեզ համար ավելի մեծ ծրագրեր ունի:**

Ծառայեցե՛ք Տիրոջն ուրախությամբ: Նրա առջև ելե՛ք ցնծությամբ: (Սաղմոս 99.1-2)

## **ՊԱՇՏԱՍՈՒՆՔԻ ԿԵՆՑԱՂ**

**Ք**րիստոնեական համագումարի կենտրոնում նախաճաշի հերթում կանգնած էի, երբ մի խումբ կանայք մտան ճաշասրահ: Ժպտալով ողջունեցի իմ ետևում կանգնած տիկնոջը: Պատասխանելով նա ասաց, որ ճանաչում է ինձ: Ուտելիքը պնակների մեջ դնելիս փորձում էի հիշել, թե որտեղ ենք մենք հանդիպել, և վստահ էի, որ ինչ-որ մեկի հետ շփոթել է ինձ:

Կեսօրին դարձյալ ճաշարանում նույն կինը մոտեցավ ու հարցրեց. «Սպիտակ մեքենա ես վարում, այնպես չէ՞»: «Մի քանի տարի առաջ էի վարում»,-ասացի: Նա ժպտալով ասաց. «Գրեթե ամեն առավոտ մենք կանգնում էինք նախակրթարանի շենքի մոտի լուսացույցի տակ: Դու միշտ, ձեռքերդ բարձրացրած, ուրախ-զվարթ երգում էիր: Մտածում էի, որ աստվածապաշտ ես: Նույնիսկ դժվարին պահերին ուզել էի քեզ միանալ»: Այսպես Աստծուն փառաբանելով՝ միասին աղոթեցինք ու այդ օրը միասին ճաշելով՝ հաճելի պահեր անցկացրինք:

Նոր բարեկամս հաստատեց, որ մարդիկ նկատում են, թե Հիսուսին հետևողները ինչպես են վարվում, նույնիսկ այն պահերին, երբ նրանք կարծում են, թե իրենց ոչ մեկը չի տեսնում: Ուրախությամբ Աստված պաշտելու կենցաղ որդեգրելով՝ կկարողանանք ընդառաջ գնալ մեր Արարչին ցանկացած տեղ և ցանկացած ժամանակ: Գիտակցելով՝ Նրա մնայուն սերն ու հավատարմությունը՝ մենք կկարողանանք մտերմորեն հաղորդակցվել իր հետ ու շնորհակալ լինել իր տված մնայուն հոգատարություն համար (Սաղմ. 99): Աստծուն պաշտելը կիրակի օրվա պաշտամունքից շատ ավելին է:

**Աղոթք** - Ամենակարող Աստված, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ պաշտեմ Քեզ վարակիչ ուրախությամբ ու երախտագիտությամբ: Ամեն:

**Մեր ասվածադասությունը կարող է փառալերել ուրիշներին, որ իրենց էլ Տիրոջը դասեն:**

Քո խոսքն ինձ ուրախություն և իմ սրտի համար ցնծություն կլինի, քանզի քո անունը ինձ վրա է դրված, ո՛վ Ամենակալ Տեր Աստված: (Երեմ. 15.16)

### **ՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅ**

**Ի**ր հիսնամյա հովվական ծառայության սկզբում Չարլզ Միմեոնը Քեմբրիջ քաղաքում հանդիպել էր դրացի եկեղեցու հովիվ Հենրի Վենին ու իր դուստրերին: Երիտասարդ հովիվը աղջիկներին կոպիտ ու ինքնահավան էր թվացել: Ի պատասխան՝ նրանց հայրը խնդրել էր, որ աղջիկները մի դեղձ պոկեն ծառից: Աղջիկները զարմացել էին, որ հայրը ուզում է չհասած պտուղ քաղել տալ, և նա պատասխանել էր. «Միրելիներս, հիմա կանաչ է, բայց պետք է սպասել, մի քիչ արևով ու անձրևներով դեղձը կհասունանա և կքաղցրանա: Նույնն էլ պրն Միմեոնի դեպքում է»:

Տարիների ընթացքում Միմեոնն Աստծո փոխակերպող շնորհքով իսկապես փափկեց: Պատճառներից մեկը Աստվածաշունչ կարգալու իր նվիրումն ու ամենօրյա աղոթքն էր: Մի քանի ամիս նրա հետ բնակվող բարեկամներից մեկը, տեսնելով այս բարի սովորությունը, ասաց. «Նրա մեծ շնորհքի ու հոգևոր ուժի գաղտնիքը հենց դրա մեջ էր»:

Միմեոնը, ամեն օր Աստծո հետ հաղորդակցվելով, հետևեց Երեմիա մարգարեին, որը հավատարմորեն լսում էր Աստծո խոսքը: «Քո խոսքն ինձ ուրախություն և իմ սրտի համար ցնծություն կլինի, քանզի քո անունը ինձ վրա է դրված, ո՛վ Ամենակալ Տեր Աստված» (Երեմ. 15.16) :

Եթե մենք էլ ներկայանում ենք որպես կանաչ պտուղ, կարող ենք վստահել Աստծուն, որովհետև Նա կկարողանա օգնել մեզ, որ Իր Հոգու միջոցով փափկենք, մինչև որ Աստվածաշունչը կարգալուծ ու նրան հնազանդվելով՝ կծանոթանանք Իր հետ:

**Աղոթք** - Հայր, Քո խոսքը սնուցում ու պաշտպանում է ինձ մեղքից: Օգնիր, որ կարողանամ ամեն օր կարդալ այն: Ամեն:

**Ասծո խոսքը փոխում ու հեղափոխում է մեզ:  
Հարկավոր է ամեն օր կարդալ այն:**





Աստծու սերը մեր մեջ նրանով երևաց, որ Աստված իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի նրանով կյանք ունենանք: (Ա.Յովհ. 4.9)

### **ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՍԵՐ**

**Ռ**արձայլ Ծնունդ է, ուրախության ու տոնակատարության ժամանակաշրջան, որը զուգորդվում է պաշտամունքի, ընտանեկան հավաքույթյունների ու տոնախմբությունների հետ: Բայց Սուրբ Ծնունդը միայն այս բարի պլանդույթյունների պահպանումն ու կատարումը չէ: Ծնունդի խորհուրդը Աստծո հավիտենական սերն ու Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղությունը այդ սիրո արտահայտությունն է: Ամեն բան այս կյանքում ավարտվում է կամ ունի վերջնաժամկետ, բացի մի ճշմարտությունից, որը չի սպառվում. դա Աստծո հավիտենական Սերն է: Մի կողմից տեսնում ենք բռնություններ մարդու հանդեպ, մյուս կողմից՝ Աստծո մեծ ու հիանալի սերը: Մեր ժամանակներում հասարակության մեջ շատ են բռնությունները, ճգնաժամ է ընտանիքներում, շատերն ունեն այն զգացումը, թե ամեն բան անիմաստ է: Այս միջոցառումն ապրողների համար Ծնունդը շատ է հեռու իսկական տոն լինելուց: Այո, Ծննդյան ուրախ տոներից շատերն են անմասն մնում, որովհետև բազմաթիվ դժբախտ, անտուն, անտեր, հոգածությունից զուրկ մնացած մեծեր ու մանուկներ կան: Այնպես որ, այս ուրախ առիթով նվերներ փոխանակելիս էլ կարիք ունենք լսելու Տեր Հիսուսի և Հոր սիրո հին պատմությունը: Թեև Աստծո սերը հին է, բայց ամենամնայուն ու զորավոր սերն է աշխարհում: Այդ սերը Աստված մեզ հայտնել ու հայտնում է դեռևս Հիսուսի մարդեղությունը: Մեզ մնում է ընդունել այդ բացառիկ, ազդու և զորավոր սերը: Ծնունդը, որ այսօր տոնում ենք, այդ մեծ ու անբացատրելի աստվածային հավիտենական Սիրո արտահայտությունն է: Աստծո մեծագույն պարգևն է, որ այսօր տրվում է մեզանից յուրաքանչյուրին:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ փրկելու համար հաճեցիր Որդուդ ուղարկել աշխարհ: Օգնիր՝ հիշեմք, որ Որդուդ Ծնունդով Դու եկար Քո հավիտենական սիրո պարգևը մեզ տալու: Ամեն::

**Երբ նվերներ եմք տալիս ու ստանում, չմոռանանք, որ մեծագույն պարգևը Աստծո սերն է:**

Շեփոր կհնչեցնէք ձեր ուրախության օրերին, ամսվա առաջին օրերին, ինչպես նաև ողջակեզներ և փրկության համար զոհեր մատուցելիս: (Թվեր. 10.10)

### **ՇԵՓՈՐՆԵՐ ՀՆՉԵՑՐԵՔ**

«Թեպետ» Միացյալ Նահանգներում տարածված շեփորային մի մեղեդի է, որը հնչում է օրվա վերջում , ինչպես նաև հոգևորկապորությունների ժամանակ: Շատ ուրախացա, երբ գտա այդ երգի բառերը: Դրա տներից շատերը վերջանում են «Աստված մոտ է» բառերով: Փաստորեն ամեն երեկո այդ երգը լսողը կամ սիրելիի մահը սգացողը վստահություն է ձեռք բերում, որ Աստված մոտ է:

Հին Կտակարանում նույնպես շեփորները իսրայելցիներին հիշեցնում էին, որ Աստված մոտ է: Աստծո և Իսրայելի ժողովրդի միջև եղած ուխտի համաձայն՝ կազմակերպվելիք խնջույքների ու տոնակատարությունների ժամանակ հրեաները պետք է «շեփոր հնչեցնեին» (Թվեր 10.10): Դա հիշեցում էր ոչ միայն Աստծո ներկայություն, այլև այն մասին, որ Նա հասանելի էր և պատրաստ օգնելու նրանց, երբ ամենից ավելի Իր կարիքն ունենային:

Այսօր էլ մենք կարիք ունենք հիշեցման, թե Աստված մոտ է մեզ: Մեր պաշտամունքի ձևերով, աղոթքով ու երգով մենք էլ կարող ենք կանչել Աստծուն: Գուցե մեր աղոթքները շեփորների նման խնդրեն, որ Աստված օգնի մեզ: Ամենալավ քաջաբերանքն այն է, թե Աստված միշտ լսում է մեր աղոթքները (Ա. Պետ.3.12): Մեր յուրաքանչյուր խնդրանքին Նա պատասխանում է Իր ներկայություն մասին վստահեցմամբ, ինչը զորացնում ու մխիթարում է մեզ դժվարին ու ցավալի իրավիճակներում:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ պատասխանում ես օգնության իմ կանչին և վստահեցնում եմ ինձ: Բո ինչ որ ներկայության ու սիրո մասին: Ամեն:

**Քաջալերվի՛ր, որովհետև Աստված լսում է քո աղոթքը և օգնում է քեզ:**

Որովհետև Աստված անիրավ չէ, որ մոռանա ձեր գործերը և այն սիրո աշխատանքը, որ նրա անվան համար ցույց տվեցիք, որ ծառայում էիք սրբերին : (Եբր. 6.10)

## **ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՍՏՎԱԾԸ**

**Է** ննը հարգարում էր իմ այցելած պանդոկի մարզասրահը, և մենք խոսքի բռնվեցինք: «Երբեմն ինձ անտեսանելի եմ զգում,- ասաց նա,- բայց շատ եմ ուզում, որ Աստված ինձ օգտագործի»: Ես իմացա, որ նա ժամանակին տարված է եղել թմբամոլութայամբ ու փողոցում բնակվող անբարոյական կին է եղել: Բայց իմանալով, որ Աստված կների, եթե ինքը հրաժարվի այդ կյանքից ու Իր հետ քայլի, նա մի օր ծնրազրել է Հիսուսի ոտքերի առաջ, և Նա ազատել է կնոջը: Ես շնորհակալ եղա էննին, որ կիսվեց իր պատմութայամբ ու ասաց, թե ինչ է արել Աստված իր համար: Վստահեցրի նրան, որ ինքն անտեսանելի չէ, որ Աստված իրեն օգտագործում էր նաև մեր խոսակցութայան ժամանակ՝ հիշեցնելով Իր կյանք փոխող զորութայան մասին: Աստված սիրում է ուրիշներից անտեսված մարդկանց օգտագործել: Անդրեաս առաքյալի մասին այդքան չի խոսվում, որքան իր եղբայր Պետրոսի: Բայց Աստվածաշունչը հիշում է, թե.«Սա սկզբում իր Սիմոն եղբորը գտավ ու նրան ասաց. «Գտել ենք Մեսիան... Եվ նրան Հիսուսի մոտ բերեց» (Հովհ. 1.41-42): Պետրոսը Հիսուսին հանդիպեց Անդրեասի միջոցով: Վերջինը, որ Հովհաննես Մկրտչի աշակերտներից մեկն էր, նրանից իմացավ Հիսուսի մասին, հետևեց Նրան ու հավատաց: Շուտով իր եղբորը պատմեց Նրա մասին: Անդրեասի լուռ հավատարմութունը կարևոր ազդեցութուն ունեցավ, որն ամբողջ աշխարհն էր շարժելու: Աստված հավատարիմ ծառայութայուններն ավելի է արժևորում, քան անունն ու համբավը: Նա կարող է մեզ օգտագործել, ինչ դիրքում էլ լինենք, նույնիսկ այն ժամանակ, երբ անտեսված ենք:

**Աղոթք** - Յայր, շնորհակալ եմ, որ ինձ բոլորովին չես անտեսում: Երախտապարտ եմ, որ Դու ինձ կարողանում ես օգտագործել՝ առանց տարբերություն դնելու՝ որտեղ եմ ես: Ամեն:

***Ուրիշներին ծառայելով՝ կարող ես Ասծո հավասարիմ ծառան լինել:***

Ամեն դառնությունն թող վերցվի ձեզանից: (Եփ. 4.31)

## **ՓՈՐԻՐ ՈՒ ԴՈՒՐՍ ՅԱՆԻՐ**

**Ե**րբ Ռեբեկայի եղբայրն ու կինը սկսեցին ընտանիքում խնդիրներ ունենալ, Ռեբեկան աղոթում էր նրանց հաշտության համար: Դժբախտաբար, նրանք ամուսնալուծվեցին: Կինը զավակներին վերցրեց և ուրիշ նահանգ գնաց, ինչին ամուսինը չառարկեց: Դրանից հետո Ռեբեկան երբեք չտեսավ իր սիրելի եղբոր զավակներին: Տարիներ անց նա խորհում էր. «Որովհետև փորձում էի այդ տխրությունը տանել միայնակ: Թողեցի, որ դառնությունը արմատ գցի իմ սրտում և այն սկսեց տարածվել ընտանիքիս ու բարեկամներիս մեջ»:

Հուսովի գիրքը պատմում է Նոոմին անունով մի կնոջ մասին, որի սրտում եղած տագնապները վերածվեցին դառնության: Նրա ամուսինը մահացավ օտարության մեջ, տասը տարի անց էլ երկու որդուն կորցրեց: Նա մնաց անօգնական ու լքված՝ իր երկու հարսների՝ Օրփայի ու Հուսովի հետ (1.3-5): Երբ Նոոմինն ու Հուսովը վերադարձան Նոոմինի հայրենի երկիրը, նրանց ուրախությամբ դիմավորեցին: Սակայն Նոոմինն իր բարեկամներին ասաց. «Ամենակարողը խիստ դառնացրեց ինձ... Տերն ինձ նկուն դարձրեց, և Ամենակարողը չարչարեց ինձ» (Հմ.20-21): Նա նույնիսկ խնդրեց, որ իրեն այսուհետ կոչեն Դառնացած:

Ո՞վ իր կյանքում չի ունեցել հուսախաբուություն. մեկը դառը խոսքից է վրդովվում, մեկ ուրիշի սպասելիքը չի իրականանում: Քնքուչ Պարտիզպանը պետք է փորի ու հանի մեր սրտերից դառնության արմատները և դրանց փոխարեն դնի անուշ և ուրախ հոգի:

**Աղոթք** - Զայր, օգնիր՝ կարողանամ կյանքում միշտ տեսնել Քրիստոսի բարությունը և փորելով դուրս հանեմ եղած որևէ դառնություն, որն անպատվում է Քեզ: Ամեն:

**Դառնության զգացումներ կունենանք, սակայն Աստուծո շնորհով կարելի է դրանցից ձերբազատվել:**



Սրբերն են այս աշխարհը դատելու: (Ա.Կորնթ. 6.2)

## ԹՂԹԵ ԹԱԳԵՐ

**Մ**եր տանն անցկացրած տոնական ճաշկերույթի վերջում բոլոր ներկաները բացեցին քաղցրավենիքով ու փոքր խաղալիքներով լի փոքրիկ տոպրակները, որոնց մեջ կային նաև թղթե թագեր: Դրանք դրեցինք մեր գլուխներին ու ծիծաղեցինք. սեղանի շուրջ նստած՝ մի պահ բոլորս մեզ թագավոր ու թագուհի զգացինք, թեկուզ եթե մեր թագավորությունը ընդամենը մի ճաշասենյակ էր:

Այս դրվագը ինձ հիշեցրեց աստվածաշնչյան մի խոստում, որի մասին հաճախ եմ մտածում: Հաջորդ կյանքում բոլոր հավատացյալները Հիսուսի հետ պիտի կիսեն իշխելու հեղինակային իրավունքը: Պողոս առաքյալը սա է հիշում, երբ հարցնում է «Չգիտե՞ք, որ սրբերն են այս աշխարհը դատելու» (Ա.Կորնթ. 6.2): Պողոսն այս տարբերակումն անում է այն ցանկությամբ, որ հավատացյալները ներշնչվեն ու ջանան վեճերը խաղաղությամբ կարգավորել: Կորնթացիները իրար դեմ դատ էին բացել, իսկ դա վնաս էր հասցնում հավատացյալների վարկին:

Մենք կկարողանանք վեճերը ավելի հեշտ լուծել, եթե արտոնենք, որ Սուրբ Հոգին մեր մեջ դնի զսպվածություն, ազնվություն ու համբերատարություն: Երբ Տեր Հիսուսը վերադառնա ու ամբողջացնի Հոգու գործը մեր կյանքում (Ա. Հովհ. 3.2-3), մենք պատրաստ կլինենք մեր դերին՝ որպես «թագավորներ ու քահանաներ և երկրի վրա թագավորություն կանենք»: (Հայտն. 5.10)

**Աղոթք** - Ամենակարող Աստված, շնորհակալ եմ Քեզ հետ իմ ունենալիք սքանչելի ապագայի համար: Օգնի՛ր, որ Քեզ նայեմ, երբ դժվար լինի ուրիշների հետ գործակցելը: Ամեն:

**Երբ վեճի բռնվես, աղոթի՛ր, որ Հոգին քեզ հեշ լինի, որդեսզի կարողանաս ծիճս բաներ ասել:**

Ինձ օգնություն պիտի գա Տիրոջից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը: (Մաղմ. 120.2)

### **ՀԱՅԱՅՔԴ ՎԵՐԵՎ ԲԱՐՁՐԱՑՐՈՒ**

**Ա**մպերը պատել էին երկինքը, ծածկել հորիզոնը և նույնիսկ մարդկանց տեսադաշտը: Կեսօրին, սակայն, ամպերն սկսեցին նոսրանալ, բաժանվել իրարից, և ես տեսա գեղատեսիլ Փայքս պիկ լեռան գագաթը, որն իմ բնակավայրի ամենահատկանշական ուղենիշն է: Դեմքիս ժպիտ հայտնվեց, ու ես այն դիտարկեցի որպես մի հեռանկար, մեր տեսության տառացի արտահայտությունը, որն ազդում է հոգևոր տեսիլքի վրա: Եվ հիշեցի սաղմոսերգուհի երգը.«Աչքերս դեպի լեռները բարձրացրի, որտեղից ինձ օգնություն պիտի գա» (Հմ.120.1): Երբեմն մենք ուղղակի կարիք ունենք հայացքը վերև բարձրացնելու:

Սաղմոսերգուն խորհում էր, թե որտեղից եկավ օգնությունը, քանի որ Իսրայելի շուրջ գտնվող լեռների բարձունքներին հեթանոսական աստվածների մեհյաններ էին դրված: Բացի դրանից՝ նաև գողեր շատ կային: Սակայն հնարավոր է նաև, որ սաղմոսերգուն նայել էր վերև՝ Սիոնի գագաթից այն կողմ, որտեղ տաճարներ կային, և հիշել էր, որ երկինքն ու երկիրն ստեղծողը ուխտավորի Աստվածն է (Հմ.2): Բոլոր դեպքերում Աստծուն դիմելու համար հարկավոր է վերև նայել: Մեր հայացքը պետք է կտրենք առօրյա զժվարություններից, փորձություններից ու նայենք սուտ աստվածների պարապ խոստումներից ավելի վերև: Մենք պետք է կարողանանք տեսնել Արարչին ու Փրկչին, Նրան, ով մեզ անունով է կանչում: Նա է, որ «հսկում է քո մուտքն ու ելքը» (Հմ.8):

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ Դու ես Արարիչն ու Պահապանը: Նա, որ ստեղծեց երկինքն ու երկիրը և հսկում է ինձ: Օգնի՛ր, որ կարողանամ հայացքս վերև բարձրացնել՝ Քեզ տեսնելու և վստահելու համար: Ամեն:

**Նեղություններ ու դժվարություններ մի՞տ էլ կլինեն: Հայացքներս հառնեմ Ասծուն, որը մեր փրկությունն է ու դաշտադաշտը:**

Եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ: (Բ. Կորնթ. 5.17)

### **ԿՈՏՐԵԼ ԿՐԿՆՎՈՂ ՇՐՋԱՆԸ**

**Դ**եյվիդը առաջին անգամ ծեծ կերավ հորից՝ իր յոթնամյա- կի օրը, երբ պատահաբար ջարդեց պատուհանը: «Նա ոտքով ու բռունցքով հարվածեց, հետո ներողություն խնդրեց, - հիշում է Դեյվիդը: Նրա հայրը հարբեցող է եղել, և ինքն էլ որոշ ժամանակ շարունակել է հոր ուղին, սակայն հիմա ամեն ինչ անում է, որ ձերբազատվի այդ արատավոր սովորությունից: Դա այնքան էլ հեշտ չի եղել: Դեյվիդի պատանեկությունն ու երիտասարդությունն անցել են բանտում կամ հիվանդանոցներում: Զգալով, որ իր բոլոր երազները խորտակվում են, Դեյվիդը մոլորություններից ազատվելու հույսը գտել է Քրիստոսակենտրոն մի բուժաստատությունում՝ Հիսուսի հետ հարաբերվելու միջոցով: «Նախկինում ես միշտ հուսահատ էի, իսկ հիմա ջանում եմ ինքս ինձ մյուս կողմ հրել: Ամեն առավոտ արթնանալով Աստծուն ասում եմ, որ իմ կամքն իր կամքին եմ հանձնում», - պատմում է Դեյվիդը:

Երբ ուրիշների կամ մեր գործած մեղքերի պատճառով դառնում ենք Աստծուն, Նա մեր կոտրված սրտերը վերցնում և մեզ նոր արարածներ է դարձնում: «Եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ. Կորնթ. 5.17): Քրիստոսի սերն ու կյանքը կտրում է մեր անցյալի շրջանը՝ տալով մեզ մի նոր ապագա (Հմ.14-15): Ու դա անվերջ է: Մեր ամբողջ կյանքի ընթացքում մենք հույս ու գործություն ենք գտնում Աստծո արած բաների մեջ, որ շարունակվում են ամեն վայրկյան:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմ, որ բեկում ես կյանքիս՝ ցած սուրացող ընթացքը և ինձ նորովի ես ստեղծում: Ինձ դարձրու՛ Քեզ գնամ: Ամեն:

**Երբ մտածես, որ կյանքդ հուսահատությունների ցարան է, վստահի՛ր Աստծուն: Նա քեզ ու քո կյանքը կնորոգի:**

Այդ օրը Մովսեսը գրեց այս օրհներգությունը և այն սովորեցրեց իսրայելացիներին: (Բ.Օր. 31.22)

### **Ո՞ՐՆ Է ՔՈ ԵՐՈՎ**

**Ա**մերիկացիներից շատերը չգիտեին Ալեքսանդր Համիլտոնի մասին մինչև 2015թ., երբ Լին Մանուել-Միրանդան գրեց իր նշանավոր երաժշտական համանուն ներկայացումը: Ներկայիս դպրոցականները Համիլտոնի պատմությունը լավ գիտեն: Նրանք պասին ու զբոսանքի ժամին միասին երգում են: Նա իրենց նախասիրած երաժշտության հիմնադիր հայրն է:

Աստված գիտի երաժշտության զորությունը: Նա Մովսեսին ասաց. «Ուրեմն գրեցե՛ք օրհներգության այս խոսքերը, դրանք սովորեցրե՛ք իսրայելացիներին, դրանք դրե՛ք նրանց բերանը» (Բ. Օր. 31.19): Աստված գիտեր, որ Մովսեսի մեկնելուց հետո, երբ Իսրայելի ժողովրդին խոստացյալ երկիրը տանի, նրանք պիտի ապստամբեն և օտար աստվածների պաշտեն: Ուստի ասաց Մովսեսին. «Այդ օրհներգությունն իբրև վկայություն նրանց դեմ պիտի ելնի, նրանք ու նրանց հետնորդները պիտի չմոռանան դա» (Հմ.21): Ընդհանրապես դժվար է մոռանալ երգերը, հետևաբար պետք է լավ ընտրել դրանք և իմանալ, թե ինչ երգ ենք երգում: Մի շարք երգեր ուղղակի զվարճության համար են, և լավ է նման երգեր ունենալը: Բայց օգտակար են այն երգերը, որոնք Հիսուսին են փառաբանում և մեր հավատքն են զորացնում: Լավագույն բանը, որ կարող ենք անել, «սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով իրար հետ խոսելն է»: Հետևաբար, «ձեր սրտերում Տիրո՛ջը երգեցեք ու սաղմոս ասացեք»(Եփ. 5.15-19): Արդյո՞ք մեր երգերի բառերը Հիսուսի մասին են խոսում: Դրանք ամբողջ սրտո՞վ ենք երգում: Մեր երգածը պիտի ազդի մեր հավատացածին: Հետևաբար, իմաստությունամբ ընտրենք մեր երգերը և որպես փառաբանություն՝ բարձրաձայն երգենք:

**Աղոթք** - Հայր, այս երգը իմ աղոթքն է ուղղված քեզ: Ամեն: (Երգել քո նախասիրած երգը)

### **Փառաբանական երգեր երգի՛ր ու Տիրոջը փառաբանի՛ր:**



Զեռքդ կմեկնես, և քո աջը կփրկի ինձ: (Սաղմ. 137.7 )

## **ՄԵՐ ԿԱՐԵԿԻՑ ԱՍՏՎԱԾԸ**

**Չ**մռան մի գիշեր Մոնտանայի Բիլլինգս քաղաքում մեկը մի հրեա երեխայի ննջարանի պատուհանին քար նետեց այն պատճառով, որ դրա վրա պատկերված էին Դավթի աստղի ու յոթգլխանի հրեական Հանուզգայի՝ լույսերի տոնի թեմատիկայով մոմակալներ: Հազարավոր մարդիկ, որոնց մեծամասնությունը Հիսուսին հավատացողներ էին, այդ դեպքից հետո, որպես կարեկցանքի ու աջակցության արտահայտություն, իրենց պատուհանների վրա նույնպես փակցրին հրեական մոմակալի պատկերներ:

Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք էլ ենք կարեկցություն արժանանում: Մեր Փրկիչը իր անձը խոնարհեցրեց՝ մեր մեջ բնակվելով (Հովհ. 1.14) ու ...նույնացավ մեզ հետ: «Աստծու բնությունն ունենալով ... իր անձն ունայնացրեց և ծառայի կերպարանք առավ» (Փիլ. 2.6-7): Հետո մեզ նման զգալով ու լալով՝ Նա մեռավ խաչի վրա և իր կյանքը զոհեց մեզ փրկելու համար:

Մեր յուրաքանչյուր պայքարը մեր Փրկչի համար մտահոգություն է: Եթե մեկը «քարեր է նետում» մեր կյանքին, Նա մեզ մխիթարում է: Եթե կյանքը մեզ հուսախաբ է անում, Նա քայլում է մեզ հետ՝ մեր նեղության ու ցավի մեջ: Թեև «բարձր է Տերը, նա տեսնում է խոնարհներին, իսկ բարձրամիտներին հեռվից ճանաչում» (Սաղմ. 137. 6): Մեր նեղությունների մեջ փրկում է մեզ, «մեկնում է ձեռքը թե՛ թշնամու զայրույթի (հմ.7), և թե՛ մեր խորը վախերի պահերին:

Տե՛ր, շնորհակալ եմ Գո կարեկցության համար:

**Աղոթք** - Ո՛վ Աստված, շնորհակալ եմ, որ հասկանում ես ու գիտես իմ դիմագրաված դժվարությունները և մխիթարում ես ինձ սիրով ու կարեկցությամբ: Հիշեցրո՛ւ ինձ, որ Քո կարեկցությունը կիսեմ ուրիշների հետ: Ամեն:

**Ցավե՛ր, նեղություններ ու սազնադներ կունենանք, հարկավոր է վստահ լինել, որ Աստված իր սիրո կարեկցությամբ մեզ հե՛տ է:**

Հիսուսը նրան ասաց. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը. (Յոսփ. 14.6)

## **ԲՈՒՈՐ ԾԱՆԱՊԱՐՅՆԵՐԸ**

**Պ**ատրաստվում էի աշխատանքից տուն վերադառնալ, երբ դուստրս գրեց, որ արագընթաց ճանապարհով չգնամ: Ըստ երևույթին խցանում էր այդտեղ: Ես սկսեցի այլ ուղիներով գնալ, բայց ամենուր նույն վիճակն էր: Հասկանալով, որ տունդարձս ուշ է լինելու, որոշեցի հակառակ ուղղությամբ գնալ և ներկա լինել թոռնուհուս մարզական միջոցառմանը:

Այդ օրվա փորձառությունից հետո սկսեցի մտածել այն մարդկանց մասին, որոնք ասում են, թե բոլոր ճանապարհներն առաջնորդում են դեպի Աստծո հետ հավիտենական փոխհարաբերություն: Ոմանք հավատում են, թե կարելի է այնտեղ հասնել բարությունամբ ու բարի վարմունքով, ուրիշներն ընտրում են կրոնական գործեր անելու ճանապարհը:

Բայց միայն դրանց ապավինելը կարող է տանել փակուղի, որովհետև դեպի Աստծո հավիտենական ներկայությունն առաջնորդող միայն մեկ ճանապարհ կա: Հիսուսն այդ մեկը հստակեցրեց, երբ ասաց.«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը. ոչ ոք Հոր մոտ չի գալիս, եթե ոչ ինձանով» (Հովհ. 14.6) : Նա հայտնում էր, որ Ինքը պիտի մեռներ մեզ համար ճանապարհ բացելու նպատակով, որպեսզի մենք կարողանանք Իր Հոր տուն մտնել՝ Իր ներկայության ու այն իսկական կյանքի համար, որ տալիս է Ինքը այսօր և հավիտյան:

Անտեսի՛ր բոլոր այն արգելափակված մայրուղիները, որոնք չեն առաջնորդում դեպի Աստծո ներկայություն, փոխարենը վստահի՛ր Տեր Հիսուսին՝ որպես Փրկիչ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, ուզում եմ միայն Քեզ վստահել հավիտենականության համար: Շնորհակալ եմ Հիսուսի մեջ եղած փրկության համար: Ամեն:

**Միայն Հիսուսով կարելի է փրկվել և մոտենալ Ասծուն: Ուսի , որդես մեր փրկության միակ միջոց, ընժեմք Իրեն:**

Երբ այլազգին նայեց ու տեսավ Դավթին, արհամարհեց նրան, քանզի նա խարտոյաչ ու գեղեցիկ աչքերով մի պատանյակ էր: (Ա. Թագ. 17.42)

## **ՀՁՈՐԸ**

**Ս**եյբին վաղաժամ էր ծնվել՝ 23 շաբաթական, ընդամենը 250 գրամ քաշով: Բժիշկները, կասկածելով, որ նա կապրի, ծնողներին ասել էին, որ ընդամենը մեկ ժամ ունեն իրենց աղջնակի հետ անցկացնելու: Սակայն Սեյբին պայքարում էր: Նրա անկողնու վրա դրված վարդագույն քարտի վրա գրված էր. «Փոքր, բայց հզոր»: Հինգ ամիս հիվանդանոցում մնալուց հետո 2,5 կգ քաշով առողջ մանուկը տուն գնաց: Նա գրանցվեց որպես աշխարհի ամենափոքր վերապրած մանուկը:

Հետաքրքիր է լսել այսպիսի պատմություններ, երբ մարդիկ հաղթահարում են անհնարին թվացող բաներ: Աստվածաշունչը նույնպես այդպիսի մի պատմություն ունի: Պատանի հովիվ Դավիթը ներկայանում է որպես կամավոր՝ կռվելու հզոր Գողիաթի հետ, որն արհամարհեց Աստծուն ու սպառնաց Իսրայելին: Սավուղ թագավորը մտածելով, որ Դավիթ քայլը անլուրջ է, ասաց. «Գուցե չկարողանաս գնալ կռվել այլազգու դեմ, քանզի պատանի ես, իսկ նա մանկությունից ի վեր պատերազմող մարդ է եղել» (Ա.Թագ. 17.33): Երբ պատանի Դավիթը եկավ պատերազմի դաշտ, «Գողիաթը արհամարհեց նրան, քանզի նա խարտոյաչ ու գեղեցիկ աչքերով մի պատանյակ էր (հմ.42): Սակայն Դավիթն այդ պատերազմում մենակ չէր: Նա եկել էր «Իսրայելի զորքի զորույթյունների Տիրոջ անունով» (հմ.45): Ու մինչև երեկո հաղթական Դավիթը սպանեց Գողիաթին:

Հոգ չէ, թե որքան մեծ է մեր հարցը: Երբ Աստված մեզ հետ է, մենք որևէ բանից չպետք է վախենանք: Իր զորությունամբ մենք էլ ենք հզորանում:

**Աղոթք** - Հայր, շատ փոքր ու միայնակ եմ զգում այսօր և ոչ մի ճանապարհ չեմ տեսնում: Բայց վստահում եմ, որ ինձ հետ ես լինելու և առաջնորդելու ես ինձ: Վստահում եմ Քո զորությանը: Ամեն:

**Հաճախ եմ սկար ու անգոր զգում: Սակայն վստահ լինեմ, որ Աստված մեզ հետ է և մեզ զորություն է տալիս:**

Ահա երկնքում մի գահ կար, և գահի վրա՝ մեկը նստած: (Հայտն. 4.2)

## **ՈՉ ԱՅՆՔԱՆ ՍՔԱՆՉԵԼԻ ՕՉԻ ԿԱԽԱՐԴԸ**

«Օզի սքանչելի կախարդը» հեքիաթում Դորոտին, խրտվիչակը, թիթեղյա մարդն ու վախկոտ առյուծը Օզ են վերադառնում այն ավելափայտով, որը զորությունն էր տվել Արևմուտքի կախարդին: Կախարդը ավելի փոխարեն խոստացել էր կատարել չորսի ցանկությունները. տունդարձ՝ Դորոտիին, ուղեղ՝ խրտվիչակին, սիրտ՝ թիթեղյա մարդուն և քաջություն՝ վախկոտ առյուծին: Սակայն հետաձգում է խոստումը կատարել՝ նրանց ասելով, որ մեկ օր անց գան:

Մինչ նրանք թախանձում էին կախարդին չհետաձգել իրենց ցանկությունների կատարումը, Դորոտիի շունը ետ է քաշում վարագույրը, և նրանք տեսնում են, որ դա կախարդ չէ, այլ մի վախկոտ ու անհանգիստ նեբրասկացի: Ասում են, որ հեքիաթի հեղինակը՝ Լ.Ֆրենկ Բաումը լուրջ հարց է ունեցել Աստծո հետ, դրա համար է տվել այդ պատգամը, թե միայն մե՛նք ունենք մեր հարցերը լուծելու զորություն:

Ի հակադրություն սրա՝ Հովհաննես առաքյալն է քողազերծում՝ հայտնելու համար «վարագույրի» ետևում եղող իրական Աքանչելիին: Նա նկարագրում է գահի վրա նստած Աստծուն, որը հասպիս ու սարդիոն քարի երևույթն ունեք, գահի շուրջը ծիածան կար՝ զմրուխտի նման (Հայտն. 4.2,6): Հակառակ այն բանի, որ այս աշխարհում նեղությունները մեզ հարվածում են (գլ. 2-3), Աստված անհոգ ու անտարբեր չէ, այլ ընդհակառակը՝ աշխատում է մեր բարիքի համար, որպեսզի մենք վայելենք Իր խաղաղությունը:

**Աղոթք** - Հայր, երախտապարտ եմ, որ կարող եմ վստահել Քեզ, որ ինձ հետ քայլես ամեն բանում: Շնորհակալ եմ Քո տված խաղաղության համար: Ամեն:

**Վախեր ու կասկածներ ունեն՛ք, սակայն Աստված խոստացել է մի՛տս մեզ հետ ու մեր կողմն լինել:**

Դրա համար իրար ընդունեցե՞ք, ինչպես որ Քրիստոսն էլ մեզ ընդունեց Աստուծու փառքի համար: (Յոհն. 15.7)

### **ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՎԱՆԴ**

«Քանզեք պատերը» խորագրով գրքում Գլեն Կեհրինը պատմում է այն մասին, թե ինչպես քաղաքացիական իրավունքների ջատագով Մարտին Լյութերի սպանությունից հետո իր կյանքը լիովին փոխվել է: «Ինչպե՞ս եղավ, որ ես երկու տարվա բացակայությունից հետո, թողնելով վիսկոնսինյան հանգիստը, եկա Չիկագոյի պատերազմական այս շրջան»: Հիսուսի ու մարդկանց հանդեպ իր սիրուց մղված՝ Գլենը բնակվեց Չիկագոյի արևմտյան շրջանում և սկսեց մի առաքելություն կատարել. մինչև իր մահը ուտելիք, հագուստ, ապաստան և այլ ծառայություններ էր հայթայթում կարիքավորների համար:

Գլենի կյանքը արտացոլում է Հիսուսին հավատացողների ջանքերը, որոնք կարևորում են այլոց կարիքները:

Պողոսի ուսուցումն ու օրինակը օգնեցին Հռոմի եկեղեցու հավատացյալներին՝ տեսնելու, որ մարդկանց փրկելու Աստծո ծրագիրը ներառում էր հրեաներին ու հեթանոսներին (Հռոմ. 15.8-12): Հավատացյալները կոչ ունեն՝ հետևելու, ուրիշներին ընդունելու, Իր օրինակին հետևելու (Հմ.7), նախատրամադրվածություն ու գժտություն չի լինելու նրանց մեջ, ովքեր Աստծուն փառավորելու կոչումն ունեն «միաբան ու միաբերան» (Հմ.6):

Խնդրի՛ր Աստծուց, որ օգնի քեզ, որպեսզի կարողանաս անցնել բոլոր արգելքները, քանզե՛լ բոլոր պատերը և ջերմորեն ողջունես ամենքին՝ հակառակ եղած տարբերություններին: Եկե՛ք ձգտենք ապրել ուրիշներին ընդունելու ժառանգությունը:

**Աղոթք** - Երկնքում եղող Հայր, օգնիր՝ կարողանամ Քեզ ներկայացնել և ճշտումներ կատարել մտածելակերպիս ու գործողություններիս մեջ, երբ ձգտում եմ սիրել ուրիշներին: Ամեն:

**Մեր Երջադասի մարդիկ, բնականաբար, մեզանից արքեր կարող են լինել, բայց Տեր Հիսուսի կոչի համաձայն՝ դասրաս լինենք ընդունել իրար:**

Գոգու՛մ է ճշմարտութեան մասին և ապահովում խաղաղությունը: (Ես. 26.3)

## ԱՆԽՈՐՏԱԿԵԼԻ ՀԱՎԱՏՔ

**Ի**րենց անդրանիկ զավակի առևտրից՝ հիվանդությունն ախտորոշումը Դայանա Քիմին ու իր ամուսնուն չափազանց տրամեցրեց: «Անխորտակելի հավատք» խորագրով իր գրքում Դայանան ընդունում է, որ ամեն ինչ արել են որդու ապագայի համար իրենց երազներն ու ակնկալիքները ճշտելու նպատակով: Բայց այդ ցավալի ընթացքի մեջ նրանք նաև սովորել են, որ Աստված կարող է օգտագործել իրենց բարկությունը, կասկածներն ու վախերը: Հիմա, մինչև որդու չափահաս դառնալը, մայրն իր փորձառությունն օգտագործում է հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողներին քաջալերելու համար, պատմում է Աստծո խոստումների, անսահման զորություն, սիրո ու հավատարմության մասին:

Եսայու մարգարեություն 26-ում հայտարարվում է, թե Աստծո ժողովուրդը կարող է «հույսով ապավինել քեզ հավիտենապես, ո՛վ Տեր» ( Հմ.4), «Տե՛ր Աստված մեր, տո՛ւր մեզ խաղաղություն, դու, որ ամեն ինչով վարձատրել ես մեզ» ( Հմ.12) : Կենտրոնանալով Նրա անփոփոխ նկարագրի վրա՝ աղերսում է Նրան նեղությունների ու ցավերի ժամանակ նորոգել մեր հույսը (Հմ.15):

Երբ որևէ կորուստ, հուսախաբություն կամ դժվարություն ենք ունենում, Աստված մեզ հրավիրում է Իր հետ անկեղծ լինելու: Նա մնում է մեզ հետ և մեր հոգին նորոգում է մնայուն հույսով:

**Աղոթք** - Սիրո Աստված, խնդրում ենք՝ օգնիր հավատալ, որ կարելի է միշտ Քեզ վստահել՝ ինչ վիճակում էլ լինենք: Ամեն:

**Ցավ, նեղություն, կորուստ ու վիճակունեանք, բայց Աստված կարող է մեր հավասքը անխորտակելի դարձնել:**

Որքա՞ն մեծ են գործերը քո, Տե՛ր: ( Սաղմ. 103.24 )

## **ԱՍԾՈՆ ՈՏՆԱՅԵՏՔԵՐԸ**

**Մ**եր չորս տարեկան թոռնիկը մի օր տիկնոջս ասել է.«ես գիտեմ՝ Աստված որտեղ է բնակվում: Ձեր տան մոտակա անտառում»: Պատմելով ինձ այս խոսակցությունից մասին՝ կինս հարցրեց, թե ի՞նչը կարող է լինել այդպես մտածելու պատճառը: Ինձ համար պարզ էր: Իր վերջին այցելությունից ժամանակ, երբ միասին քայլում էինք անտառում, ես թոռնիկիս ասացի, որ թեև մենք Աստծոն չենք տեսնում, բայց նրա արած բոլոր բաները կարող ենք տեսնել: Իսկ երբ քայլում էինք գետի ավազոտ ափին, ես նրա ուշադրությունը հրավիրել էի իմ ոտնահետքերի վրա և բացատրել, որ կենդանիները, ծառերն ու գետը Աստծո ոտնահետքերն են: Գիտենք, որ Նա այստեղ եղել է, որովհետև տեսնում ենք Նրա ստեղծած բաները:

Սաղմոսերգուն էլ մատնանշում է ստեղծագործ Աստծու ապացույցները՝ բացականչելով. «Որքա՞ն մեծ են գործերը քո, Տե՛ր, ամեն ինչ իմաստությունք ստեղծեցիր դու, և աշխարհը լցվեց քո ստեղծածներով» (Սաղմ. 103.24 )։ Բնություն մեջ եղած Աստծո ձեռագործը հայտարարում է Իր ներկայությունը և մեզ մղում Իրեն պաշտելու:

103-րդ սաղմոսը սկսվում և ավարտվում է այս բառերով.«Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ» (Հմ.1.35): Ստեղծագործի՝ մեր շուրջը եղող նկարչությունը, մանկան ձեռքից սկսած մինչև արծվի աչքերը, խոսում է Իր մեծ հմտություն մասին: Թող որ Իր բոլոր արածներն ընդունենք մեծ հիացումով և փառավորենք Իրեն:

**Աղոթք** - Ո՛վ Աստված, փառաբանում եմ քեզ քո բոլոր արածների համար: Օգնի՛ր, որ կարողանամ մեծ հիացումով ապրել քո իմաստության ու բարության համար: Ամեն:

**Նայի՛ր շուրջդ և շեսնելով Նրա ձեռքի գործերը՝ աշխատի՛ր ցույց տալ ուրիշներին:**

Ի՛նձ հետևիր : (Մատթ.19.21)

## ՓՈՔՐ ՉԿՆԵՐ

**Ա**րևմտյան Աֆրիկայում բնակվող մի զույգ արդեն քանի տարի բարեկամություն էր հաստատել իրենց շրջանից մի մարդու հետ և նրա հետ կիսում էր Հիսուսի սերն ու Փրկության պատմությունը: Բարեկամը, սակայն, ընդունելով հանդերձ, որ Քրիստոսին հավատալը «ճիշտ է», դժկամություն հայտնեց իր կրոնից հրաժարվելու առաջարկը: Նրա մտավախությունը մասամբ նյութական էր, որովհետև նա իր հավատքի շրջանակում առաջնորդ էր, հետևաբար կախում ուներ իր ստացած նյութական միջոցներից: Նաև վախենում էր կորցնել գաղութում ունեցած հեղինակությունը:

Նա տխուր բացատրեց. «Ես նման եմ մի մարդու, որը ձեռքերով փորձում է գետում ձուկ բռնել: Փոքր մի ձուկ եմ բռնել, բայց մեծը լողում է ջրում: Այդ մեծը բռնելու համար պետք է բաց թողնեմ փոքր ձուկը»:

Հարուստ երիտասարդ իշխանը, որի մասին գրել է Մատթեոսը, նույն խնդրի առաջ էր: Երբ մոտեցավ Հիսուսին, հարցրեց.« Ի՞նչ բարի գործ անեմ, որ հավիտենական կյանքն ունենամ» ( Հմ.16): Նա անկեղծ էր ուզում երևալ, բայց չէր ուզում իր ամբողջ կյանքը Հիսուսին հանձնել:Նա ոչ միայն հարուստ էր, այլև հպարտ էր իր դիրքով: Փափագում էր հավիտենական կյանք ունենալ, սակայն ուրիշ բաներն ավելի սիրեց ու Քրիստոսի խոսքը մերժեց:

Երբ մեր կյանքը խոնարհաբար հանձնենք Հիսուսին և ընդունենք փրկության Իր տված ձրի պարգևը, Նա մեզ կհրավիրի ու կասի. «Ե՛կ, ի՛նձ հետևիր» ( Հմ.21) :

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ Քո որդուն տվիր որպես հատուցում իմ մեղքի: Օգնի՛ր, որ ամբողջովին հանձնվեմ Քեզ: Ամեն:

**Ի՞նչն է խանգարում, որ ամբողջովին հանձնվես Տեր Հիսուսին:**



Եվ նրանք (կանայք ) ... վազում էին նրա աշակերտներին պատմելու: (Մատթ.28.8)

**ՎԱԶԵԼ՝ ՊԱՏՄԵԼՈՒ**

**Մ**եր օրերի մարաթոնյան վազք մրցումը այդպես է կոչվել հույն սուբհանդակ Ֆեյդիպիդեսի պատմության հիման վրա: Ավանդության համաձայն՝ Ք.Ա. 490 թվականին նա Մարաթոնից մինչև Աթենք մոտավորապես 40 կմ վազեց , որպեսզի հայտներ պարսիկների դեմ հույների տարած հաղթանակի ավետիսը: Այսօր մարդիկ մարաթոնի են մասնակցում ուղղակի մարզական հաջողության, իրենց անձնական գոհացման համար: Իսկ Ֆեյդիպիդեսի նպատակն ավելի մեծ էր. նա իր յուրաքանչյուր մետրը վազեց, որ ուրախությանը հասցնեք բարի լուրը:

Դրանից շուրջ 500 տարի հետո երկու կանայք նույնպես վազում էին՝ պատմական առանցքային ավետիսը տալու: Երբ Մարիամն ու Մարիամ Մագթաղենացին հասան գերեզման, որտեղ դրված էր Հիսուսը իր խաչելությունից հետո, այն դատարկ գտան: Հրեշտակը նրանց ասաց, թե Հիսուսը «այստեղ չէ, որովհետև հարություն առավ» (Մատթ. 28.6), «Եվ շուտ գնացե՛ք, նրա աշակերտներին ասացե՛ք» (Հմ.7): Կանայք «վախով ու մեծ ուրախությանը վազում էին նրա աշակերտներին պատմելու» (Հմ.8):

Թող որ մենք էլ նույն հրճվանքն ունենանք Հիսուսի հարությանը և թող այն մեզ եռանդ տա՝ բարի լուրը ուրիշների հետ կիսելու համար: Նա հաղթեց մահվան դեմ պատերազմում, որպեսզի մենք կարողանանք հավիտյան ապրել իր հետ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, ուրախանում եմ մահվան դեմ տարած Քո հաղթանակի համար: Շնորհակալ եմ, որ ինձ հնարավորություն ես տալիս այդ բարի լուրը հայտնելու նրանց, ում դրել ես իմ կյանքում: Ամեն:

**Ինչդեռ որ մեկը Քրիստոսի հարության լուրը բաժնեկցել է քեզ հետ, դու էլ դասրաս եղի՛ր նույնը անել այլոց հետ:**

Ես հոգնեցի իմ հառաչանքներից: (Սաղմ. 6.7)

### **ԽՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵՐԸ**

**Տ**րանսիացի բանաստեղծ ու վիպասան Վիկտոր Հյուգոն 19-րդ դարի հասարակական - քաղաքական ընդվզումների շրջանում առավելապես հայտնի դարձավ իր «Թշվառները» վեպով: Մեկ դար անց այս վեպի հիման վրա ստեղծված երաժշտական ներկայացումը դարձավ սերունդների սիրած ստեղծագործությունը: Եվ դա զարմանալի չէ: Մի առիթով Հյուգոն ասել էր. «Երաժշտությունը ներկայացնում է այն, ինչը չի կարելի ասել և այն, ինչի մասին չի՛ կարելի լուր»:

Սաղմոսերգուները համաձայն կլիներին Հյուգոյի այս մտքին: Նրանց երգերն ու աղոթքները տրամադրում են անկեղծ խորհուրդներ կյանքի ու նրա տված անխուսափելի ցավի մասին: Նրանք դիպչում են մեր կյանքի այնպիսի մասերին, ուր նույնիսկ մեզ համար է դժվար հասնելը: Օրինակ, Սաղմոս 6.7-ում Դավիթն աղերսում է. «Ես հոգնեցի իմ հառաչանքներից, ամեն գիշեր հեծե՞մանքով լվացի մահի՞ճն իմ և իմ արտասուքով անկողինս թրջեցի»: Այն իրողությունը, թե Աստվածաշնչի ներշնչված երգերը անկեղծ են, քաջալերում է մեզ և հրավիրում մեր վախերի մասին պատմելու Աստծուն, որը պատրաստակամ է իր ներկայությունը մխիթարել և օգնել մեզ: Նա մեզ ողջագուրում է սրտագին անկեղծության համար:

Երաժշտությունը հնարավորություն է տալիս մեր զգացմունքներն արտահայտել, երբ դրանց մասին խոսելիս բառեր չենք գտնում: Երգի, աղոթքի կամ լուռ աղերսանքի շնորհիվ Աստված հասնում է մեր սրտերի խորագույն տեղերը և տալիս իր խաղաղությունը:

**Աղոթք** - Սիրող Աստված, շնորհակալ եմ, որ ինձ ընդունում ես իմ բոլոր ցավերով, վախերով ու հուսախաբություններով: Շնորհակալ եմ, որ Դու «շտկված» աղոթքներից գերադասում ես իմ անկեղծ սիրտը: Ամեն:

**Ասծոն մոտենանք, ինչդեռ որ կանք:**

Եվ Պետրոսն սկսեց նրան ասել. «Ահա մենք ամեն ինչ թողեցինք ու քո հետևից եկանք»: (Մարկ. 10.28)

## **ՅԱՆՁՆԵԼ ԱՄԵՆ ԲԱՆ**

**Ե**րկու մարդ, որ հիշատակվում են Հիսուսի անունով ուրիշներին մատուցած ծառայությունների համար, թողեցին արվեստի ասպարեզը, որպեսզի իրենց անձերը նվիրեն այն գործին, որի համար հավատում էին, որ Աստված իրենց կանչել է: Ջեյմս Ֆրեյզերը որոշեց դադարեցնել դաշնակահարի իր կարիերան ու ծառայել Չինաստանում՝ լիզու ժողովրդի մեջ: Երկրորդը ամերիկացի Ջուդաոն Վան Դեվենդերն է, որը, թողնելով արվեստի ասպարեզը, ընտրեց ավետարանչի առաքելությունը: Հետագայում նա գրեց «Ամեն ինչ կտամ» կամ «Ամեն բան կհանձնեմ» հայտնի երգը: Արվեստի բնագավառում գործելը շատերի համար կոչում է, իսկ այս մարդիկ հավատացին, որ Աստված կանչել է իրենց, որպեսզի թողնեն իրենց ասպարեզը և ընտրեն մեկ այլ ոլորտ: Թերևս նրանք ազդվել են հարուստ պատանուն Հիսուսի տված խորհրդից, որ հրաժարվի իր ունեցածներից և հետևի Իրեն (Մարկ. 10.17-25): Ականատես լինելով նրանց խոսակցությանը՝ Պետրոսը բացականչեց. «Ահա մենք ամեն ինչ թողեցինք ու քո հետևից եկանք» (Հմ.28): Հիսուսը վստահեցրեց, որ Աստված Իրեն հետևողներին տալիս է «հարյուրապատիկը հիմա՝ այս պահին» ու հավիտենական կյանք (Հմ.30): Սակայն Նա կտա Իր իմաստությունների համաձայն. «Որովհետև շատ առաջիններ հետիններ կլինեն, իսկ հետինները՝ առաջիններ» (Հմ.31): Հոգ չէ, թե Աստված մեզ որտեղ է դրել, մենք կոչում ունենք՝ ամեն օր մեր կյանքերը Քրիստոսին հանձնելու, Իրեն հետևելու կոչին հնազանդվելու և մեր տաղանդներով ու հնարավորություններով ծառայելու: Նա մեզ կներշնչի, որ սիրենք ուրիշներին՝ նրանց կարիքները մերից առաջ դնելով:

**Աղոթք** - Տե՛ր, օգնի՛ր, որ այսօր ունեցածս ամեն բանը Քեզ հանձնեմ, երբ Քեզ պատվելու համար ծառայում եմ Քեզ ու իմ շուրջը եղողներին: Ամեն:

**Ասված մեզ էլ է կանչում, որդեսզի վստահությամբ ամեն բան Իրեն հանձնենք:**

Ձորացա, քանզի Տիրոջ ձեռքն ինձ վրա էր, հավաքեցի Իսրայելի բոլոր իշխաններին ինձ հետ գերությունից վերադառնալու համար: (Եզ. 7.28 )

## **ՕՏԱՎԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ**

Հյուսիսային Կանայի Սուրբ գրոց փոքր քոլեջը տպավորիչ տեսք չուներ. թիթեղյա տանիքով աղքատիկ շենքում սովորողներն էլ շատ չէին: Սակայն Բոբ Հայզն իր ողջ կյանքը նվիրեց այդ աշակերտներին: Տվեց առաջնորդության դասեր ու քաջալերեց, որ նրանք էլ քարոզեն և ուսուցանեն՝ հակառակ իրենց դժկամության: Տարիներ առաջ Բոբը մահացավ, բայց նրա աշխատանքի արդյունքները կան: Կանայում գործում են բազմաթիվ եկեղեցիներ, դպրոցներ և Սուրբ Գրոց երկու հաստատություն, որոնք ծնվել են նրա դպրոցի շրջանավարտների ջանքերով: Արտաշեսի թագավորության օրերին (465-424 Ք.Ա) Եզրաս քահանան հավաքեց մի խումբ հրեա աքսորյալների, որ Երուսաղեմ վերադառնան: Եզրասը ղետացիների որդիներից ոչ մեկին չգտավ նրանց մեջ (Եզ. 8.15): Որպես քահանա ծառայելու համար նա փնտրում էր ղետացիների, ուստի հավաքեց առաջնորդների, «որպեսզի Աստծո տան սպասարկություն անեն» (Հմ.17): Նրանք այդպես էլ արեցին (Հմ.18-20) և Եզրասը նրանց առաջնորդեց ծոմապահության քարոզով ու աղոթք անելով ( Հմ.21): Եզրաս նշանակում է «օգնական»։ Հատկանիշ, որը շատ կարևոր է առաջնորդություն անողի համար: Եզրասի աղոթարար առաջնորդության ներքո ինքն ու իր օգնականները պիտի առաջնորդեին Երուսաղեմի հոգևոր արթնացումը(Եզ.9-10): Նրանց կարիք ունեին միայն մի փոքր քաջալերանքի և իմաստուն ուղղություն ցույց տվողի: Այդպես է գործում Աստծո եկեղեցին: Երբ բարի դաստիարակները քաջալերում են ու պատրաստում, մենք էլ սովորում ենք նույնը անել ուրիշներին: Այդպիսի ազդեցության կարիք կա նաև մեր կյանքից այն կողմ: Աստծո համար հավատարմությամբ եղած գործը երկարում է մինչև հավիտենություն:

**Աղոթք** - Հայր, ցույց տուր մեկին, որին կարող եմ դաստիարակ ու խորհրդատու լինել: Ամեն

**Դաստիարակ ու խորհրդատու ունենալն օգտակար է մեզ ու մեր հոգևոր աճի համար:**

«Օվսաննա՛ Դավթի Որդուն, օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը. օվսաննա՛ բարձունքներում»:( Մատթ. 21.9)

## **ՆԵՐՔԻՆ ԽՆԴԻՐԸ**

**Տ**արիներ առաջ էր, մի օր փայտփորիկը սկսեց թափել մեր տանիքը: Մենք ուշադրություն չդարձրինք՝ մտածելով, որ խնդիրը դրսում է: Հետո օրեր անց ես ու տղաս բարձրացանք վերնահարկ ու տեսանք, որ իրավիճակը մեր կարծածից վատ էր, թռչունը մեր տան ներսում էր:

Երբ Հիսուսը Երուսաղեմ հասավ, ամբոխը հույս ուներ, որ Նա է վերացնելու իրենց արտաքին խնդիրը՝ հռոմեացիների ճնշումը: Նրանք բացականչում էին. «Օվսաննա՛ Դավթի Որդուն, օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը. օվսաննա՛ բարձունքներում» (Մատթ. 21.9): Սա այն պահն էր, երբ սպասում էին Աստծո նշանակած թագավորի գալստյանը: Եթե Աստծո ընտրյալ Ազատարարը պիտի բարեկարգումներ աներ, արդյո՞ք չէր սկսելու նախ դրսում եղած սխալների ուղղումից: Բայց ավետարանների մեծամասնության համաձայն՝ Հիսուսի «հաղթական մուտքի» զրվագը շարունակվում է փող փոխողների սեղանների տապալումով ու աղավնի ծախողների աթոռները տաճարից դուրս նետելու գործողությունից (Հմ.12-13): Նա իր Հոր տունը մաքրում էր՝ սկսելով ներսից:

Այդպես կլինի, եթե Հիսուսին ընդունենք իբրև թագավոր: Նա գալիս է ամեն բան շտկելու: Նա մեզ ստիպում է, որ չարը հաղթահարենք ներսից: Ավանակի վրա նստած Հիսուսը նման է այն ռազմիկին, որ տրոյական ձիու մեջ է: Ձին խաղաղության խորհրդանիշ էր, բայց նրա գերագույն նպատակը անվերապահ հանձնումն էր: Մեր թագավոր Հիսուսը մեզանից պահանջում է նույնը:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, Դու ես ճշմարիտ թագավորը: Ների՛ր մեզ, երբ փորձում ենք աշխարհում եղած խնդիրները լուծել՝ առանց մեր սրտում եղած մեղքերը տեսնելու: Տու՛յց տուր մեզ, թե ինչպես կարելի է մեր ներսի մեղքերը մաքրել: Ամեն:

**Տեր Հիսուսը միակ ծամարիս թագավորն է, արժե՛ Նրան հանձնվել:**

Ուրեմն եթե Որդին ձեզ ազատի, հիրավի ազատ կլինեք: (Ռոմի. 8.36)

## ԵՐԿԱՐ ՄՊԱՍՎԱԾ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

**Ք**սան տարի անցավ, մինչև որ անգլիացի թղթակից Ջոն Մըքքարթին, որը Լիբանանի պատերազմի ժամանակ հինգ տարի գերված էր եղել, հանդիպեց իր ազատ արձակման համար բանակցություններ վարած մարդուն: Երբ նա վերջապես տեսավ ՄԱԿ-ի պատվիրակ Ջիանդոմենիկո Պիկոյին, պարզապես ասաց. «Շնորհակալ եմ իմ ազատության համար»: Նրա սրտագին խոսքերը խորիմաստ էին, որովհետև Պիկոն Մըքքարթին և ուրիշներին ազատելու համար իր կյանքն էր վտանգել:

Որպես հավատացյալներ՝ մենք լավ ենք հասկանում, թե ինչ է նշանակում մեծ դժվարությունը ձեռք բերված ազատությունը: Հիսուսն իր կյանքը տվեց, մեռավ հոռմեական խաչի վրա՝ ապահովելով ամբողջ մարդկության հոգևոր ազատությունը: Հիմա՝ որպես իր զավակները, մենք գիտենք՝ ինչպես Պողոսը քաջաբար վկայեց, թե «ազատությանը Քրիստոսը մեզ ազատեց» (Գաղ. 5.1):

Հովհաննու Ավետարանը նույնպես Քրիստոսով եղած ազատության մասին է սովորեցնում՝ ասելով. «Եթե Որդին ձեզ ազատի, հիրավի ազատ կլինեք» (Հովհ. 8.36): Իսկ ի՞նչ ազատության մասին է խոսքը: Հիսուսով ազատությունը նշանակում է ազատ լինել ոչ միայն մեղքից ու դրա ազդեցությունից, այլև հանցանքից, ամոթից, սատանայի ստերից, սուտ վարդապետությունից ու հավիտենական մահից: Մենք պատանդներ չենք, ազատ ենք սեր ցուցաբերելու մեր թշնամիների հանդեպ, ազնվությանը քայլելու, հույսով ապրելու և մեր դրացուն սիրելու: Սուրբ Հոգով առաջնորդվելով՝ կկարողանանք ներել, ինչպես մենք ենք ներված:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ ազատությանս, հոգևոր մահից ինձ ազատելու և ուրիշներին սիրելու կոչիդ համար: Ամեն:

**Չոգևոր կազկանդումներ ու շղթաներ մի՛ս էլ կարող ենք ունենալ: Ասված այդ բոլորից մեզ կարող է ազատել, եթե արժանենք:**

Թող հորդի իրավունքը ինչպես ջուր, և արդարությունը՝ ինչպես անհուն հեղեղ: (Ամ. 5.24)

## **ՀՅՈՐ ԳԵՏԸ**

**Ա**յցելել էի Վաշինգտոնի ազգային թանգարանի աֆրո-ամերիկյան պատմություն և մշակույթի բաժին, որտեղ ցուցադրված արվեստի գործերը ներկայացնում են դաժան ստրկության և դրան հետևած օրերի իրականությունը: Իրանք տեսնելուց հետո Մտորումների սրահում հայտնվելը իսկական փրկություն էր. այստեղ կիսաթափանցիկ ապակե պատեր են, իսկ առաստաղից անձրևի նման ջուրը թափվում է ավազանի մեջ:

Նստել էի այդ խաղաղ սրահում, և նկատեցի, որ պատի վրա արձանագրված է Մարտին Լյութերի խոսքից մի մեջբերում. «Մենք որոշել ենք գործել ու պայքարել՝ մինչև արդարությունը թափվի անձրևի, իսկ արդարությունը՝ հզոր ու մշտահոս գետի նման»: Այս խոսքերը վերցված են Հին Կտակարանի Ամոսի մարգարեությունից: Ամոս մարգարեն բնակվում էր մի ժողովրդի մեջ, որի կրոնական գործունեությունը սահմանափակվում էր տոնակատարություններ կազմակերպելով ու զոհեր մատուցելով: Բայց մարդկանց սրտերը հեռու էին Աստծուց (Ամ. 5.21-23): Աստված մերժեց նրանց գործերը, որովհետև նրանք կարոտյալին ու զրկվածին արդարություն անելու Իր պատվիրանից հեռացել էին: Ամոսը գրեց, որ փոխանակ կրոնական արարողությունների, որոնք չեն պարունակում սեր Աստծո և ուրիշների հանդեպ, Աստված փափագում է, որ Իր ժողովուրդը մտահոգվի բոլոր մարդկանց բարիքի համար, այսինքն՝ զորավոր գետի նման կյանք բերի այնտեղ, որտեղով կհոսի:

Հիսուսը նույն ճշմարտությունն էր սովորեցնում՝ ասելով, թե Աստծուն սիրելը կապված է մեր ընկերոջը սիրելու հետ (Մատթ. 22.37-39):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ սերդ նման է մարդկանց արդարություն բերող հզոր գետի: Օգնի՛ր ինձ, որ Քո հզոր բժշկող գործուն միանամ Քեզ: Ամեն:

**Թող մեր սերը ուրիշների հանդեպ հոսի հզոր գետի տես և ողորկ մարդկանց սրտերը:**

Վեց օր կաշխատես և կկատարես քո բոլոր գործերը, իսկ յոթերորդ օրը քո Տեր Աստծու շաբաթ օրն է: (Բ. Օր. 5.13-14)

**ՇՆՉԱՄՊԱՌ ՉԼԻՆԵՆՔ**

**Մ**եզ մոտ տան վերանորոգման մի խանութ կա, որի բաժին-ներից մեկում մեծ կանաչ կոճակով ժամանակաչափ է տեղադրված: Սպասարկողին կանչելու համար այցելուն սեղմում է կոճակը: Եթե մեկ րոպեի ընթացքում նա չմոտենա, գնորդը իր գնումների համար զեղչ է ստանում:

Այս պարագայում գնորդ լինելը հաճելի է, որովհետև սպասարկումը արագ է կատարվում: Հակառակ դեպքում այդ պահանջը ավելորդ կարող է թվալ: Մեզանից շատերն են զգում գործերն արագ կատարելու անհրաժեշտություն: Վերոհիշյալ խանութի հաճախորդի ծառայություն մարտավարությունը թափանցել է բոլորիս կյանք՝ ստեղծելով այսպես ասած «չտապելու մշակույթ»:

Երբ Աստված իսրայելցիներին պատվիրեց, որ շաբաթը սուրբ պահեն, ավելացրեց շատ կարևոր մի պատճառ. «Հիշի՛ր, որ դու ստրուկ էիր Եգիպտացիների երկրում» (Բ.Օր. 5.15): Փարավոնի սահմանած ավելորդ կաշկանդումներով նրանք պարտադրված էին անդադար աշխատել (Ել. 5.6-9): Իսկ այժմ նրանք շաբաթվա մեկ օրը տրամադրելու էին, որ իրենք ու իրենց ծառայողները հանգստանան (Բ. Օր. 5.14): Աստծո օրենքի ներքո պետք է լինել տխուր դեմքով ու շնչասպառ ժողովուրդ:

Որքա՞ն հաճախ ես դու աշխատում սպառվելու աստիճան կամ անհանգստանում ես, երբ մարդիկ քեզ սպասեցնում են: Եկե՛ք ինքներս մեզ և միմյանց դադարի ժամանակ տանք: Շտապելու մշակույթը փարավոնի գործն է, ոչ թե Աստծո:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ, որ ինձ պատվիրում ես հանգստանալ, որպեսզի կարողանամ լիարժեք լինել: Ամեն:

**Պե՛տք եղածից ավելին աճիասելու մղում կունենանք, բայց փորձենք հանգստի դաս գտնել, նաև համբերությամբ սղասենք ուժացողներին:**



Եթե ես Աստծու մարդ եմ, թող երկնքից կրակ իջնի: (Դ.Թագ. 1.10)

### **ՔԱԶՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱՆՔ**

**Ե**նդրյուն ապրում է մի երկրում, որտեղ Ավետարանի քարոզն ընդունված չէ: Երբ նրան հարցրի, թե ինչպես է կարողանում գաղտնի պահել իր հավատքը, նա ասաց, որ չի թաքցնում: Ավելին, իր կրծքին փակցնում է իր հաճախած եկեղեցու անունով կրծքանշան, և երբ բռնում են իրեն, ոստիկաններին ասում է, որ իրենք էլ ունեն չհսուսի կարիքը: Էնդրյուն ունի այդ քաջութիյունը, որովհետև գիտե, թե ով է իր կողմում:

Եղիան չվախեցավ, նույնիսկ երբ Իսրայելի թագավորը հիսուսն մարդու ուղարկեց նրան ձերբակալելու (Դ. Թագ. 1.9): Մարգարեն գիտեր, որ Աստված իր հետ է և երկնքից կրակ խնդրեց, որպեսզի նրանց լափի: Թագավորը ևս հիսուսն մարդու ուղարկեց, մարգարեն նույն բանն արեց (Հմ. 12): Թագավորը հաջորդ խումբը ուղարկեց, բայց նրանք լսել էին նախորդ խմբերի մասին, և հիանալիս խնդրեց Եղիային, որ խնայի իր մարդկանց կյանքը: Տիրոջ հրեշտակը Եղիային վստահեցրեց, որ նրանց հետ գնալն ապահով կլինի (Հմ. 13-15):

Հիսուսը չի ուզում, որ մենք երկնքից կրակ խնդրենք՝ թափելու մեր թշնամիների վրա: Երբ աշակերտները հարցրեցին, թե կարո՞ղ են այդ ձևով պատժել սամարացիներին, Հիսուսը հանդիմանեց նրանց (Ղուկ. 9.51-55): Մենք այլ ժամանակում ենք ապրում, բայց Հիսուսը ուզում է, որ մենք էլ ունենանք Եղիայի քաջութիյունը և պատրաստ լինենք բոլորին պատմել Փրկչի մասին, որ իրենց համար մեռավ: Կարող է թվալ, թե մեկը դիմագրավում է հիսուսն մարդու, բայց իրականում այդ հիսուսնի դիմաց դուրս է գալիս Մեկը: Հիսուսը հայթայթում է այն, ինչի կարիքն ունենք, որպեսզի կարողանանք քաջաբար սիրել և ուրիշներին օգնության ձեռք մեկնել:

**Աղոթք** - Սուրբ Հոգի՛, շնորհակալ եմ , որ բնակվում ես իմ մեջ: Լցրու՛ ինձ քաջությամբ, որպեսզի ուրիշներին պատմեմ Հիսուսի մասին: Ամեն:

**Ասված լուրերում է մեզ հարկավոր փառությունը, որդեսգի կարողանանք ուրիշներին դասնել մեր Փրկչի՝ Տեր Հիսուսի մասին:**

Չարից մի՛ հաղթվիր, այլ բարիով՝ հաղթիր չարին: (Հռոմ. 12. 21)

## **ԱՊԱԳԱՆ՝ ՆԵՐՈՒՄՈՎ**

**1** 994թ, երբ Հարավաֆրիկյան Հանրապետությունում հաստատվեցին ժողովրդավարական կարգեր, իշխանությունը հայտնվեց դժվար հարցի առաջ. ի՞նչ անել նախորդ կառավարությունների օրոք կատարված հանցագործությունների հետ: Անտեսել դրանք չէր կարելի, բայց մեղավորներին ծանր պատիժներ նշանակելն էլ կարող էր ավելի խորացնել երկրի վերքերը: ՀԱՀ առաջին սեամորթ անգլիկան արքեպիսկոպոս Դեմոնդ Տոտտոն իր «Առանց ներումի ապագա չկա» գրքում բացատրում է. «Մենք կարող էինք որպես արդարություն պահանջել հատուցում, բայց այդժամ կունենայինք մոխիրների մեջ մնացած երկիր»: Այսպիսով՝ նոր ժողովրդավարությունն ընտրեց դժվար ուղին՝ ճմարտություն, արդարության և ներումի: Նրանց, ովքեր հանցանք էին գործել, առաջարկվեց խոստովանել ու հատուցել: Միայն արիաբար ճմարտությունը հաղթահարելով կարող էր երկիրը ոտքի կանգնել:

Աֆրիկյան այդ երկրի երկրնորանքը ինչ-որ ձևով մեր դիմադրված պայքարն է արտացոլում: Մենք հրավիրված ենք արդարություն ու գթասրտություն ցուցաբերելու (Միք.6.8), սակայն գթասրտությունը ընդհանրապես սխալ է հասկացվում, դիտվում է որպես հաշվետու լինելու պակաս, իսկ արդարության հետապնդումը երբեմն կարող է աղավաղվել՝ վերածվելով վրեժխնդրության:

Առաջ ընթանալու մեր միակ ուղին անկեղծ սերն է, որը ոչ միայն «ատում է չարը» (Հռոմ.12.9), այլև ձգտում է վերափոխություն ու «ընկերոջը» բարիք անելու (Հմ.13.10) :

**Աղոթք** - Սիրող Հայր, երբ շուրջս եղող ցավն ու անարդարությունը սիրտս է կտրում, օգնիր, որ փարվեմ սիրուդ ու զորությանդ: Ամեն:

**Այսօր դժվար է Տեսնել արդարություն ու ներում, բայց Ասծո շնորհով հնարավոր է:**

Նրան, ով իմ այս խոսքերը լսում է ու դրանք կատարում, մի իմաստուն մարդու կնմանեցնեմ, որ իր տունը ժայռի վրա շինեց: (Մատթ. 7.24)

### **ՏՈՒՆԸ ԺԱՅՈՒ ՎՐԱ**

**Ա**ՄՆ նահանգներից մեկում 34 հազար տուն վթարային են դարձել՝ խախտւտ հիմքերի պատճառով: Բանն այն է, որ հանքարդյունահանող մի ընկերություն առանց իմանալու հանքից հանել է այնպիսի շինաքար, որը պատված է եղել հանքային մի նյութով, որը ժամանակի ընթացքում բետոնի մեջ ճեղքեր բանալով՝ թուլացնում է այն: Շուրջ 600 տան հիմքեր արդեն քանդվել են, և այդ թիվը գնալով մեծանում է:

Հիսուսը խախտւտ հիմքի օրինակը գործածեց՝ բացատրելու համար մեր կյանքը անկայուն հողի վրա կառուցելու վտանգը: Նա ասաց, որ ոմանք իրենց կյանքը կառուցում են ամուր ժայռի վրա՝ վստահ լինելու համար, որ կկարողանան դիմագրավել կատաղի փոթորիկները: Շատերն էլ իրենց կյանքը հիմնում են ավազի վրա, ու երբ գալիս են փոթորիկները, նրանց կյանքը ավերվում է «մեծ կործանումով» (Հմ.27): Տարբերությունը մեր կյանքը հաստատուն կամ խախտւտ հիմքերի վրա կառուցելու վերաբերյալ Քրիստոսի խոսքերը «լսելու և կատարելու» մեջ է (Հմ.26): Հարցն այն չէ, մենք լսում ենք, թե ոչ Նրա խոսքերը, այլ այն, թե ինչքանով ենք կատարում դրանք այն կարողությունամբ, որ Ինքն է տալիս: Շատ իմաստություններ են մեզ տրված այս աշխարհում, առավել շատ՝ խորհուրդ և օգնություն, որոնց մեծ մասը լավ են ու օգտակար: Եթե մենք, առանց Աստծո խոսքի ճշմարտությունը խոնարհաբար հնազանդվելու, մեր կյանքը հիմնենք ինչ-որ հիմքի վրա, բազում դժվարություններ կհրավիրենք մեր կյանք: Իր տված զորությունամբ անել այն, ինչ Աստված ասում է. սա է միակ միջոցը ժայռի վրա հիմնված տուն՝ հաստատուն կյանք ունենալու համար:

**Աղոթք** - Հայր, ավազի վրա կառուցված կյանքը անկայուն ու ժամանակավոր լինելու զգացողություն է տալիս: Ուզում եմ հաստատուն կյանք ունենալ: Օգնիր, որ հնազանդվեմ Քեզ: Ամեն:

**Հիսուսի խոսքերը գործադրելով՝ կյանքիդ հիմքերը հաստատուն կդարձնես :**

Ամեն ճյուղ, որ պտուղ է բերում, մաքրում է, որ էլ ավելի պտղաբեր լինի: (Ռոմի. 15.2)

## **ՀԱՆՈՒՆ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ**

**Տ**եանելով, որ մեղուն նստեց ծառին, ես գմայլվեցի դրա ճյուղերի փարթամ գույնով: Ծառի փայլուն, կապույտ ծաղիկները զրավել էին ոչ միայն մեղվի, այլև իմ ուշադրութունը: Իսկ անցյալ աշնանը, երբ կնոջս ծնողները էտել էին այս գեղեցիկ բույսը և թողել միայն ցողունը, ես մտահոգվել էի, որ այն այլևս չի ծաղիկի: Փաստորեն այն ժամանակ դաժան թվացող այդ քայլը այսօր սքանչելի արդյունք է տվել:

Անակնկալ գեղեցկութունը կոպիտ թվացող գործողության արդյունք է դառնում: Այս պատկերն էր ընտրել նաև Հիսուսը, երբ նկարագրում էր Աստծո կատարած գործը հավատացյալների մեջ: Հովհաննու 15-ում նա ասում է.«Ես եմ ճշմարիտ որթատունկը, և իմ Հայրը մշակն է:...Ամեն ճյուղ, որ պտուղ է բերում, մաքրում է, որ է՛լ ավելի պտղաբեր լինի»(Հմ.1-2):

Հիսուսի խոսքերը հիշեցնում են, որ թե՛ լավ, և թե՛ վատ ժամանակներում Աստված միշտ գործում է մեր մեջ, որպեսզի մեզ տա հոգևոր վերանորոգում ու պտղաբերում (Հմ.5): Տառապանքի ու զգացական ամլության պահերին, երբ կասկածում ենք, թե դարձյալ կարող ենք բարգավաճել, Քրիստոսը քաջալերում է մեզ կառչել Իրեն. «Ինչպես որ ճյուղն ինքն իրենից չի կարող պտուղ բերել, եթե որթատունկի վրա չմնա, այնպես էլ դուք, եթե իմ մեջ չմնաք» (Հմ.4):

Երբ մենք շարունակենք հոգևոր անունդ ստանալ Հիսուսից, դրա արդյունք գեղեցկութունն ու պտղաբերութունը մեր կյանքում (Հմ.8) աշխարհին ցույց կտան Աստծո բարությունը:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր ինձ, որ կարողանամ դժվարությունների մեջ վստահել Քեզ՝ իմանալով, որ Դու գեղեցկություն ու փոփոխություն կբերես իմ կյանքում: Ամեն:

**Նեղություններ ու տագնապներ միշտ էլ կարող ենք ունենալ, սակայն Աստված գործում է մեր կյանքում:**

Եթե ուշանա, համբերի՛ր: (Ամբ. 2.3)

## **ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԵԼԻՍ**

**Բ**անգլիոկի հայտնի ճաշարաններից մեկը հաճախորդներին մատուցում է եզակի մի ապուր, որը պատրաստվում է քառասունհինգ տարի առաջվա մասջրից մի քիչ վերցնելով: «Հավերժական ապուր» անունով այդ ուտեստի արմատները գնում են միջնադար: Ինչպես որ «մնացորդները» մի քանի օր անց ավելի համեղ են լինում, այդ ապուրի երկարատև պատրաստությունը ևս դրան տալիս է յուրահատուկ համ: Այս ճաշատեսակի համար ճաշարանը բազմաթիվ մրցանակներ է շահել: Առհասարակ լավ բաների համար ժամանակ է անհրաժեշտ: Սակայն մեր մարդկային բնավորությունը համբերության խնդիր ունի: «Մինչև ե՞րբ» հարցին հաճախ ենք հանդիպում նաև Աստվածաշնչում: Շատ ցայտուն մի օրինակ կա Ամբակումի մարգարեություն մեջ, որն իր գիրքը սկսում է հարցնելով. «Մինչև ե՞րբ, Տե՛ր, աղոթեմ, բայց դու չլսես, զրկված՝ ձայն տամ քեզ, և դու չփրկես» (Հմ. 1.2): Ամբակումը, ներկայացնելով Բաբելոնի դաժան ավարառություններն ու կայսրության գրավումը, հարցնում է, թե ինչու՞ է Աստված արտոնում, որ նրա նման ապականված ժողովուրդը բարգավաճի ուրիշներին շահագործելով: Բայց Աստված խոստանում է հույս ու վերականգնում Իր ժամանակի մեջ՝ ասելով. «Տեսիլքիդ կատարման համար տակավին ժամանակ կա, այն կծագի անպայման և ոչ իզուր տեղը: Բայց եթե ուշանա, համբերի՛ր, որովհետև ինչ որ պիտի գա, կգա և չի ուշանա» (Հմ.2.3): Բաբելոնի գրավումը տևեց 70 տարի: Մարդկային չափանիշով դա երկար ժամանակ է, բայց Աստված միշտ հավատարիմ ու ճշմարիտ է Իր խոսքում: Աստծո լավագույն օրհնությունները կարող են ուշանալ: Սակայն Նա յուրաքանչյուր օրհնություն պատրաստում է կատարյալ իմաստնություններ ու հոգատարություններ: Հետևաբար արժե սպասել:

**Աղոթք** - Աբբա Յայր, շնորհակալ եմ Քո բարության, հավատարմության ու տվածդ կյանքի օրհնությունների համար: Օգնի՛ր, որ Քեզ տեսնելու համար միշտ առաջ նայեմ: Ամեն:

***Աստծո օրհնությունները կարող են ուշանալ, սակայն անհրաժեշտ է, որ արունակենք դաժանել Իրեն:***

Դրանք (այս խոսքերս) սովորեցրեք ձեր որդիներին: (Բ. Օր. 11.19)

### **ՉԱՆՔԵՐ՝ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՏՔԻ**

**Մ**ենդյան տոնին տասներկուամյա տղան անհամբեր սպասում էր տոնածառի տակի նվերները բացելուն, որովհետև երազում էր հեծանիվ ունենալ: Բայց նա հուսախաբ եղավ, երբ տեսավ, որ բառարան է նվեր ստացել: Դրա առաջին էջում գրված էր.«Չարըզին՝ հայրիկից ու մայրիկից, 1958թ.: Սիրով ու մեծ հույսերով՝ դարոցական քո լավագույն պարտականու-թյունների համար»:

Հաջորդ տասնամյակին Չաքն արդեն առաջադիմել էր ուսման մեջ, ավարտեց քոլեջը, մարզվեց ու դարձավ օդաչու: Աշխատում էր արտասահմանում՝ օգնում էր կարիքավոր մարդկանց ու նրանց փոխանցում Հիսուսի մասին իր իմացությունը: Եվ հիմա՝ այդ նվերը ստանալուց 60 տարի անց, նրա անընդհատ օգտագործած բառարանը պիտանի է իր թոռնիկների համար: Այդ գիրքը դարձել է ծնողների սիրո ու իր ապագայի համար արված ճիշտ քայլի մի խորհրդանիշ, որը նա պահում է գանձի պես: Բայց նա ծնողներին ավելի շատ երախտապարտ է Աստծո ու Աստվածաշնչի հանդեպ իր հավատքը զարգացնելու համար: Բ.Օր. 11-ում խոսվում է Աստծո խոսքը զավակներին փոխանցելու յուրաքանչյուր առիթ օգտագործելու կարևորության մասին.«Դրանք սովորեցրե՛ք ձեր որդիներին և դրանց մասին խոսեցե՛ք տանը նստելիս ու ճանապարհ գնալիս, պառկելիս ու վեր կենալիս» (Հմ.19):

Հավիտենական արժեքները Չաքի հոգում սերմանվել էին, երբ նա դեռ փոքր էր: Աստծո տված կարողությամբ նա գիտե, որ որևէ մեկի հոգևոր աճի համար մեր ջանքերը անպայման արդյունք կտան:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր, որ կարողանամ օգտագործել ժամանակս՝ կարողալով Աստվածաշնչի իմաստնության մասին, որպեսզի մեծացնեմ իմ իմացությունը և այն փոխանցեմ ուրիշների, նաև իմ զավակներին: Ամեն:

**Եթե հավատում ես Աստծուն, աշխատի՛ր նրա ծմաբույրությունները փոխանցել զավակներիդ:**

Արդարև, ես եմ քո Տեր Աստվածը, որ բռնել եմ քո աջ ձեռքից: (Ես. 41.13)

## ԱՍՈՒՐ ԲՈՆԻՐ

Հարիեթ Թաբմենը 19-րդ դարի ամերիկյան քաղաքական կյանքի ակտիվ դեմքերից է եղել: Լինելով ստրկության մեջ՝ նա ոչ միայն կարողացել է փախչել, այլև անօրինակ քաջությամբ փրկել 300-ից ավելի իր բախտակիցներին: Չուզենալով միայն իր ազատությամբ ուրախանալ՝ նա 19 անգամ վերադարձել է ստրուկներով լի նահանգներ, որպեսզի ազատի իր բարեկամներին, ընտանիքի անդամներին և նույնիսկ օտար մարդկանց՝ նրանց հետիոտն առաջնորդելով դեպի Կանադա:

Ի՞նչն էր Թաբմենին մղում նման անձնուրաց քայլի: Խորապես հավատացյալ այս կինը մի անգամ ասել է. «Միշտ Աստծուն ասում էի, թե ես ամուր կբռնեմ Քեզ, և Դու ինձ կառաջնորդես»: Աստծո առաջնորդությանը վստահելն էր մարդկանց ազատելու գործում նրա հաջողության գաղտնիքը:

Իսկ ի՞նչ է նշանակում Տիրոջը «ամուր բռնելը»: Եսայու մարգարեության գլուխներից մեկը օգնում է իմանալ, որ իրականում Ինքն է մեզ ամուր բռնում, երբ մենք մեկնում ենք մեր ձեռքը: Եսային մեջբերում է. «Արդարև ես եմ քո Տեր Աստվածը, որ բռնել եմ քո աջ ձեռքից, որ ասում եմ քեզ, թե՛ «Մի՛ վախեցիր, ես կօգնեմ քեզ» (Հմ. 41.13):

Հարիեթը ամուր կառչեց Աստծուց, և Նա առաջնորդեց իրեն: Դո՞ւ ինչ մարտահրավերներ ես դիմագրավում: Ամուր կառչի՛ր Աստծուն, և Նա կբռնի ձեռքդ ու կյանքդ: «Մի՛ վախեցիր», Նա կօգնի քեզ:

**Աղոթք** - Երկնքում բնակվող Հայր, կյանքը դժվար է, երբ փորձում եմ ամեն ինչ մենակ անել: Ուստի Քո օգնության կարիքն ունեմ: Խնդրում եմ՝ կանգնի՛ր կողքիս և վստահեցրո՛ւ՛, որ ես մենակ չեմ իմ դժվարությունների դիմաց: Ամեն:

**Դժվարություններ մի՞ս էլ կունենա՞մ, կարևո՞ր է վստահել Աստծուն և հանձնվել Նրան:**

Հիմա լույս եք Տիրոջով, լույսի որդիների պես վարվեցեք: (Եփ. 5.8)

## **Ո՞ՐՆ Է ՔՈ ԿՈՉՈՒՄԸ**

**Թ**եզը դպրոցի մարզական միջոցառումների մշտական խանդավառողն էր: Քանի դեռ դաժան հիվանդությունը չէր տարել նրան, երկու մետր հասակ և 130 կգ քաշ ուներ: Անընդհատ իրենց դպրոցի թիմի անունը բարձրաձայն գոռալու համար նրան անվանում էին «Մեծ կապույտ»:

Բայց Թեզի անունը միայն իր խանդավառ երկրպագու լինելու համար չէր, ոչ էլ գինեմոլություն, որով տարված էր եղել և Աստծո զորությունը ձերբազատվել: Նա առավելապես հիշվելու է Աստծո և իր ընտանիքի հանդեպ ունեցած սիրով, բարությունը և առատաձեռնությունը:

Չորս ժամ տևած հիշատակի արարողության ժամանակ նրա հավատակից քույրերն ու եղբայրները մեկ առ մեկ խոսեցին ու գնահատեցին նրա այդ արժանիքները՝ նշելով, որ քրիստոսաման այդ մարդը Տեր Հիսուսի զորության շնորհիվ ազատվել էր խավարից:

Եփեսացիներին ուղղված նամակի 5.8-ում Պողոսը հավատացյալներին հիշեցնում է, որ նրանք «մի ժամանակ խավարի մեջ էին» և ասում. «Հիմա լույս եք Տիրոջով, լույսի որդիների պես՝ վարվեցեք»: Այսպիսին է յուրաքանչյուր հավատացյալի ուղղված կոչը: Լույսի որդիները Թեզի նման շատ բան ունեն տալու նրանց, ովքեր խարխափում են այս աշխարհի խավարում: Հավատացյալի կյանքում «խավարի անպտուղ գործեր» չպետք է լինեն (Հմ.3-4, 11): Մեր շուրջը գտնվողները, բոլոր նրանք, ում Քրիստոսը լուսավորում է, կարիք ունեն տարբեր պայծառ վկայությունների(Հմ.14): Իսկ այդ տարբերությունը այնքան է, որքան լույսն է տարբեր խավարից:

**Աղոթք** - Հայր, ներիր՝ լույս լինելու կրավորական կեցվածքիս համար: Առաջնորդի՛ր ինձ և աշխարհի խավար տեղերում օգտագործի՛ր որպես լույս: Ամեն:

**Հաճախ ենք վարանում Քրիստոսի լույսը սարածել: Բայց հիճենք մե՛ր կոչումը և Նրա լույսը՝ սարածենք մե՛զ Երջանասողների վրա:**



Դավիթը զորացավ իր Տեր Աստծովը (Ա. Թագ. 30.6)

## ՓՐԿԵԼ ԿՈՐՑՐԱԾԸ

Հեռախոսի խանութում երիտասարդ հովիվը վատ լուրի էր սպասում: Նա կարծում էր, որ smart բջջային հեռախոսը վայր գցելը մեծ կորուստ էր: Սակայն նրան օգնող մասնագետը կարողացավ վերականգնել հեռախոսում եղած բոլոր տեղեկությունները, այդ թվում նաև աստվածաշնչյան թեմաներով տեսագրություններն ու լուսանկարները: «Կոտրված հեռախոսի փոխարեն խանութը ինձ նորը տվեց, ու ես փրկեցի կորցրածս», - ասում է նա:

Դավիթը մի անգամ, որպես հետևանք արատավոր ամաղեկացիների հարձակման, վերագտավ իր կորցրածը: Ամաղեկացիները հարձակվել ու հրի էին մատնել իրենց Սիկեղակ քաղաքը, գերեվարել կանանց, տղաներին ու աղջիկներին, այդ թվում նաև Դավիթի ու իր մարդկանց կանանց ու որդիներին (Ա. Թագ. 30.2-3): Ուստի «Դավիթը և իր մարդիկ իրենց ձայնը բարձրացրին ու լաց եղան այնքան, որ նրանց վրա լալու ուժ այլևս չմնաց» (Հմ.4): Ժողովուրդն ու Դավիթի մարդիկ չափազանց տազնապած էին և ուզում էին նրան քարկոծել (Հմ.6):

«Բայց Դավիթը Տիրոջմով իր Աստծով ուժեղացավ» (Հմ.8): Ինչպես Աստված խոստացել էր, Դավիթը հարձակվեց ամաղեկացիների վրա. «Նա ազատեց այն բոլորին, որոնց գերեվարել էին ամաղեկացիները: Նրանց ունեցածից ոչ մի բան չէր պակասել. փոքրից մինչև մեծը, տղաներին եւ աղջիկներին և այն ամենը, ինչ առել էին նրանցից, Դավիթը հետ բերեց» (Հմ.18-19):

Թշնամական հոգևոր հարձակումներ ղիմագրավելիս թող որ վերականգնված զորություն գտնենք Աստծո մեջ:

**Աղոթք** - Հայր, օգնիր ինձ, որ կանքի մարտահրավերները դիմագրավելիս հույս գտնեմ Քո մեջ: Ամեն:

**Մարտահրավերներ ու կորուստներ կլիներ, սակայն կարելի է դիմել Ասծուն, որդեսզի մեզ նորոգի և ուժեղացնի:**

Հավատացե՛ք լույսին, որպեսզի լույսի որդիներ լինեք: (Հովհ. 12. 36)

## **ՎՍՏԱՅԻՐ ԼՈՒՅՍԻՆ**

**Ե**ղանակի վատացում էր կանխատեսվել՝ պտտահողմ: Այդպես լինում է, երբ ձմեռային փոթորիկը հանկարծակի ուժեղանում է, իսկ օդի ճնշումը՝ իջնում: Այդպիսի եղանակներին երեկոյան ժամերին հատկապես Դենվերի օդանավակայանի ճանապարհին տեսանելիությունը գրեթե զրոյի է հասնում: Երբ այդ օրը աղջիկդ գալիս է այցելություն լրացուցիչ հագուստ ու ջուր ես վերցնում, որովհետև խցանումների ժամանակ դանդաղ ես վարում մեքենադ, անդադար աղոթում ես և ամենաքիչն ես վստահում մեքենաների լուսարձակներին: Երբեմն էլ կարող ես անել գրեթե անկարելին:

Հիսուսը խոսում էր հորիզոնում երևացող մի փոթորկի մասին, որի մեջ Իր մահն էր լինելու (Հովհ. 12. 31-33) և որպես հետևանք՝ Նա հրավիրելու էր իրեն հետևողներին, որ հավատարիմ մնան ու ծառայեն (Հմ.26): Մթություն է լինելու, տեսնելը՝ գրեթե անհնար իսկ ի՞նչ ասաց Հիսուսը, որ անեն: «Հավատացե՛ք լույսին» (Հմ.36): Դա էր այն միակ միջոցը, որով նրանք կկարողանային առաջ գնալ ու հավատարիմ մնալ:

Հիսուսը շատ քիչ ժամանակ էր իրենց հետ լինելու: Բայց հավատացյալները իրենց ճամփան լուսավորելու համար, որպես մնայուն առաջնորդ, ունեն Հիսուսի հոգին: Մենք էլ ենք դիմագրավում մոլթ ժամանակներ, երբ ճանապարհը գրեթե չի երևում: Բայց հավատալով կամ վստահելով Լույսին՝ կարող ենք գնալ առաջ:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք, որ Դու ես լույսը խավարում: Օգնի՛ր մեզ, որ Վստահենք Քեզ ու գնանք առաջ: Ամեն:

**Մուտք ու խավար օրեր կունենանք, բայց առաջ գնալու համար հարկավոր է հիսուսին՝ Լույսին վստահել:**

Վերինների մասին մտածեցեք և ոչ թե երկրի վրայինների: (Կող. 3.2)

### **ՎԵՐԵՎ ԱՅԵԼ**

**Թ**անաքաձուկը բնակվում է օվկիանոսի խորքերում, որտեղ արևի լույսը գրեթե չի թափանցում: Այս կենդանին այնպիսի յուրահատկություն ունի, որ աչքերը տարբեր չափի են և տարբեր չափի էլ տեսնում են: Գիտնականները երկար ուսումնասիրություններից հետո եկել են այն եզրակացության, որ թանաքաձուկն իր աջ աչքը՝ փոքրը, օգտագործում է ծովի խորքերը նայելու համար, իսկ մեծով՝ ձախ աչքով նայում է վերև՝ արևի լույսին:

Թանաքաձկան օրինակը այն մասին է, թե ինչպես կարելի է ապրել ներկա աշխարհում և որպես մարդիկ, որոնք «Քրիստոսի հետ են հարույթյուն առել» (Կող.3.1), վստահել ապագայի իրականությանը: Պողոսը կողոսացիներին ուղղված նամակում պնդում է, որ մենք «վերինների մասին մտածենք» (Հմ.2), որովհետև մեր կյանքը «պահված է Քրիստոսի հետ՝ Աստուծո մեջ» (Հմ.3)

Որպես աշխարհի բնակիչներ, որ սպասում ենք մեր երկնային բնակությանը, մեր մի աչքը պահում ենք մեր շուրջը պատահածների վրա, հետևում ենք մեր իրականությանը: Եվ ինչպես թանաքաձկան մի աչքն է ժամանակի ընթացքում ավելի զարգանում ու դառնում ավելի զգայուն՝ տեսնելու իրենից վերև եղած բաները, մենք նույնպես կարող ենք հոգևոր իմաստով աճել և տեսնել Աստծո արած գործերը մեր գիտակցության մեջ: Հնարավոր է, որ մենք դեռ լիովին չըմբռնենք՝ ինչ է նշանակում Հիսուսով ապրել, բայց երբ «վերև» նայենք, կսկսենք այն ավելի լավ տեսնել:

**Աղոթք** - Սիրող Աստված, օգնիր, որ կարողանամ միտքս ու սիրտս հաստատել այն բաների վրա, որոնք Քեզանից են: Ամեն:

**Վերինների վրա կենտրոնանալով՝ մենք կկարողանանք զարգացնել դեռի վերև եղած մեր տեսողությունը:**

Սիմեոնը... արդար ու աստվածավախ էր և Իսրայելի մխիթարությանն էր սպասում, և Սուրբ Հոգի կար նրա վրա: (Դուկ. 2. 25)

## **ՀՈՒՅՍՈՎ ՍՊԱՍԵԼ**

«**Հաչի շան հեքիաթը**» կինոնկարում քոլեջի դասախոսը բարեկամանում է մի թափառող շան հետ ու պահում նրան: Շնիկն իր երախտագիտությունը ցույց է տալիս ամեն օր կայարանում տիրոջ տունդարձին սպասելով: Մի օր պրոֆեսորը հանկարծամահ է լինում: Եվ հավատարիմ շունը ոչ միայն այդ և հետագա օրերին, այլև ամբողջ տասը տարի շարունակում էր սպասել սիրելի տիրոջը:

Ղուկասը պատմում է Սիմեոն անունով մի մարդու մասին, որը համբերությունը սպասեց իր Տիրոջ գալստյանը (Ղուկ. 2. 25): Սուրբ Հոգին Սիմեոնին հայտնեց, թե ինքը չի մահանա, մինչև Փրկչին չտեսնի (Հմ.26): Եվ Սիմեոնը շարունակեց սպասել Նրան, ով «փրկություն» էր տալու Աստծո ժողովրդին (Հմ.30): Երբ Մարիամն ու Հովսեփը Հիսուսի հետ մտան տաճար, «Նա վերցրեց նրան, իր գիրկն ընդունեց, Աստծուն օրհնեց ու ասաց. «Հիմա, ո՛վ Տեր, քո խոստման համաձայն խաղաղությունը արձակում ես քո ծառային: Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ» (Հմ.28-31):

Եթե մենք էլ սպասման մեջ ենք, նորովի լսենք Եսայի մարգարեի խոսքերը: «Նրանք, որոնք Տիրոջն են ապավինում, նոր ուժ պիտի ստանան և նոր փետուրներով զարդարուն ինչպես արծիվներ, պիտի վազեն, բայց չպիտի հոգնեն, պիտի գնան, բայց քաղց չպիտի զգան» (Ես. 40.31): Երբ մենք սպասում ենք Հիսուսի վերադարձին, Նա մեզ շնորհում է հույս ու զորություն, որի կարիքն ունենք յուրաքանչյուր պահի:

**Աղոթք** - Տե՛ր, Քեզ կսպասեմ: Ցավի, արցունքի ու անորոշության պահերին օգնի՛ր, որ չհոգնեմ, այլ հանգստանամ Քո նախատեսությանը: Ամեն:

**Ասծուն սղասելիս հնարավոր է, որ հոգնեմ: Բայց  
բաջալեղվեմ, որովհետև Իմն է մեր հույսը:**

Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ: (Հոռոմ. 8.31)

## ԱՂՈՔ ՎԱՐՊԱՆԱՆՑ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՈՒԿՈՉՄԱՆ ԱՌԻԹՈՎ

**Ո**՛վ հավիտենական Աստված, տիեզերքի հզոր Արարիչ և Տեր Հիսուս Քրիստոսով մեր Երկնավոր Հայր, փառք Քեզ, որ հայ ժողովրդին պահեցիր սերնդեսերունդ և դարեդար՝ ահեղ փոթորիկների ու մրրիկների մեջ, որպեսզի մեր կյանքով ու մահվամբ Քեզ վկայենք ու Քո Ավետարանին հավատարիմ մնանք: Շնորհակալ ենք, որ պատվեցիր ու օրհնեցիր մեր ազգը՝ մեզ տալով Վարդանի ու Ղևոնդի հոգով առաջնորդներ, որոնք գերադասեցին հավատարիմ մնալ ազգին ու քրիստոնեական հավատին, քան վայելել մեղքի ժամանակավոր զվարճությունը և աշխարհի գանձերը: Ո՛վ Երկնավոր Հայր, փառք Քեզ, որ պատասխանեցիր մեր դարավոր աղոթքներին, արցունքներին ու բաղձանքներին և մեզ շնորհեցիր ազատ ու անկախ Հայաստան հայրենիքը և արյան գնով ազատագրված Արցախը: Բայց անկախությունն ու ազատությունը պահելու համար յուրաքանչյուր հայից և ամբողջ հայ ժողովրդից պահանջվում է հավատք, իմաստնություն, քաջություն, համերաշխություն, տոկունություն, զոհողություն և սեր: Ո՛վ ամենակարող Աստված, Դու ես մեր պահապանն ու պաշտպանը: Օգնի՛ր մեզ՝ ավելի վստահել և ապավինել Քեզ, քան մարդուն: Մեզ՝ հայերիս տու՛ր քրիստոսակենտրոն, քրիստոսաբույր, Սուրբ Հոգով առաջնորդվող, Սուրբ Խոսքիդ լույսով քայլող մարդիկ: Շնորհի՛ր մեզ բարի կամեցողություն՝ քրիստոնեական ջերմ հոգով մեր օգնության ձեռքը մեկնելու կարոտյալին, մեծին ու փոքրին, որբին ու որբեկայրուն, քրոջն ու եղբորը, մեր սիրո, հոգատարության ու բարեկամության կարիքն ունեցողին:

**Աղոթք** - Տեր, մեզ լցրու՛ Սուրբ Վարդանանց հոգով, մեր սրտերը բոցավառիր նրանց կայծերով և օգնի՛ր, որ կարողանանք մեզ փոխանցված սուրբ ավանդը անմար պահել և փոխանցել մեր զավակներին ու նոր սերնդին: Այս է մեր խնդրանքը Քո անվան փառքի համար և մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատվական անունով: Ամեն:

Գառան հարսանիքը եկավ: (Հայտն. 19. 7)

## **ՈՒՐԱԿ ՏՈՆԱԿԱՄԲՈՒԹՅՈՒՆ**

**Ը**նկերոջս երիտասարդ դստեր՝ Մելիսայի մահից հետո ավտովթարի զոհ դարձավ նաև ընկերուհին՝ Շերոնը: Մի գիշեր այդ երկուսին տեսա երազում: Նրանք ընդունելության մեծ սրահն էին գրողներով զարդարում և ինձ բողբոջվին չնկատեցին: Սպիտակ ծածկոցով երկար սեղան էր դրված, վրան՝ ոսկեպնակներ ու գավաթներ: Հարցրի, թե ինչո՞վ կարող եմ օգնել, սակայն նրանք ինձ չէին լսում և շարունակում էին իրենց գործը:

Հետո Շերոնն ասաց, որ հավաքույթը Մելիսայի ամուսնության առիթով է: Իմ հարցին, թե իսկ ո՞վ է փեսան, նրանք լուռ իրար նայեցին: Վերջապես ես հասկացա, որ դա Հիսուսն է: Ու արթնացա՝ արդեն բարձրաձայն կրկնելով. «Հիսուսն է փեսան»:

Այս երազն ինձ հիշեցրեց Հիսուսին հավատացողների ուրախ տոնախմբությունը, որ պիտի լինի, երբ Հիսուսը վերադառնա: Գա պատկերված է որպես մի ճոխ ընթրիք՝ «Գառան հարսանիք» (Հայտն. 19.9) անունով: Հովհաննես Մկրտիչը, երբ ժողովրդին պատրաստում էր Քրիստոսի առաջին գալստյանը, նրան անվանել էր «Աստծու Գառ, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհ. 1. 29): Նա Հիսուսին ակնարկել էր նաև որպես «փեսա» և վերջինի «բարեկամ, որ կանգնած է ու լսում է նրան, փեսայի ձայնի վրա ուրախանալով ուրախանում է» (Հմ.3. 29):

Տոնախմբության օրը և հավիտյան մենք կվայելենք ուրախ ու երջանիկ անքակտելի մի հաղորդակցություն Տեր Հիսուսի՝ մեր Փեսայի, Շերոնի, Մելիսայի և Աստծո ողջ ժողովրդի հետ:

**Աղոթք** - Տե՛ր, Քեզ տեսնելու համար նայում եմ առաջ՝ դեպի այդ տոնախմբության օրը: Շու՛տ եկ: Ամեն:

**Տերը ներում է մեր բոլոր մեղքերն ու հանցանքները և մեզ հրավիրում Իր հետ մեծ ընթրիքի: Ի՛նչ մեծ հրձվանք ու օրհնություն:**

Ես նորն եմ անելու: Աճջրդի հողում գետեր պիտի բխեցնեն: (Ես. 43. 19)

## ՆՈՐ ԲԱՆ

**Ա**յն վայրերում, որտեղ ջրի պակաս կա, հողագործությունը դժվար է զարգանում: Այդ խնդիրը լուծելու համար «Ծովային ջրերի ջերմոց» ընկերությունը Սոմալիում և նման կլիմա ունեցող այլ երկրներում կիրառում է մի նորություն, որ կոչվում է «գովացնող տներ»: Արևի էներգիայով աշխատող ջրհան պոմպերի միջոցով ծովի աղի ջուրը ցողում են ծալքավոր ստվարաթղթից պատրաստված պատերի վրա: Ջուրը ցած հոսելով՝ այդ ծալքերի վրա է թողնում աղը: Մնացած ջուրը գոլորշիանում է ջերմոցի ներսում՝ ստեղծելով խոնավ միջավայր, որը շատ օգտակար է մրգերի ու բանջարեղենի համար:

Եսայի մարգարեի միջոցով Աստված էլ խոստացավ «նոր բան անել», Իսրայելի ժողովրդի համար «անջրդի հողում գետեր բխեցնել»: Այդ նոր բանը նա հակադրեց հնին, այն բանին, ինչ Ինքն արել էր Իր ժողովրդին եգիպտացիներից ազատելու ժամանակ: Հիշո՞ւմ ես Կարմիր ծովի դեպքը: Աստված ուզեց, որ Իր ժողովուրդը հիշի իր անցյալը և չանտեսի հիմա արված բաները նրանց կյանքում: Նա ասաց. «Ես նորն եմ անելու, որ հիմա հայտնվելու է, և դուք պիտի ճանաչեք. ճամփա պիտի բացեմ անապատով և անջրդի հողում գետեր պիտի բխեցնեմ» (Ես. 43.19): Անցյալին նայելը կարող է ավելացնել Աստծո հանդեպ մեր հավատը, սակայն անցյալում ապրելը կուրացնում է և խանգարում տեսնել այսօր մեր կյանքում Աստծո արածը: Կարող ենք Աստծուն դիմել, որպեսզի Ինքը ցույց տա, թե հիմա Ինքն ինչպե՞ս է շարժվում, օգնում, վերականգնում ու Իր ժողովրդին պահում: Այս գիտակցումը թող մեզ մղի ընկերակցելու Իր հետ, որպեսզի հոգանք ուրիշների կարիքները:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, փառավորում եմ Քեզ՝ որպես կենդանի Աստված, որ շարունակ նոր բաներ է անում: Օգնի՛ր, որ կարողանամ Քեզ վստահել իմ բոլոր կարիքների ժամանակ: Ամեն

**Աստված մի՛ս էլ մեզ համար նոր բաներ է անում: Զգեսն՛ տեսնել Նրա արածները մեր կյանքում:**

Խնդրեցի Տիրոջն, ու նա լսեց ինձ: (Մաղմ. 33.5)

## **ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ ՈՒՂԱՐԿԵԼ**

**Ա**լյասկայի լեռնային ամենացուրտ շրջանում բնակվող մի մարդու խրճիթում հրդեհ բռնկվեց, և նա մնաց առանց կացարանի ու պաշարի: Միայն երեք շաբաթ անց այդտեղով անցնող օդանավից նկատեցին ձյան վրա սևով գրված նրա օգնություն կոչը, և նրան փրկեցին:

Սաղմոսերգու Դավիթը այդպիսի աղետալի վիճակում էր: Նրան նախանձող Սավուղ թագավորը հետապնդում էր և ուզում էր սպանել: Դավիթը փախավ ու գնաց Գեթ քաղաք, որտեղ կյանքը փրկելու համար խելագար ձեռնարկ (Ա. Թագ. 21): Այդ դեպքերի առիթով նա գրեց 33-րդ սաղմոսը, որում դիմեց Աստծուն, աղոթք բարձրացրեց և խաղաղություն գտավ(հմ.5): Աստված լսեց նրա աղոթքը և փրկեց նրան:

Դու է՞լ ես նման հուսահատ վիճակում և օգնություն ես խնդրում: Վստահ եղիր, որ Աստված լսում է և կպատասխանի քո աղոթքներին: Ինչպես Դավիթի պարագայում, նա ուշադիր է մեր աղերսներին ու վանում է մեր վախերն ու նեղությունները(հմ.5), մեզ ազատում մեր «տազնապներից» (հմ.6):

Աստծո Խոսքը մեզ հրավիրում է. «Հոգսդ դի՛ր Տիրոջ վրա, ու նա քեզ կկերակրի և չի թողնի, որ արդարը հավիտյան սասանվի» (Սաղմ. 54.23): Երբ մեր դժվարությունները ներկայացնենք Աստծուն, կարող ենք վստահ լինել, որ նա մեզ կտանահրաժեշտ օգնությունը: Մենք ապահով ենք իր ամենակարող և հզոր թևերի մեջ:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմ, որ լսում ես աղոթքներս և ինձ պարգևում մխիթարություն ու խաղաղություն: Նաև շնորհակալ եմ, որ ինձ ազատում ես մեղքերից: Ամեն:

**Հուսահատ ու նեղված վիճակներում վստահ լինե՛մ, որ մեր Օրկիչը մեզ հե՛ս է:**



Նա աներևույթ Աստծու պատկերն է՝ բոլոր ստեղծվածներից առաջ ծնված: (Կող. 1. 15)

### **ՆՈՒՅՆԱՆՄԱՆ ՊԱՏԿԵՐ**

**Զ**բոսնելիս հանդիպեցինք մի կնոջ, որը ամուսնուս՝ Ալանին ճանաչում էր փոքր տարիքից: Նայելով մեր որդուն՝ կինն ասաց, որ նա շատ նման է հորը.«Ճիշտ Ալանի պատկերն է: Աչքերը, ժպիտը, ամեն ինչը»: Կինը ոչ միայն արտաքին նմանություններ էր նշում, այլև ամուսնուս բնավորությունն էր հիշում: Իսկ ես մտածում էի, որ թեև որդիս ամուսնուս շատ նման է, սակայն հորը կատարելապես չի կրկնում:

Միայն մեկ Որդի կա՝ Հիսուսը, որն ամբողջությամբ արտացոլում է Իր Հորը: «Նա աներևույթ Աստծու պատկերն է՝ բոլոր ստեղծվածներից առաջ ծնված (Կող. 1.15): «Բոլոր բաները նրա միջոցով ու նրա համար ստեղծվեցին, և Նա բոլորից առաջ է, ու ամեն բան նրանով է հաստատուն (Հմ.16-17):

Մենք կարող ենք ժամանակ անցկացնել աղոթքով ու Աստվածաշունչը սերտելով, որպեսզի Հիսուսին նայելով՝ գտնենք Հոր հատկանիշը: Նա մեզ հրավիրում է Իր սիրո մասին վկայել՝ քննելով, թե Ինքն ինչպես է վարվում ուրիշների հետ խոսելիս ու մեր առօրյա կյանքում: Մեր կյանքը Քրիստոսին հանձնելուց ու Սուրբ Հոգու պարզևը ստանալուց հետո մենք կարող ենք աճել՝ իմանալով ու վստահելով մեր սիրող Հորը: Իր նկարագիրն արտացոլելով՝ Նա վերափոխում է մեզ, որպեսզի կարողանանք ապրել Իր համար:

Աղոթք - Տե՛ր Զիսուս, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ Քեզ ավելի լավ ճանաչեմ, երբ Դու ինձ Քեզ նման ես դարձնում: Ամեն:

**Եթե որոշել եմք Աստծո գավակներ լինել, ուրեմն հարկ է, որ Նրա դասերն արձանագրենք:**

Մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով: (Հռոմ. 12.2)

## ՄՏԱԾԵԼ ՏԱՐԲԵՐ ԿԵՐՊ

**Ք**ուրբանուհի ուսանելիս ամառային արձակուրդի մեծ մասն անցկացրել է Վենեսուելայում: Ուտելիքը հրաշալի էր, մարդիկ՝ հաճելի, եղանակն ու հյուրասիրությունը՝ սքանչելի: Սակայն առաջին մի քանի օրը նկատեցի, որ ժամանակը տնօրինելու իմ պատկերացումը չէր համապատասխանում բարեկամներիս տեսակետին: Եթե ծրագրում էինք կեսօրին ճաշել, դա կարող էր լինել ժամը 12-ից մեկը: Նույնը վերաբերում էր ժամագրություններին: Նրանց համար ժամանակացույցները մոտավոր էին, ոչ ճշգրիտ: Ես հասկացա, որ ճշտապահ լինելը մշակույթի հետ էր կապված:

Բոլորս էլ ձևավորվում ենք մեզ շրջապատող արժեքներով, յուրատեսակ մշակույթով: Պողոսը մշակութային այդ ուժն անվանում է «աշխարհ» (Հռոմ. 12. 2): Այստեղ «աշխարհը» ֆիզիկական տիեզերքը չէ, այլ գոյություն մասին մեր տեսակետը: Այն վերաբերում է աներկբա կարծիքներին ու մեզ փոխանցված գաղափարներին, որովհետև մենք ապրում ենք որոշակի ժամանակում և որոշակի վայրում:

Պողոսն զգուշացնում է զգոն լինել. «Մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով» (Հմ.2): Փոխարենը առաջարկում է. «Նորոգվեցե՛ք ձեր մտքի նորոգությամբ» (Հմ.2): Այսինքն՝ մեր մտածելակերպի ու հավատքի առնչությամբ կրավորական կեցվածքի փոխարեն հարկավոր է գործնականորեն հետևել Աստծո մտածելակերպին ու սովորել, թե ինչպես կարելի է հասկանալ իր «բարի, հաճելի ու կատարյալ կամքը» (Հմ.2):

**Աղոթք** - Հայր, չեմ կարողանում տեսնել նույնիսկ ենթադրություններս ու դավանածս արժեքները: Օգնի՛ր, որ ապրեմ ու գործեմ ցույց տալով Քո ճշմարտությունն ու միտքը: Ամեն:

**Մեզ օրհաղթանոց արժեքներ ու սովորություններ կան, դրանց համակերպվելու փոխարեն Տիրոջը հետևենք:**

Առանց ձեր հայացքն ուղղելու նրան, որ առաջուց շինել էր այն:  
(Ես. 22.11)

## **ԿԱՏԱՂԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ**

**1** 7-րդ դարի վերջին Հռոմեացիների արքա Վիլյամը, փորձելով իր երկիրն ազատել իսպանացիներից, ծրագրված հեղեղեց իր երկրի մեծ մասը: Չհաջողվեց, և հսկայական մշակովի հողատարածքներ կորցրեց: Ասում են.«Օրհասական պահերին ամեն միջոցի կարելի է դիմել»:

Եսայի մարգարեի ժամանակներում Երուսաղեմի բնակիչները դիմեցին կատաղի միջոցների, երբ Ասորեստանի բանակը սպառնում էր իրենց: Երկարատև պաշարմանը դիմակայելու համար նրանք ստեղծեցին ջրի պաշարների մեծ ցանց, իսկ քաղաքի պարիսպներն անառիկ դարձնելու համար քանդեցին իրենց տները: Առաջին հայացքից նման ռազմավարությունը կարող է իմաստուն թվալ, սակայն նրանք անտեսել էին ամենակարևոր քայլը: Աստված նրանց ասել էր.«Երկու պարիսպների մեջտեղը, հին ջրմուղից ավելի ներս, պիտի ջուր հանեք ձեզ համար, առանց ձեր հայացքն ուղղելու նրան, որ առաջուց շինել էր այն, առանց նրա հիմնադրողին հեռվից-հեռու ճանաչելու» (Ես. 22.11):

Այսօր մենք մեր տան մոտ օտար բնակիչ չենք դիմադրավում: Հայտնի գրող Օսվալդ Չամբերսն ասել է. «Ավերածությունները միշտ գալիս են սովորական ձևերով ու սովորական մարդկանց միջոցով»: Այո՛, նման «ավերածությունները» դեռևս իրական սպառնալիքներ են: Բարեբախտաբար, դրանք իրենց հետ բերում են նաև Աստծո հրավերը՝ մեր կարիքների համար նախ իրեն դիմել: Երբ կյանքի մարտահրավերները մոտենան, դրանք կհամարենք Աստծոն դառնալու լավ առի՞թ, թե՞ կփորձենք գտնել կատաղի լուծումներ:

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, իմ դիմագրաված մեծ ու փոքր դժվարությունները հաղթահարելու համար նախ Քեզ եմ դիմում:  
Ամեն:

**Ամեն օր սովորական սղառնալիքներ ենք դիմագրավում, ուսի անհրաժեշտ է դառնալ դեռի Աստված:**

Քաղցր են սաղմոսները. հաճելի է օրհնությունը մեր Աստծուն: (Սաղմ. 146. 1)

## **ՀԻՇԻՐ ԵՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Վ**աստակած հանգստի անցած օպերային երգչուհի Նենսի Կոլստաֆսոնը, այցելելով իր մորը և տեսնելով նրա խղճալի վիճակը, ցնցվեց: Մայրը ծանր հիվանդության պատճառով մարդկանց այլևս չէր ճանաչում և դժվարությամբ էր խոսում: Մի քանի ամիս մորն այցելելուց հետո Նենսիի մտքում մի միտք ծնվեց. նա սկսեց մոր համար երգել: Մոր աչքերը լուսավորվեցին, և նույնիսկ փորձեր արեց մի քանի վայրկյան երգել: Հետո ծիծաղեց ու կատակեց, թե Կոլստաֆսոն ընտանիքի երգիչներն են ելույթ ունենում: Այս փորձառությունը հաստատում է երաժշտության դրական ազդեցությունը հիվանդությունը հաղթահարելու, հատկապես հիշողությունը վերականգնելու գործում: Ապացուցված է, որ «Հին սիրված երգերն» էլ բարձրացնում են մարդկանց տրամադրությունը և նվազեցնում հանգստացնող դեղերի կարիքը:

Երաժշտության ու հիշողության կապի վերաբերյալ հետազոտությունները շարունակվում են, իսկ Աստվածաշունչը հայտնում է, որ երգելուց եկող ուրախությունը Աստվածատուր և իրական պարզե է: «Օրհնեցե՛ք Տիրոջը, քանզի քաղցր են սաղմոսները. հաճելի է օրհնությունը մեր Աստծուն» (Սաղմ. 146.1):

Աստվածաշունչը շարունակ հորդորում է ժողովրդին, որ իրենց ձայնը բարձրացնեն փառաբանության երգերով: «Օրհնեցե՛ք Տիրոջ անունը, քանզի նա մեծամեծ գործեր կատարեց» (Նս.12.5): «Բերանս դրեց մի նոր օրհներգ՝ օրհներգը մեր Տեր Աստծու: Շատերը պիտի տեսնեն ու վախենան և իրենց հույսը դնեն Տիրոջ վրա» (Սաղմ. 39.4): Բոլորս հիշենք, որ մեր Աստվածը մեծ է ու արժանի փառաբանության:

**Աղոթք** - Հայր, թող որ Աստծուն փառաբանեն: Ծնորհակալ եմ, որ երգի գեղեցկությամբ ու զորությամբ հաճախ բացում ես նրանց մտքերը, ովքեր հիշողության խնդիր ունեն: Ամեն:

**Առիթներ ստեղծի՛ր, որ երգեր ու սաղմոսներ կատարես նրանց հետ, ովքեր հիշողության դժվարություններ ունեն:**

Գոռոզացավ քո սիրտն, ու ասացիր՝ «Աստված եմ ես»: (Եզ. 28.2)

## **ՄԵՆՔ ԱՍՏՎԱԾ ՉԵՆՔ**

**Ք**. Լուիսը իր «Սոսկ Քրիստոնեություն» գրքում ընթերցողներին հորդորում է մի քանի հարցի միջոցով պարզել՝ իրենք գոռո՞գ են, թե ոչ: «Կարողանո՞ւմ եմ անտեսել, երբ ուրիշներն արհամարհում են ինձ և միայն իրենց են ցույց տալիս»: Աստվածաբան-գրողը գոռոզությունը դիտարկում է իբրև «գերագույն չարություն» հոմանիշ և մարդկանց ու ժողովուրդների մեջ եղած դժբախտությունների գլխավոր պատճառ: Նա գոռոզությունն անվանել է հոգևոր քաղցկեղ, որը ոչնչացնում է սիրո, գոհունակության ու տրամաբանության հնարավորությունը:

Գոռոզությունը բոլոր ժամանակներում էլ խնդիր է եղել: Աստված Տյուրոսի իշխանին Եզեկիել մարգարեի միջոցով զգուշացրեց իր գոռոզության համար՝ ասելով, որ դա իր կործանման պատճառ կարող է դառնալ: «Քանի որ քո սիրտը որպես Աստծու սիրտ ես ներկայացրել, դրա համար ահա ես օտար դաժան ազգեր եմ բերելու քո դեմ» (Եզ. 28. 6-7): Եվ նա պիտի իմանա, որ «Մարդ ես դու, ոչ թե Աստված» (հմ.9):

Գոռոզության հակառակը խոնարհությունն է, և Լուիսը այն նկատում է որպես առաքիչություն, որ մարդ ստանում է Աստծուն ճանաչելով: Աստծո հետ կապի մեջ լինելով՝ մենք կդառնանք «Չանասիրաբար հեզ» և կազատվենք անհեթեթ մեծամտությունից, որ մեզ անհանգստացնում և տխրեցնում է:

Որքան ավելի պաշտենք Աստծուն, այնքան ավելի կճանաչենք Նրան և մեր անձն ավելի կխոնարհեցնենք իր առջև:

**Աղոթք** - Հոգի՛ր Հայր, օգնի՛ր, որ կարողանամ ինքնությունս հայտնել այնպես, ինչպես Դու ես ստեղծել: Իմանալ, որ Դու, լինելով մեծ ու հզոր, դարձյալ սիրում ես ինձ: Ամեն:

**Հոյաբանալու զգացում ունենալիս Աստված մեզ կոչում է մեր անձը խոնարհեցնել:**

Արդ դու, իմ որդյակ, զորացի՛ր այն շնորհով, որ Քրիստոս Յիսուսով է: (Բ.Տիմ.2.1)

## **ՇՆՈՐՀՈՎ ԶՈՐԱՅԱԾ**

**Ա**մերիկայի քաղաքացիական պատերազմի ժամանակ դասալքուլթյան համար մահապատիժ էր սահմանված: Սակայն Միուլթյան բանակում այդ պատիժը շատ քիչ գործադրվեց, որովհետև նախագահ Աբրահամ Լինքոլնը գրեթե բոլորին ներում չնորհեց: Պատերազմի քարտուղար Էդվին Սթանթոնը, զայրացած այդ որոշումից, կարծում էր, որ Լինքոլնի բարյացակամուլթյունը ի չարը կգործադրվի և շատերը կլքեն բանակը: Իրականում Լինքոլնը հասկացավ ու համակրեց այն զինվորներին, որոնք պատերազմից էին վախեցել: Առաջնորդի այդ վերաբերմունքն ավելի սիրելի դարձրեց նրան: Զինվորներն ավելի սիրեցին իրենց «Հայր Աբրահամին» և այդ սերը նրանց առաջնորդեց ավելի մեծ նվիրումով Լինքոլնին ծառայել:

Երբ Պողոսը Տիմոթեոսին կոչ է անում «նեղուլթյունները կրել ինչպես Քրիստոս Հիսուսի բարի զինվոր»(Բ.Տիմ. 2.3), նրան հրավիրում է դժվար գործի: Զինվորը անձնուրաց, համակ նվիրումով ու ամբողջ սրտով պետք է գործի և ծառայի իր առաջնորդին՝ Հիսուսին: Բայց իրականում մենք երբեմն ձախողում ենք և հավատարմորեն չենք ծառայում: Հետևաբար Պողոսի առաջին խոսքը կարևոր է. «Զորացի՛ր այն շնորհով, որ Քրիստոս Հիսուսով է(հմ.1): Մեր Փրկիչ Տեր Հիսուսը լի է շնորհով: Հասկանում ու համակրանքով է նայում մեր թուլուլթյուններին և ներում է մեր ձախողումները (Եբ. 4.15): Այնպես, ինչպես Միուլթյան զինվորները քաջալերվեցին Լինքոլնի ցուցաբերած կարեկցուլթյունից, հավատացյալներն էլ զորանում են Տեր Հիսուսի շնորհով:

**Աղոթք** - Սիրելի՛ Դայր, խնդրում եմ՝ ինձ զորացրու՛ Քրիստոսի շնորհով, որպեսզի կարողանամ հավատարմությամբ ծառայել քեզ: Ամեն:

**Եթե դասրաս լինենք ծառայելու Տեր Յիսուսին, Նրա շնորհը կբավականացնի մեզ:**

Որոնցով ամենամեծ ու պատվական խոստումներ են մեզ տրված: (Բ.Պետ. 1.4)

## ՊԱՏՎԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

**Մ**եր ձախողումների ժամանակ հաճախ ենք մտածում, թե այլևս շատ ուշ է, և մենք արդեն կորցրել ենք մեր կյանքը նպատակասլաց ու արժանիորեն ապրելու պահը: Բանտարկյալի Իր ապրումներն այդպես է նկարագրում Նյու Յորքի նախկին բանտարկյալներից մեկը՝ Էլյասսը:

«Բարդ» քոլեջի «Բանտային նախաձեռնություն» ծրագիրը սկսեց վերափոխել Էլյասսի կյանքը: Կրթական ծրագրերից մեկի շրջանակում նա անդամակցում էր մի խմբի, որը 2015-ին հաղթել էր Հարվարդից եկած խմբին: Այդ «խմբի անդամ լինելը» Էլյասսի համար առիթ էր ցույց տալու, որ խոստումները ամբողջովին կորսված չեն:

Նման վերափոխում է լինում նաև մեր սրտերում, երբ սկսում ենք հասկանալ Քրիստոսի սիրով մեր հանդեպ Աստծո ունեցած բարի լուրը: Մենք զարմանքով սկսում ենք հասկանալ, որ շատ ուշ է, որ ամեն ինչ կորած է: Որ Աստված դեռ մեզ համար ապագա է նախանշել:

Եվ այդ ապագան ոչ հնարավոր է շահել, ոչ էլ բռնի տիրանալ: Այն կախված է միայն Աստծո՝ մեր հանդեպ ունեցած շնորհից ու զորությունից (Բ.Պետ. 1.2-3): Ապագա , որտեղ մենք ազատ կլինենք աշխարհում ու մեր սրտում եղած հոսահատությունից, կլինի Իր «փառքով ու առաքինությունով» լցված կյանք (Հմ.3), որն ապահովագրված է Քրիստոսի «պատվական խոստումներով» (Հմ.4) և «Աստծու որդիների փառավոր ազատության մեջ մտնելով» (Հռոմ. 8.21):

**Աղոթք** - Տե՛ր, երբեմն նկատում եմ միայն այն միջոցները, որոնցով ինքս ինձ և ինձ շրջապատողներին հուսախաբ եմ անում, այն ձևերը, որոնցով իմ երազած ապագան փշրել եմ: Օգնի՛ր ինձ՝ տեսնել Քո մեջ գտած ապագայիս անփոփոխ գեղեցկությունը: Ամեն:

**Հակառակ մեր հուսախաբությունների՝ Աստծո աջերում մենք ամերևակայելի գեղեցկությամբ աղագա ունենմ:**

Որովհետև նրանց, ում առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց իր Որդու պատկերին կերպարանակից լինել: (Չոռմ. 8.29)

### **ՀԻՍՈՒՍԻ ՆՄԱՆ**

**Ս**կանակ աստվածաբան Բրուս Ուեբը հիասթափված էր, որ Ա.Պետրոս 2.21-23-ում կոչ է արվում նմանվել Հիսուսին: Իր «Հիսուս Քրիստոս մարդը» խորագրով գրքում նա երիտասարդական պոռթկումով գրում է.«Կարծում եմ՝ դա արդար չէ: Հատկապես երբ ասվում է, որ պետք է հետևել նրան, ով մեղք չի գործել: Ես զարմանում եմ, թե ինչպե՞ս կարող է Աստված կամենա, որ սա լուրջ ընդունվի»:

Հասկանալի է, թե ինչու կարող էր սուրբգրային այդ մարտահրավերը երիտասարդ գիտնականի համար սարսափելի թվալ: Հին երգում էլ է ասվում. «Հիսուսին նմանվել, Հիսուսին նմանվել: Ցանկանում եմ իրեն նմանվել»: Սակայն ինչպես Ուեբըն էր նշել, մենք չունենք այդ կարողությունը: Եթե մեզ մնա, մենք երբեք Հիսուսի նման չենք կարող լինել:

Բայց մենք մենակ չենք: Սուրբ Հոգին տրված է Աստծո զավակներին, որպեսզի «Քրիստոսը մեր մեջ կերպարանվի» (Գաղ. 4.19): Հետևաբար մեզ համար զարմանալի չի թվալու Պողոսի գրած հատվածում Սուրբ Հոգու մասին կարդալ.«Որովհետև նրանց, ում առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց իր Որդու պատկերին կերպարանակից լինել (Հոռմ. 8.29): Աստված տեսնելու է իր գործը մեր մեջ ամբողջացած: Եվ այդ բանը նա անում է Հիսուսի հոգին մեր մեջ բնակեցնելով:

Անձնատուր լինելով Հոգուն՝ իրապես ավելի նման կլինենք Հիսուսին: Որքա՛ն մխիթարական է իմանալ, որ դա է Աստծո մեծագույն փափագը մեզ համար:

**Աղոթք** - Չա՛յր, ուզում եմ ավելի նման լինել Հիսուսին, բայց հաճախ բառեր, խորհուրդներ ու գործեր եմ պակասում ինձ: Ների՛ր և օգնի՛ր, որ հանձնվեմ Քո Չոգու գործին , որպեսզի Հիսուսը կերպարանվի իմ մեջ: Ամեն:

**Եթե թույլ չանի, որ Հոգին բնակվի մեր մեջ, Հիսուսը կկերտավորվի և Չոգու ղոտուղները կաճեն:**



Այսպես ձեր լույսը մարդկանց առաջ թող լուսավորի, որ ձեր բարի գործերը տեսնեն ու փառավորեն ձեր Դորը, որ երկնքում է: (Մատթ. 5.16)

## **ՎԱՌԵԼ ԼՈՒՅԱԸ**

**Ե**ս ու ամուսինս պատրաստվում էինք տեղափոխվել երկրի հեռավոր շրջաններից մեկը, և ես ուզում էի վստահ լինել, որ միշտ կարող ենք կապի մեջ լինել մեր չափահաս զավակների հետ: Գտա մի յուրահատուկ նվեր. բարեկամական լապտերներ, որոնք իրար են միացած համացանցով, այսինքն՝ կարելի է միացնել հեռվից: Լապտերները տալով որդիներին՝ բացատրեցի, որ ամեն անգամ, երբ ես դիպչեմ իմ լամպին, դրանք վառվելու են՝ հիշեցնելու իմ սիրո ու աղոթքների մասին: Թեև ոչինչ չի կարող փոխարինել անձնական կապի ջերմությունը, բայց գոնե կարող էինք քաջալերվել՝ իմանալով, որ սիրված ենք և ամեն անգամ լույսերը վառելիս աղոթք է հնչում մեզ համար: Աստծո բոլոր զավակները Սուրբ Հոգու զորությունը ունեն լույս բաժանող դառնալու հնարավորություն: Մենք ձևավորված ենք ապրելու որպես Աստծո հավիտենական հույսի ու անվերապահ սիրո փայլող փարոսներ: Երբ ավետարանը բաժնեկցում ենք ուրիշների հետ և այլոց ենք ծառայում Հիսուսի անունով, մենք դառնում ենք փայլուն լուսակետեր ու կենդանի վկաներ: Յուրաքանչյուր բարի գործ, քաղցր ծախտ, ազնիվ, քաջալերական խոսք ու սրտաբուխ աղոթք շողացող հիշեցում է Աստծո հավատարմության և կյանք վերափոխող, անվերապահ սիրո մասին (Մատթ. 5.14-16):

Աստված ուր էլ առաջնորդի մեզ, ինչ ձևով էլ իրեն ծառայենք, մենք իր ձեռքում կարող ենք ուրիշներին օգնելու գործիք դառնալ, որպեսզի նրանք էլ տարածեն իր լույսը:

**Աղոթք** - Սիրո՛ղ Դայր, խնդրում եմ՝ լցրու՛ ինձ Քո կատարյալ սիրով, որպեսզի ես էլ, Քեզ և ուրիշներին սիրելով, կարողանամ մի լուսարձակ շողացնել Քեզ վրա: Ամեն:

**Դառնա՛նք Ասծո շողացող լույսը և իր լույսը արածենք մեր շուրջը:**

Երկու հոգով ավելի լավ է, քան մեմակ... քանի որ եթե մեկն ընկնի, նրա ընկերը կկանգնեցնի նրան: (Ժող. 4..9-10)

## **ԵՐԲԵՔ ՄՆԱԿ ՉԵՆՔ**

**Մ**եզի Ֆերգուսենը դեռևս 1843թ.«էկոնոմիստ» պարբերականում բարձրացրել է միայնակ մարդկանց աճող թվի մասին մտահոգիչ հարցը՝ բերելով միայնություն վերաբերյալ տխուր օրինակներ:

Այս հարցը նորությունն չէ նաև մեր ժամանակներում: Ժողովողի գրքի առաջին իսկ էջերում ներկայացված է միայնության ցավը: Սոդոմոն թագավորին վերագրվող այս գրքում ցույց է տրվում այն մարդկանց ցավը, որոնք չունեն իմաստալից հարաբերություններ (4.7-8), ովքեր ունեն մեծ հարստություն, բայց չեն տեսնում դրա արժեքը, որովհետև չունեն մեկը, որի հետ կարողանան բաժնեկցել:

Հեղինակը միաժամանակ կարևորում է ընկերության գեղեցկությունը՝ գրելով, որ բարեկամները մեզ օգնում են ավելին անել, քան եթե առանձին գործենք (հմ. 9), աջակցում են կարիքի դեպքում (հմ.10): Ընկերները մխիթարում են իրար (հմ.11) և կարող են պաշտպանել դժվար պարագաներում (հմ.12):

Միայնությունը պայքար է: Աստված մեզ ստեղծել է մարդկանց ու բարեկամների հետ տալու և ստանալու համար: Եթե միայնակ ես զգում, աղոթի՛ր, որ Աստված օգնի քեզ, որպեսզի կարողանաս իմաստալից կապեր ստեղծել ուրիշների հետ: Քաջալերվի՛ր այն ճշմարտությամբ, որ հավատացյալը իրապես երբեք միայնակ չէ, որովհետև Հիսուսի Հոգին միշտ էլ մեզ հետ է (Մատթ. 28.20):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, երբ մեմակ զգամ, ինձ քաջություն տուր, որ բարեկամության առաջարկով մոտենամ ուրիշներին: Ամեն:

**Բնական է, որ միայնակ զգանք, սակայն մենք երբեք մեմակ չենք, որովհետև Տերը մեզ հետ է:**

Երուսաղեմ, Երուսաղեմ, ... քանի՜ անգամ ուզեցի քո երեխաներին հավաքել, ինչպես հավն է իր ծագերին բների տակ հավաքում: (Մատթ. 23.37)

## **ՄԱՐԴ ԼԻՆԵԼ**

**Տ**ասներկու տարեկան Ալբերտը, տեսնելով, որ իր վարպետը դադաղ պատրաստելիս արտասովում է, հարցրեց պատճառը: «Լալիս եմ, որովհետև հայրս ու պապս էլ էին լալիս», պատասխանեց նա: Փայտագործ Մինգերմանի պատասխանն իր օգնականին «Փոքր տունը արտավայրում» հեռուտատեսաչին ներկայացման գողտրիկ դրվագներից է: «Երբ դադաղ ես շինում, արցունքներդ հոսում են», - ասաց վարպետը և շարունակեց: «Ոմանք չեն լալիս՝ համարելով, որ դա թուլության նշան է: Իսկ ես հասկացել եմ, որ մարդը մարդ է, որովհետև կարող անորմ է լաց լինել»:

Զգացմունքային պահ էր, երբ Հիսուսը լացեց Երուսաղեմի համար՝ իր վիճակը նմանեցնելով մայր հավի՝ իր ձագերի հանդեպ հոգատարությանը (Մատթ. 23.37): Նրա աշակերտները հաճախ էին չփոփվել՝ լսելով նրա պատմությունները կամ տեսնելով նրա վարմունքը: Ուժեղ լինելու նրա դադափարն այլ էր: Նույնը պատահեց նաև այն ժամանակ, երբ նրանք Հիսուսի հետ տաճարից դուրս եկան: Ցույց տալով պարսպի մեծ քարերն ու պաշտամունքի վայրի սքանչելի զարդարանքները (24.1)՝ աշակերտները դրանում մարդկային հաջողության ուժն էին տեսնում: Մինչդեռ Հիսուսը տեսավ մի տաճար, որը կործանվելու էր:

Քրիստոսը մեզ ցույց է տալիս, թե առողջ մարդիկ գիտեն՝ երբ է պետք լաց լինել և ինչու: Նա լացեց, որովհետև իր Հայրը հոգում և իր հոգին հառաչում է իր զավակների համար, որոնք դեռ չեն տեսնում, թե ինչն է նրա սիրտը տանջում:

**Աղոթք** - Հայր, խնդրում եմ, փոխիր ուժի մասին իմ և ինձ նման զավակներիդ պատրանքները, որոնց կառչում ենք Քո սիրտը տանջող մտահոգությունների համար: Ամեն:

**Եթե Հիսուսը իր ցավն ու վիճակը հայտնելու համար լացեց, մե՞նք ինչու չլանք:**

Չեմ վախենա, քանզի հույսս դրել եմ Տիրոջ վրա: (Մաղմ. 55.4)

## **ՀԱՂԹԱՅԱՐԵԼ ՎԱԽԸ**

**Ո**ւորենը փոխադրվեց մի փոքր գյուղաքաղաք՝ հովվելու այդտեղի եկեղեցում: Սկզբում նրա մատուցած ծառայությունը հաջող էր ընթանում, սակայն շուտով եկեղեցու անդամներից մեկը նրա դեմ դուրս եկավ: Նրան զրպարտեցին, սուտ պատմություններ հասցնելով նույնիսկ տեղական թերթերին: Ուորենն ու իր կինն սկսեցին աղոթել: Եթե մարդիկ հավատային այդ ստերին, իրենց կյանքն ու ծառայությունը այդտեղ կավարտվեր:

Դավիթ թագավորը մի անգամ ունեցավ նման փորձառություն և ստիպված էր դիմազրավել թշնամական մի զրպարտություն: Նա ասաց.« Ամեն օր խոսքերս անարգեցին, նրանց չար խորհուրդներն իմ դեմ եղան»(Մաղմ. 55.6): Այս մշտական հետապնդումները վախի, սարսափի ու արցունքի մատնեցին նրան (Հմ.7): Բայց իր մղած պայքարի մեջ նա աղոթեց՝ ասելով.« Աստծու վրա դրի իմ հույսը ու չեմ սոսկալու. մարդն ինձ ի՞նչ կարող է անել» (Հմ.5):

Դավիթի մատուցած այս աղոթքը կարող է օրինակ դառնալ մեզ համար: Վախի ու զրպարտության ժամանակ մենք դառնում ենք Աստծուն, վստահում ենք Նրան:

Թերթը Ուորենի մասին զրպարտությունը չտպալարեց, ոչ էլ թուլեցիկները բաժանվեցին: Դու այսօր ի՞նչ պատերազմներ ես դիմազրավում: Դիմի՛ր Աստծուն: Նա պատրաստ է քեզ հետ միասին պայքարելու չարի դեմ:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, վախի մեջ եմ, ուստի վստահում եմ Քեզ: Մարմնավորները ի՞նչ կարող են անել ինձ, երբ Դու ինձ հետ ես և կռվում ես ինձ համար: Շնորհակալ եմ գալիք հաղթանակի համար: Ամեն:

**Վախեր մի՛ժ էլ կունենան: Թող Դավթի աղոթքը օգնի մեզ, որ կարողանանք դրանք հաղթահարել:**

Ես Քրիստոսի հետ խաչվեցի: Եվ կենդանի եմ, այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է իմ մեջ կենդանի: (Գաղ. 2.19-20)

## **ԿԵՆԴԱՆԻ ԵՄ ԱՅԼԵՎԱ ՈՉ ԹԵ ԵՍ...**

**Ա** կրոբատ և լարախաղաց Չարլզ Բլոնդին առաջինն էր, որ 1859-ի ամռանը ձգված ճոպանի վրա քայլելով հատեց Նիագարայի ջրվեժը: Հետագայում այդ չափազանց բարդ համարը նա մի քանի անգամ կրկնեց՝ ամեն անգամ մի նոր բարդություն ավելացնելով: Մի անգամ նույնիսկ այդ վտանգավոր ճամփորդությունը նա անցավ իր տնօրեն Հարրի Կոկորդին մեջքին վերցրած: Ճամփորդությունից առաջ փորձառու ակրոբատը խորհուրդներ տվեց Կոկորդին.«Միայն վերև նայի՛ր: Դու այլևս Կոկորդը չես, այլ Բլոնդին ես: Եթե ես ճոճվեմ, ինձ հետ դու էլ ճոճվիր: Մի՛ փորձիր ինքդ քեզ հավասարակշռել: Եթե այդպիսի բան անես, երկուսս էլ կմեռնենք»:

Պողոսը գաղատացի հավատացյալներին ասաց.«Դուք չեք կարող առանց Քրիստոսին հավատալու ապրել աստվածահաճո կյանք: Ահա բարի լուրը: Ոչ մի փորձով մենք չենք կարող վատակել դեպի Աստված մեր ճամփան: Ի՞նչ անել, կրավորական կեցվածքով սպասե՞լ: Ոչ: Մեր ուղին Քրիստոսին կառչելն է: Քրիստոսին կառչել նշանակում է մահվան դատապարտել հին, անձնակենտրոն կյանքը, ասես մեռած լինենք: Մենք դեռ շարունակում ենք ապրել, սակայն «Կենդանի եմ այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է իմ մեջ կենդանի» (Գաղ. 2. 20):

Ինչո՞ւ ենք փորձում ամուր ճոպանի վրայով քայլել: Աստված մեզ չի կանչել, որ լարի վրայով քայլելով գնանք դեպի Ինքը: Նա մեզ հրավիրել է կառչելու Իրեն ու այս կյանքի ընթացքն անցնել Իր հետ:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ ինձ համար անում ես այն, ինչ ես չեմ կարող անել: Թողնում եմ իմ ձևերով Քեզ հաճելի լինելը: Որքա՞ն երախտապարտ եմ, որ կարիք չունեմ Քո սերը շահելու: Ամեն:

**ԵՏ ԴԱՌՆԱՆԸ ԵՄ ԸՆԵՐՈՎ ԱՍՏՈՒՆ ԽԱՃԵԼԻ ԼԻՆԵԼՈՎ ԵՎ ԽԱՎԱՏՈՎ ԿԱՌՉԵՆԸ ՏԵՐ ՀԻՍՈՒՄԻՆ:**

Անսպառ են Տիրոջ ողորմությունները, նրա գթությունները չեն նվազում: Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը, Տեր: (Ողբ Եր. 3.22-23)

## **ԱՄԵՆ ԱՌԱՎՈՏ ՆՈՐԱՑՎԱԾ**

**Ե**ղբայր՝ Փոլը, փոքրուց լուսնոտություն ուներ: Պատանեկության տարիներին հիվանդությունն ավելի սաստկացավ: Գիշերները տանջալի դարձան նրա և ծնողներին համար, երբ նա սկսեց ունենալ վեց ժամից ավելի տևող նոպաներ: Բժիշկները որևէ դեղամիջոց չէին գտնում վիճակը մեղմելու և նրան գոնե օրվա մեծ մասը գիտակից վիճակում պահելու համար: Ծնողներս, աղոթելով Աստծուն, աղերսեցին, որ օգնի իրենց: Թեև Փոլն ու ծնողներս հոգեպես ու Ֆիզիկապես հոգնած էին, սակայն նրանք ամեն օր սկսեցին բավարար զորություն ստանալ Աստծուց: Ավելին, նրանք մխիթարություն գտան Աստվածաշնչի խոսքերի և մանավանդ Երեմիա մարգարեի ողբերի գրքում: Դրանում Երեմիան ողբ է բարձրացնում բաբելոնացիների ձեռքով Երուսաղեմի քանդվելու համար՝ ասելով. «Ինձ լեղի տվեց ուտելու և հարբեցրեց դառնությունմբ» (3.15): Սակայն Երեմիան չկորցրեց հույսը, հիշեց Աստծո ողորմությունները՝ նկատելով, որ Նրա կարեկցությունը «ամեն նոր առավոտի հետ բազմանում է» (Հմ.23): Ծնողներս էլ նույնը արեցին:

Ինչ էլ դիմագրավելու լինես, ամեն առավոտ հիշի՛ր հավատարիմ Աստծո մասին: Օրեցօր Նա նորացնում է մեր ուժը և մեզ հույս է տալիս, հանգստություն չնորհում, ինչպես տվեց ընտանիքիս: Մի քանի տարի անց արդեն մատչելի դարձավ նոր դեղամիջոց, և հնարավոր դարձավ Փոլի տևական նոպաները մեղմացնել՝ ընտանիքիս տալով հանգիստ ու հույս: Երբ մեր հոգին մեր մեջ թուլանա (Հմ.20), թող որ բոլորս հիշենք Աստծո խոստումները, թե իր գթությունները ամեն առավոտվա հետ բազմանում են:

**Աղոթք** - Հայր, սերդ ինձ բնավ չի թողնի: Երբ հուսահատ ու սպառված լինեմ, հիշեցրու՝ ինձ Քո ողորմություններն ու գթությունը: Ամեն:

**Նեղություններ ու արտադրանքներ մի՛ս կունենանք: Սակայն փառալերվելու ենք, որովհետև Աստված խոստացել է մեզ ամեն օր նորոգել:**

Այս օրենքների գիրքը քո շուրթերից չիեռացնես: (Յեսուս 1.8)

## **ԲՆԱՎ ՏԵՂԻ ՉՏԱՄ**

«**Ժամանակն անցավ**: Պատերազմը եկավ»: Հարավային Սուդանի եպիսկոպոս Սեմի Նիկոն այսպես բացատրեց կելիկո լեզվով Աստվածաշունչ ունենալու իրենց երկարամյա պայքարը: Տասնամյակներ առաջ եպիսկոպոսի պապը սկսել էր Սուրբ Գրքի թարգմանությունը, սակայն պատերազմներն ու անհանգիստ վիճակները անընդհատ խոչընդոտում էին: Այնուամենայնիվ եպիսկոպոսն ու հավատակից ժողովուրդը շարունակեցին ծրագրիր: Նրանց համառ աշխատանքը արդյունք տվեց: Երեք տասնամյակ անց կելիկո լեզվով Նոր Կտակարանը տրամադրվեց զաղթականներին, ինչը դարձավ տոնախմբություն առիթ: «Այս ժողովրդի նպատակասլացությունը անհնար է նկարագրել բառերով», - այսպես է բնութագրել այդ կոթողային գործի իրականացումը ծրագրի աշխատակիցներից մեկը:

Կելիկո ցեղի մարդկանց նվիրումը Աստծո խնդրած հավատարմություն օրինակ է: Աստված Հեսուսին պատվիրեց. «Այս օրենքների գիրքը քո շուրթերից չհեռացնես, այլ գիշեր-ցերեկ դրա մասին մտածի՛ր, որպեսզի գիտենաս կատարել բոլոր դրա մեջ գրվածները. այն ժամանակ հաջողակ կլինես, ուղիղ ճանապարհով կընթանաս և խելամտորեն կգործես» (Հեսուս.1.8): Նույնպիսի հավատարմությամբ Կելիկոյի մարդիկ շարունակեցին Աստվածաշնչի թարգմանությունը: Մենք էլ նրանց նման չհրաժարվենք Աստծո Խոսքի զորությունն ու իմաստությունը որոնելուց:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, Խոսքդ էական է իմ կյանքում: Տու՛ր ինձ քաղցն ու ծարավը՝ որոնելու, սերտելու, Քո Խոսքն իմանալու և Քո իմաստությունը հասկանալուց բնավ չհրաժարվելու համար: Ամեն:

**Յոզևուս աճ ու զարգացում ունենալու համար ավելի շատ ղեկավարդանք և ուսումնասիրենք Աստծո Խոսքը:**

Ով ապրում է Բարձրյալի աջակցությամբ, երկնքում կհանգչի Աստծու հովանու տակ: (Մաղմ. 90.1)

### **ԱՊԱՅՈՎ ՈՒ ՀԱՆԳԻՍ**

**Ո**րդիս՝ Զավիերը, շատ աշխույժ երեխա էր: Նա անվերջ շարժվում էր, վազում, բարձրանում, իջնում, գլորվում և նույնիսկ ցերեկվա հանգստի ժամին հրաժարվում էր քնել՝ դրա համար գտնելով զանազան պատրվակներ:

Ես, հասկանալով հանգստի կարևորությունը, ամեն կերպ օգնում էի, որ մի փոքր խաղաղվի, գրկում էի, հենում ինձ և քնեցնում:

Իմ հոգևոր կյանքի առաջին օրերին ես էլ էի անընդհատ շարժման մեջ: Կարծում էի, թե զբաղված լինելը ավելի ընդունելի է և կարևոր, անդադար աշխատում էի: Նկատի չէի առնում հանդարտությունն ու լուռությունը՝ կասկածելով, որ Աստված ամեն բան կարող է անել առանց իմ օգնության:

Բայց Նա է մեր ապաստանը և հոգ չէ, թե որքան հարցեր կամ անորոշություններ են մեզ շրջապատում: Մեզ սպասող ճանապարհը կարող է երկար ու ճնշող թվալ, բայց Նրա սերը պարուրում է մեզ: Նա լսում է մեզ, պատասխանում և մեզ հետ մնում հիմա և հավիտյան (Մաղմ. 90):

Մենք կարող ենք լուռ պահերը ողջունել և Աստծո անսասան սիրոն ու հարատև ներկայությանն ապավինել: Կարող ենք հանդարտվել և Իր մեջ հանգստանալ, որովհետև մենք ապահով ենք Իր անփոփոխ հավատարիմ պաշտպանության ներքո:

**Աղոթք** - Երկնավոր Դայր, շնորհակալ եմ, որ տրամադրում ես անվրեպ սիրո ապահով ապաստան: Ամեն:

**Նեղություններ ու ցավեր մի՞ո՞ւս էլ կուճենանք, բայց մենք ուճենք մի Ասված, որին մի՞ո՞ւս կարող ենք աղավինել:**



Քո առջևից գնացող Տերը չի լքելու և չի անտեսելու քեզ: (Բ. Օր. 31.8)

## **ՊԱՅՊԱՆՎԱԾ ԼԻՆԵԼ**

**Գ**արնանային նոր ցանքին պատրաստվելիս մաքրում էի պարտեզը: Մոլախոտերի մի խուրճ պոկեցի և հանկարծ տեսա, որ մի թունավոր օձ պառկած էր խոտերի մեջ այն դիրքով, որ ես կարող էի սխալմամբ բռնել: Զգուշորեն ետ վազեցի ու շնորհակալություն հայտնեցի Աստծուն, որ օձն ինձ չխայթեց: Եվ սկսեցի մտածել, թե քանի՜ անգամ է Նա ինձ փրկել վտանգներից, որոնց մասին ես նույնիսկ չեմ էլ իմացել:

Աստված հսկում է Իր ժողովրդին: Մովսեսը Խոստացյալ երկիրը մտնելուց առաջ իսրայելցիներին ասաց. «Քո առջևից գնացող Տերը չի լքելու և չի անտեսելու քեզ: Մի՛ երկնչիր, մի՛ վախեցիր» (Բ.Օր. 31.8): Նրանք չէին կարող տեսնել Աստծուն, սակայն Նա իրենց հետ էր:

Երբեմն դժվարություններ են լինում, որոնք մենք չենք հասկանում: Բայց կարող ենք մտաբերել նաև այնպիսի ժամանակներ, երբ Աստված մեզ պահպանել է առանց մեր իմանալու:

Աստվածաշունչը հիշեցնում է, որ Իր կատարյալ, նախախնամական հոգատարությունը միշտ կ'մնա իր ժողովրդի վրա: Նա մեզ հետ է ամեն օր (Մատթ. 28.20):

**Աղոթք** - Հավատարի՛մ Հայր, շնորհակալ եմ, որ ինձ հսկում ես ամեն օր: Խնդրում եմ՝ ինձ տուր շնորհք, որ իմ բոլոր գործողություններիս մեջ քայլեմ Քեզ հետ: Ամեն:

**Աստված մ՛ճատես հսկում է քեզ և քեզ հետ է:**

Հիսուսը նրան ասաց. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, և ինձ չճանաչեցի՞ր, Փիլիպպոս: Ինձ տեսնողը Հորը տեսավ: (Հովհ. 14.9)

### **ՃԱՆԱԶԵԼ ՀՈՐԸ**

**Պ**ատմում են, որ Լոնդոնի Ֆիլհարմոնիկի ղեկավար Սըր Թոմաս Բիչեմը մի օր պանդոկի նախասրահում հանդիպել է մի հետաքրքիր կնոջ: Նրա անունը չի հիշել, բայց համոզված լինելով, որ ծանոթ են՝ նա սկսել է զրուցել տիկնոջ հետ: Ցանկանալով ինչ-որ թեղ գտնել անորոշության կծիկը քանդելու համար՝ երաժիշտը հարցրել է, թե արդյո՞ք նրա եղբայրը լավ է, և արդյո՞ք նույն գործով է զբաղված: Կինը պատասխանել է. «Օ, շատ լավ է ու դեռ թագավորն է»:

Այսպիսի իրավիճակը, իրոք, ամոթալի կարող է լինել, սակայն դրուժյունը շատ ավելի լուրջ էր Հիսուսի աշակերտ Փիլիպպոսի համար: Նա, բնականաբար, ճանաչում էր Տեր Հիսուսին, բայց չէր կարողացել ամբողջովին գնահատել Նրան: Եվ ուզեց, որ Հիսուսը «ցույց տա իրենց Հորը»: Հիսուսը պատասխանեց. «Ինձ տեսնողը Հորը տեսավ» (Հովհ. 14.8-9): Որպես Աստծո միակ որդին՝ Հիսուսն ասում է, որ Ինքը կատարելապես ներկայացնում է Հորը. «Հավատացե՛ք ինձ, որ ես Հոր մեջ եմ, և Հայրն իմ մեջ է» (Հմ.10-11):

Եթե երբևէ մտածենք, թե ինչպիսին է Աստված Իր նկարագրով, անձով ու մարդկանց հանդեպ իր հոգածությունը, հարկավոր է նայել Տեր Հիսուսին: Հիսուսի նկարագիրը, բարությունը, սերը և գլխարկությունը ցույց են տալիս Աստծո նկարագիրը: Թեև Աստված մեր հասկացողությունից անդին է, սակայն մենք ունենք Հիսուսի միջոցով Իրեն ճանաչելու սքանչելի պարզեւր:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր, որ աճեմ իմ իմացությամբ ու գնահատեմ, թե Դու ով ես: Ամեն:

**Որքանով ես ճանաչում Ասծուն: Եթե ուզում ես ավելի իմանալ, նայի՛ր Տեր Հիսուսին:**

Քո լավ օրը բարիքների մեջ ապրիր, բայց հիշի՛ր, որ վատ օր էլ կա: Աստված դրանք միահյուսեց իրար: (Ժող. 7.14)

## **Ո՞Վ ԳԻՏԵ**

**Զ**ինական մի ավանդույթյան համաձայն՝ երբ Սայ Վենգը կորցրեց իր մրցանակակիր ձիուն, հարեանը ցավակցություն հայտնեց կորստյան համար: Բայց Սայն այնքան էլ մտահոգ չէր. «Մ՞Վ գիտե, թերևս բարի մի բան կա ինձ համար», - մտածում էր: Եվ զարմանալիորեն կորած ձին տուն վերադարձավ մեկ ուրիշ ձիու հետ: Այս անգամ հարեանը շնորհավորեց: Սայ Վենգն այս անգամ էլ ասաց. «Մ՞Վ գիտե, գուցե սա չար մի բան է ինձ համար»: Եվ այնպես պատահեց, որ որդին այդ նոր ձին վարելիս ընկավ ու ոտքը կոտրեց: Բնականաբար, սա վատ բան էր, սակայն այդ օրերին զորահավաք էր, պատերազմող բանակին ուժեղ զինվորներ էին պետք: Սայի որդուն ֆիզիկական վիճակի պատճառով բանակ չտարան, և նա փրկվեց ստույգ մահից: Այս չինական պատմության ենթատեքստում թաքնված է այն միտքը, որ դժվարություն մեջ կարող է թաքնված լինել օրհնություն և հակառակը: Ինչպես ժողովողի հեղինակն է մատնանշում. «Իմաստությունը ապրեցնում է այն ստացողին» (Հմ.7.13): Արդարև, մեզանից ոչ մեկը չգիտե, թե ապագան ինչ է պահել մեզ համար: Անբարենպաստությունը կարող է օգուտներ ունենալ, բարգավաճումը՝ վնասներ: Ամեն օրը նոր առիթներ, ուրախություններ, պայքարներ ու ցավեր է ստեղծում: Որպես Աստծո սիրելի զավակներ՝ կարող ենք մեր հանգիստը գտնել Իր գերիշխանության մեջ և չար ու բարի ժամանակներում Իրեն վստահել: Աստված մեզ հետ է մեր կյանքի բոլոր պարագաներում և խոստանում է մեզ Իր սիրո կարեկցությունը:

**Աղոթք** - Գերիշխան Աստված, շնորհակալ եմ, որ կանոնավորում ես կյանքս: Օգնի՛ր՝ կարողանամ փառաբանել Քեզ թե՛ բարի, և թե՛ չար օրերին՝ հավատալով, որ Դու ամեն բան բարու գործակից ես դարձնում: Ամեն:

**Բարի և չար օրեր մի՞ս է կլինեն, սակայն կարևոր է Ասծո վրա կենտրոնանալը:**

Ամեն մեկն իր գործն անի, ու ձեր ձեռքո՛վ աշխատեցեք: (Ա. Թես. 4.11)

## **ՉԲԱՂՎԵԼ ԻՄ ԳՈՐԾՈՎ**

**Տ**արիներ առաջ որդուս հետ լեռն էինք բարձրանում, երբ նկատեցինք փոշու մի ամպ: Մոտենալով տեսանք, որ մի մեղրակեր արջ հողի մեջ փոս էր փորում: Նրա գլուխն ու ուսերը փոսի մեջ էին, թաթերով եռանդազին փորում էր և ետևի ոտքերով հողը շարտում: Նա այնքան խորասուզված էր իր գործի մեջ, որ չնկատեց մեր մոտենալը:

Ես չզիմացա ու մի երկար փայտով ետևից բռնեցի արջին: Կենդանին վեր թռավ ու նայեց մեր կողմը:

Այդ դիպվածից ես հասկացա, որ ուրիշների գործին խառնվելը լավ բան չէ: Դա հատկապես ճիշտ է հավատակիցների հետ հարաբերություններում: Պողոս առաքյալը թելադրում ու քաջալերում է թեսաղոնիկեցիներին. «Եվ ջանաք հանդարտ լինել: Եվ ամեն մեկն իր գործն անի, ու ձեր ձեռքո՛վ աշխատեցեք» (Ա. Թես. 4.11): Ուրիշների համար աղոթելը, Աստծո շնորհքով իր Սուրբ Խոսքը բաժնեկցելը, տարբեր առիթներով ազնիվ խոսքեր ասելը շատ լավ է: Սակայն շատ կարևոր է նաև ապրել լուռ և չխառնվել ուրիշների կյանքին: Նման վարմունքը օրինակ կարող է դառնալ նրանց համար, ովքեր Աստծո ընտանիքից դուրս են (Հմ.12): Մեր կոչումն է «սիրել իրար» (Հմ.9):

**Աղոթք** - Զայր, սովորեցրու՛, թե ինչ է նշանակում ուրիշներին սիրելը: Ամեն:

**Ուրիշների գործերին խառնվելու փոխարեն մեր գործերը կատարենք և Աստծուն փառաբանենք:**

ես՝ Դանիելս, խելամուռ եղա այն տարիների թվագրությամբ... Ես երեսու դարձրի դեպի իմ Տեր Աստվածը՝ խնդրելու համար աղոթքներով ու աղաչանքներով, պահեցողությամբ ու քուրձ կրելով: (Դան. 9.2-3)

## **ԹԱԽԱՆՁԵԼ ԱՍԾՈՒՆ**

**Ը**նտանիքի առավոտյան աղոթքի պահին ավարտվեց անակնկալ մի հայտարարություն: Հայրը նոր էր արտասանել «Ամեն», երբ հինգ տարեկան Քեյթլինն ասաց.«Ես էլ Լոզանի համար աղոթեցի, որովհետև աղոթքի պահին իր աչքերը բաց էին»: Վստահ եմ՝ տասը տարեկան եղբոր՝ աղոթքի պահին ճիշտ ձևով չկանգնելու համար աղոթելը այն չէ, ինչ Աստվածաշունչը պահանջում է, երբ կոչ է անում բարեխոսական աղոթք մատուցել: Բայց նվազագույնը, որ կարող ենք սովորել այդ փոքրիկից, ուրիշների համար աղոթելն է:

Աստվածաշնչի ուսուցիչ Օսվալդ Չեմբերսը ևս շեշտում է ուրիշների համար աղոթելու կարևորությունը, երբ ասում է. «Բարեխոսությունը ինքզ քեզ Աստծո տեղ դնելը և Նրա միտքն ու հեռանկարն ունենալն է»: Բարեխոսական աղոթքի լավ օրինակ ենք գտնում Դանիելի մարգարեության մեջ: Մարգարեն շատ լավ հասկացել էր Աստծո ճնշող նախատեսությունը, որ հրեա ժողովուրդն ունենալու էր յոթանասուն տարվա գերություն մեջ (Եր.25.11-12): Բայց անդրադառնալով, որ այդ տարիներն արդեն ավարտվում են, Դանիելն աղոթեց և նշեց Աստծո պատվիրանները (Դան. 9. 4-6), խոնարհեցրեց իրեն (Հմ.8), պատվեց Աստծո նկարագիրը (Հմ.9), խոստովանեց մեղքերը (Հմ.15) և Նրա ողորմությունը վստահեց, երբ աղոթում էր Իր ժողովրդի համար (Հմ.18): Եվ անմիջապես Աստծուց ստացավ պատասխան (Հմ.21):

Ոչ բոլոր աղոթքներն են նման պատասխան ունենում, բայց աղոթքները քաջակերում են, որ մենք էլ ուրիշների համար վստահորեն դիմենք Աստծուն:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր, որ ուրիշների համար աղոթելիս Քեզ ավելի լավ ճանաչեմ և գտեմ աղոթքներս Քո կամքի լույսի ներքո: Ամեն:

**Ուրիշների համար մի՛ս աղոթելու եմ, բայց անհրաժեշտ է, որ մեր աղոթքները Աստծո կամո՞րդ պատասխան ունենան:**

Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք: (Գովհ. 20.31 )

## **ԳՐԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ**

«Տերն իմ բարձր աշտարակն է: Երգելով թողեցինք մեր գաղթականայանը», - 1943թ. սեպտեմբերի 7-ին էթթի Հիլեսումը այս բառերը գրեց մի թղթի վրա ու դուրս նետեց գնացքի պատուհանից: Դրանք նրանից լաված վերջին բառերն էին: Նոյեմբերի 30-ին նա սպանվեց Օսվենցիմի համակենտրոնացման ճամբարում: Հետագում ճամբարում նրա գրած օրագրերը թարգմանվեցին ու հրատարակվեցին: Դրանցում արտացոլված էին նացիստական Գերմանիայի դաժան ու անմարդկային քայլերը Աստծո աշխարհի գեղեցկության հանդեպ: Այդ օրագրերը թարգմանվել են աշխարհի 67 լեզուներով՝ որպես պարզև բոլոր այն մարդկանց համար, ովքեր կկարդան ու կիմանան բարու և չարի մասին:

Հովհաննես առաքյալը չանտեսեց Հիսուսի աշխարհի նկատմամբ եղած կոպիտ իրողությունները և գրեց թե՛ Հիսուսի կատարած բարիքների, և թե՛ Նրա դիմագրաված ծանր մարտահրավերների մասին: Նրա Ավետարանի վերջին խոսքերը մատնանշում են գրքի ամբողջ ենթատեքստն ու նպատակը: Հիսուսի կատարած շատ բաների մասին Հովհաննեսը չի գրել (Հմ. 20.30): «Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք» (Հմ. 31), - ասում է նա: Հովհաննեսի «օրագիրը» վերջանում է հաղթական շեշտագրմամբ. «Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծու Որդին»: Ավետարանի այդ խոսքերը մեզ առիթ են շնորհում, որ հավատանք ու «կյանք ունենանք Իր անունով»:

Ավետարանները օրագրային արձանագրումներ են Աստծո՝ մեր հանդեպ ունեցած սիրո մասին: Դրանք խոսքեր են, որ պետք է կարդալ, հավատալ ու փոխանցել, որովհետև դրանք մեզ առաջնորդում են դեպի կյանք ու դեպի Հիսուսը:

**Աղոթք** - Գթասիրտ Աստված, շնորհակալ եմ Քո Խոսքի պարզև համար, որ գրված է հավատարիմ ձեռքով, որպեսզի հավատամ ու կյանք ունենամ: Ամեն:

**Ասվածառուցը Ասծո ու Տե՛ր Հիսուսի օրագիրն է: Արժե այդ գիտակցությամբ կարդալ այն ու հավասալ նրան:**

Գրամայել է ձյունի՜ն՝ «Իջի՛ր լեռան վրա», նաև ձմեռային անձրևներից, որ ցույց տան իրենց զորությունը»։ (Յոթ. 37. 6)

## **ՉՅԱՆ ՄՈՒՄԱՆ**

«**Օվրը դը ուայն**» երաժշտական խումբը մի երգ ունի, որում նկարագրվում է ձմռանը Յինցինատի քաղաքի կրած փոփոխությունները։ «Երբ գալիս է առաջին ձյունը, թվում է՝ ինչ-որ սուրբ բան է պատահում, ասես մի նոր սկիզբ լինի։ Քաղաքը դանդաղում է, և լուռություն է իջնում», - երգում է խմբի հիմնադիր Լինֆորդ Դեթֆայլերը։

Եթե շատ ես տեսել ձյան գալը, քեզ համար էլ հասկանալի կլինի, թե ինչպես կարելի է ներշնչվել դրանով. երբ կամաց-կամաց ձյունը ծածկում է գորշ շրջապատը, և լուռություն է դառնում իշխողը։ Երբ մի քանի բույսեր ձմռան խավարը լուսավորվում է՝ պարզեցնելով հրճվածք։ Հորի բարեկամներից Եղիուսը, որը Աստծո մասին դրական կարծիք ուներ, նշել է, թե ինչպես են Աստծո ստեղծագործությունները իրենց վրա հրավիրում մեր ուշադրությունը։ «Ամենագորը որոտալու է սքանչելի ձայնով, քանի որ կատարել է մեծամեծ բաներ, որ մենք չգիտենք» (Հոբ. 37.5)։ «Հրամայել է ձյունին՝ «Իջի՛ր լեռան վրա», նաև ձմեռային անձրևներին, որ ցույց տան իրենց զորությունը» (Հմ. 6)։ Այդպիսի չքեղությունը կարող է մեզ պարտադրել մի պահ դադար առնել և հասկանալ. «Խափանում է ամեն մարդու ձեռքի գործը, որպեսզի յուրաքանչյուր ոք իմանա իր թույլ լինելը» (Հմ.7)։

Բնությունը երբեմն մեր ուշադրությունը գրավում է այնպիսի ձևերով, որ մենք չենք սիրում։ Անկախ մեզ հետ պատահածներից ու մեր տեսածներից՝ յուրաքանչյուր վայրկյանը կարող է ներշնչել մեր պաշտամունքը։ Բանաստեղծի սիրտը սուրբ լուռություն է հրավիրում մեր սրտերը։

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր, որ կարողանամ ամեն բանի մեջ Քո ձեռքը տեսնել։ Տու՛ր ինձ սիրտ, որ կարողանամ գնահատել Քո հիանալի գործերը։ Ամեն։

**Այսօր նայի՛ր քեզ հեռու դաստիարակներին ու փորձի՛ր դրանց մեջ տեսնել Աստծո հրաշագործությունը։**

Չենց այն, ինչ սովորեցիք, ընդունեցիք, լսեցիք ու իմ մեջ տեսաք, այն արեք: (Փիլ. 4.9)

## **ԱՅՍ ԲԱՆԵՐՆ ԱՐԵՔ**

**Օ**գնում էի որդուս՝ թվաբանության առաջադրանքները կատարել: Նկատեցի, որ նա դժկամությամբ էր լուծում նույն տիպի խնդիրները՝ ասելով, թե ինքը դրանք գիտի: Բայց ես պնդեցի, որ շարունակի, որովհետև մտապատկերում ունեցածը հարկավոր է գործնականացնել:

Պողոսը այդպիսի գործնականացման մասին էր գրում իր փիլիպպեցի բարեկամներին. «Այն, ինչ սովորեցիք, ընդունեցիք, լսեցիք ու իմ մեջ տեսաք, ա՛յն արեք (Փիլ.4.9): Նա հինգ բան է նշում, որ պատվիրել էր անել Եվոզիային ու Սյունտիքին. հաշտություն, ուրախություն, ազնվություն, ազոթք և կենտրոնացում (Հմ.2-8): Սրանք այն հատկանիշներն են, որ մեզ պատվիրված է գործնականում կիրառել՝ ապրելով որպես Հիսուսին հավատացողներ: Այդ առաքինությունները պետք է գործնականում ցույց տրվեն, որպեսզի հնարավոր լինի զարգացնել:

Ավետարանի բարի լուրը, որը Պողոսն արդեն հայտնել էր փիլիպպեցիներին, այն է, թե «Աստված է, որ ձեր մեջ ներգործում է. կամենալն էլ, անելն էլ իր հաճության պես» (2.13): «Եվ իմ Աստվածը թող իր հարստության չափով ձեր կարոտությունը լցնի՝ փառքով Քրիստոս Հիսուսի մեջ» (4.19):

**Աղոթք** - Տե՛ր, ինձ շնորհ տու՛ր, որ կարողանամ Սուրբ հոգու զորությամբ Քո ճամփով քայլել: Ուժ տու՛ր, որ կարողանամ մշակել կյանքիս հողը, որպեսզի Պոգու պտուղները երևան իմ մեջ: Ամեն:

**Եթե ուզում եմք նմանվել Չիսուսին, Սուրբ Պոգու զորության կարիքն ունենմ:**



Որովհետև բոլորն իրենց ավելացածից զցեցին, մինչդեռ սա իր չքավորությունից զցեց այն ամենը, ինչ ուներ, իր կյանքի ամբողջ ապրուստը: (Մարկ. 12.44)

### **ԲԱԺԻՆ ԶԱՆԵՆՔ ՄԵՐ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆԻՑ**

**Ո**ւորեն Բաֆետը և Բիլ ու Մելինտա Քեյթսները ձեռնարկեցին «Տալու ուխտը» շարժումը՝ խոստանալով դրան նվիրել իրենց ունեցվածքի կեսը: 2018 թվականից ի վեր նրանք նվիրել են 92 միլիոն դոլար: Հետազոտող հոգեբան Փոլ Փիֆին հետաքրքրեց, թե մարդիկ ինչպես են նվիրատվություն կատարում: Ուսումնասիրեց և տեսավ, որ չունևորները 44 տոկոսով ավելի են հակված տալու, քան հարուստները: Նրանք, որոնք իրենց մաշկի վրա են զգացել աղքատությունը, հաճախ ավելի առատաձեռն են եղել:

Հիսուսը գիտեր այդ մասին: Տաճար մտնելով՝ նա դիտեց, թե մարդիկ ինչպես էին նվերները գցում գանձանակի մեջ (Մարկ. 12.41): Հարուստները շատ բան էին գցում, բայց մի աղքատ կին գանձանակը գցեց իր ունեցած վերջին երկու լուման: Ապշահար Հիսուսը անմիջապես հավաքեց աշակերտներին և ասաց. «Ճամարիտ եմ ասում ձեզ, որ այս աղքատ որբևայրին գանձանակը գցողների մեջ ամենաշատը գցեց» (Հմ.43): Ապա զարմացած աշակերտներին նա բացատրեց. «Որովհետև բոլորն իրենց ավելացածից զցեցին, մինչդեռ սա իր չքավորությունից զցեց այն ամենը, ինչ ուներ, իր կյանքի ամբողջ ապրուստը (Հմ.44):

Մենք կարող ենք տալու համար քիչ բան ունենալ, բայց Հիսուսը մեզ առաջարկում է մեր չունեցածից տալ: Այն կարող է ուրիշների համար խղճալի թվալ, բայց մենք տալիս ենք այն, ինչ ունենք, և Աստված մեր ընծաներն ընդունում է մեծ ուրախությամբ:

**Աղոթք** - Զայր, չգիտեմ՝ բավարա՞ր է արդյոք իմ տալիքը, որովհետև իմ նվերները կարող են չնչին ու անարժեք դիտվել: Բայց ես այստեղ եմ իմ ողջ եռօրյամբ: Ընդունու՞մ ես ինձ: Ամեն:

**Ի՞նչ կարող ես այսօր օալ Հիսուսին, նույնիսկ երբ մտածում ես, որ աս բան չունես:**

Ես ձեզ վրա կենդանի շունչ եմ բերելու: (Եզ.37.5)

### **ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՇՈՒՆՉ**

**Ե**րբ Թի Ունը հիվանդացավ հազվագյուտ մի հիվանդու-  
թյամբ, որից թուլացել էին մկանները, և քիչ էր մնում մա-  
հանար, հասկացավ, որ շնչելու կարողությունը իսկական  
պարզև է: Մի շաբաթից ավելի յուրաքանչյուր երկու ըոպեն  
մեկ հարկ էր լինում նրան միացնել շնչառական սարք:

Թի Ունը հրաշքով բուժվեց, և սովորեց հետագայում այլ կերպ  
նայել կյանքի մարտահրավերներին. «Պարզապես խոր շունչ եմ  
քաշում և փառք եմ տալիս Աստծուն, որ կարողանում եմ»:

Որքա՛ն հեշտ է կենտրոնանալ մեզ անհրաժեշտ բաների վրա  
և մոռանալ, որ կյանքում եղած փոքր կամ աննշան թվացող  
բաները կարող են մեծագույն հրաշքը լինել: Եզեկիելի տեսիլ-  
քում (Եզ.37.1-14) Աստված մարգարեին ցույց տվեց, որ միայն  
Ինքը կարող է չոր ոսկորներին կյանք տալ: Նույնիսկ ջղերը,  
միսն ու մաշկը կազմելուց հետո «դրանց մեջ դեռ շունչ չկար»  
(Հմ.8): Եվ միայն երբ Աստված շունչ տվեց, նրանք կենդանա-  
ցան (Հմ.10):

Այս տեսիլքը պարզաբանում է ավերածություններից հետո  
Իսրայելը վերահաստատելու Աստծո տված խոստումը: Նաև  
հիշեցնում, որ մեր ունեցած մեծ ու փոքր ամեն ինչ, քանի դեռ  
Աստծո տված շունչը չունի, անօգուտ է:

Մտածո՞ւմ ես այսօր Աստծուն շնորհակալություն հայտնել  
ստացածդ նույնիսկ ամենապարզ օրհնություն համար: Մեր  
ամենօրյա պայքարների մեջ արժե երբեմն կանգ առնել՝ խոր  
շունչ քաշելու և ասելու. «Բոլո՛ր հոգիներ, օրհնեցե՛ք Տիրոջը»  
(Սաղմ. 150.6):

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո տված յուրաքանչյուր շնչի  
համար: Շնորհակալ եմ կյանքում եղած ամենափոքր բաների ու  
մեծագույն հրաշքների համար: Ամեն:

**Ինչի՞ համար կուզենաս այսօր փառաբանել Ասծուն: Վստահ եմ՝  
ցաս բաներ կան:**

Աստված օրհնեց նրանց:...Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ լավ է: (ԹՈՒ. 1. 28.31)

## **ԱՍՏԾՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԻՐՔԸ**

**Դ**ուրս ելա զբոսնելու և հանդիպեցի իմ նոր փոքրիկ հարեանին: «Անուռնա Զենեսիս է, ես վեց ու կես տարեկան եմ», - ասաց նա:

- Ի՞նչ լավ անուն է, այդպես է կոչվում Աստվածաշնչի գրքերից մեկը, - ասացի:

- Աստվածաշունչն է ի՞նչ է, - հարցրեց զրուցակիցս:

Ես բացատրեցի, որ դա գիրք է այն մասին, թե Աստված ինչպես է ստեղծել աշխարհն ու մարդկանց, և թե ինչքա՛ն է նա սիրում մեզ:

- Ինչու՞ Նա ստեղծեց աշխարհը, մարդկանց, մեքենաներն ու տները: Իսկ այդ գրքում իմ պատկերն էլ կա՞, - հարցրեց երեսուրտն: Եվ դա իմ ժպիտն առաջացրեց:

Թեև իմ նոր բարեկամի և մեր բոլորի պատկերները չկան Աստվածաշնչում, բայց մենք Աստծո պատմության գրքի մեծ մասն ենք կազմում: Մենք 1-ում տեսնում ենք, որ «Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով» (Հմ.27): Աստված նրանց հետ քայլում էր պարտեզում և զգուշացրեց, որ չենթարկվեն փորձություն, չգայթակղվեն աստվածների նման լինելու և բարին ու չարը իմանալու մտքով (զլ.3): Այնուհետև Իր գրքում ասվում է, թե ինչպես Իր Որդին՝ Հիսուսը, եկավ մեզ հետ քայլելու, բերեց մեր փրկության և Իր ստեղծագործության վերականգնման ծրագիրը:

Մեր Արարիչն ուզում է, որ մենք ճանաչենք Իրեն, խոսենք Իր հետ և նույնիսկ հարցեր տանք, - սովորեցնում է Աստվածաշունչը: Նա սիրում է մեզ մեր պատկերացրածից շատ ավելի:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմ, որ ինձ Քո պատմության մի մասն ես դարձնում: Թող որ սիրեմ Քեզ և ուրիշներին, ինչպես Դու ես ինձ սիրում: Ամեն:

**Դու էլ ես Աստծո պատմության մաս կազմում: Ասված բեզ ցույնդես սիրում է:**

Եվ նրանց ասաց. «Ինչո՞ւ եք այդպես վախկոտ, ինչպե՞ս է, որ հավատ չունեք» (Մարկ. 4. 40):

## **ՎԱԽԻ ՓՈԹՈՐԻԿՆԵՐ**

Հեռուստատեսային մի հաղորդման ժամանակ մի կին, ցանկանալով իմանալ, թե մասնակիցներից մեկը ինչ հաղորդումներ է նախընտրում, հարցրեց. «Ի՞նչ ես փնտրում, Մարկ»։ Վերջինը, առանց խորանայու, պատասխանեց. «Իմ անձի մեկ տարբերակը, որ վախի վրա հիմնված որոշում չկայացնի»։

Անսպասելի էր, որ հեռուստատեսային հաղորդումը պիտի այսչափ գրավեր ուշադրությունս։ Բայց ես ինձ նմանեցրի խեղճ Մարկին, որովհետեւ ես էլ երբեմն ամոթով եմ մնում, զգալով, որ տվյալ գործողության մեջ վախն է ինձ առաջնորդում։

Հիսուսի աշակերտները նույնպես վախի գորություն փորձառությունն ունեցան։ Մի օր, երբ նրանք նավարկում էին Գալիլեայի ծովի վրա (Մարկ. 4.35), «մեծ փոթորիկ եղավ» (Հմ.37)։ Սարսափը պատեց նրանց ու նկատեցին, որ Հիսուսը անտարբեր քնած էր։ «Նրան արթնացրին ու ասացին. «Վարդապե՛տ, հոգդ չէ՞, որ կորչում ենք» (Հմ. 38)։

Վախը կուրացրել էր աշակերտներին, ու նրանք չէի տեսնում Հիսուսի բարի նպատակները։ Քամուն ու ալիքներին սաստեղաց հետո (Հմ.39) Քրիստոսը հարցրեց աշակերտներին. «Ինչո՞ւ եք այդպես վախկոտ, ինչպե՞ս է, որ հավատ չունեք» (Հմ. 40)։

Մեր կյանքում էլ են հայտնվում կատաղի փոթորիկներ։ Սակայն Հիսուսի հարցերը կարող են մեզ օգնել, որ մեր վախերը կառավարենք։ Դրա համար Նա առաջարկում է անվանել մեր վախերը և այդ կուրացնող զգացումները հանձնել Իրեն՝ խնդրելով, որ մեզ տա աչքեր, որպեսզի տեսնենք, թե Ինքը մեզ ինչպես է առաջնորդում։

**Աղոթք** - Սիրո՞ղ Փրկիչ, շնորհակալ եմ, որ փոթորիկների ժամանակ միշտ մեզ հետ ես։ Կյանքի սարսափելի պահերին օգնի՛ր, որ կարողանամ խոսել քեզ հետ և վախերս քեզ հանձնել։ Ամեն։

**Կյանքում փոթորիկների տակաս չի լինի։ Կարևորը Աստուծո՞ւ վստահելն ու Իրեն հանձնվելն է։**



Բայց դուք ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ:(Ա. Պետ. 2.9)

### **ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ**

**Տ**ասնամյակներ առաջ դոկտ. Զերի Մոտոն Հայտնաբերեց մի «հոգատարության նամակի» զորությունը: Նրա հետազոտությունը ցույց տվեց, որ հուսահատ և նախկինում ինքնապանություն փորձ կատարած մարդկանց մի նամակ ուղարկելը նրանց թիվը կեսով նվազեցնում է: Վերջերս որոշ բժշկական հոգատար կազմակերպություններ, որպես հետևողական բուժման եղանակ, կիրառում են այն, «հոգատարության» պատգամներ, քարտեր և նույնիսկ սոցիալական լրատվություն են հղում խիստ ընկճված մարդկանց: Աստվածաշնչի գրքերից 21-ը իրականում սիրո ու կարեկցանքի նամակներ են՝ ուղղված առաջին դարի հավատացյալներին, որոնք տարբեր պատճառներով պայքարում էին իրենց հավատի համար: Պողոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը գրեցին նամակներ՝ բացատրելու համար, թե որոնք են հավատի ու պաշտամունքի հիմքերը և ինչպես կարելի է լուծել վեճերն ու կերտել միասնականություն:

Պետրոս առաքյալը, սակայն, գրեց հատկապես այն հավատացյալներին, որոնք հայածվում էին Հռոմի կայսեր ձեռքով: Նա հիշեցրեց Աստծո համար իրենց ունեցած էական արժեքը՝ այսպես նկարագրելով նրանց. «Բայց դուք ընտիր սերունդ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ (Ա.Պետ. 2.9): Հավատացյալները հատկապես խանդավառվեցին, երբ իմացան իրենց հանդեպ Աստծո նպատակի մասին.«Որպեսզի նրա՝ առաքինությունները քարոզեք, ով ձեզ խավարից դեպի իր զարմանալի լույսը կանչեց» (Հմ.9): Մեր մեծ Աստվածը մեզ համար հոգատար նամակներով լի մի սքանչելի գիրք է գրել: Կարդացե՛ք իր նամակներն ու փոխանցե՛ք դրանք ուրիշներին հետ:

**Աղոթք** - Տե՛ր Աստված, շնորհակալ եմ Աստվածաշնչում գետնեղված հոգատար նամակներիդ համար: Ամեն:

**Աստվածաճնչում գրված խոսքերը հոգասար նամակներ են: Ուսի՛ր արժե դրանք կարդալ ու մատյա՛հել:**

Սիրտս ու մարմինս մաշվեցին, իմ սրտի՛ Աստված, հավիտյան ինձ բաժին ընկած Աստված: (Մաղմ.72.26)

### **ՋՈՐԱՎՈՐ ՍԻՐՏԸ**

**Տ** իլիպ Եենսիի և Պոլ Բրենդի համահեղինակած գրքում ասվում է.«Կոլիբրիի սիրտը մի քանի գրամ է և ըրպեռում տրոփում է 800 անգամ: Կապույտ կետի սիրտը կես տոննա է և մեկ ըրպեռում 10 անգամ է խփում: Ի տարբերություն այդ երկուսի՝ մարդկային սիրտն իր գործը կատարում է օրական 100 հազար զարկով (ըրպեռում 65-70 զարկ) և անդադար աշխատում է՝ մեզանից շատերին շնորհելով 70 և ավելի տարիների կյանք:

Հիանալի սիրտը, որը բարությունը է բնորոշվում, մեր կյանքի ընթացքում զորացնում է մեզ: Բայց թե՛ իրական, և թե՛ փոխաբերական իմաստներով մեր սիրտը կարող է նաև ձախողվել: Ի՞նչ կարող ենք անել:

Սաղմոսերգու Ասափը, որը հավատի առաջնորդ էր Իսրայելում, Սաղմոս 72-ում ընդունում է, որ ճշմարիտ զորությունը գալիս է ուրիշ տեղից. «Սիրտս ու մարմինս մաշվեցին, իմ սրտի՛ Աստված, հավիտյան ինձ բաժին՝ ընկած Աստված» (Հմ.26): Սաղմոսերգուն ճիշտ էր: Ապրող Աստվածը մեր գերազույն ու հավիտենական զորությունն է: Որպես երկնքի ու երկրի Արարիչ՝ նա չունի Իր կատարյալ զորության որևէ սահմանափակում:

Մեր դժվարությունների ու մարտահրավերների ժամանակ թող գտնենք այն, ինչը Ասափը սովորեց իր անձնական պայքարների մեջ. Աստված մեր սրտերի ճշմարիտ զորությունն է: Կարող ենք այդ զորությունը հանգստանալ ամեն օր:

**Աղոթք** - Երկնավոր Դայր, շնորհակալ եմ, որ իմ տկարության ժամանակ Դու զորավոր ես: Երբ ճնշված եմ, Դու բավարար ես, երբ շփոթված եմ, Դու կատարյալ հստակություն ունես: Ամեն:

**Երբ զգաս, որ սիրտդ նվաղում է, կարող ես զորություն գտնել հոգասար Դոր ձեռքերում:**

Որոնց Աստված կամեցավ ցույց տալ, թե ինչ է այս խորհրդի փառավոր ճոխությունը հեթանոսների մեջ, որ է՝ Քրիստոսը ձեր մեջ, այն փառքի հույսը: (Կող. 1.27)

## **ՀԻՍՈՒՍՆ Է**

**Մ**իացյալ Նահանգների հեռուստատեսային սիրված հաղորդաշարերից մեկին՝ «Ամերիկյան ունի տաղանդ» մրցույթին մասնակցում էր հինգ տարեկան մի աղջնակ, որի շատ գեղեցիկ կատարումը լսելով՝ ժյուրիի անդամներից մեկը նրան նմանեցրեց 1930-ականների շատ հայտնի երգող ու պարող մի երեսայի և նկատեց. «Կարծես Շրլի Թեմփլը քո մեջ լինի»: Փոքրիկի պատասխանը անակնկալ էր բոլորի համար: Նա ասաց. «Ոչ թե Շրլի Թեմփլը, այլ Հիսուսը»: Ես հիացած էի այդ աղջնակի խոր գիտակցումով, թե իր ուրախությունը գալիս է Հիսուսի՝ իր մեջ ապրելուց: Աստվածաշունչը մեզ վստահեցնում է մի ճշմարտության մասին, թե բոլոր Իրեն հավատացողները ոչ միայն Աստծո հետ լինելիք հավիտենական կյանքի խոստում են ստանում, այլև Հիսուսի՝ իրենց մեջ ապրող ներկայությունը, Իր Հոգու միջոցով նրանց սրտերը դառնում են Հիսուսի բնակարանը (Կող.1.27, Եփ. 3.17):

Հիսուսի ներկայությունը մեր սրտերում մեզ լցնում է անհաշիվ պատճառներով շնորհակալություն հայտնելու (Կող. 2. 6-7), նպատակով ու կորովով ապրելու (1. 28-29), թե՛ հրճվանքի, և թե՛ դժվարության պահերին մեր սրտերում ուրախություն մշակելու (Փիլ. 4.12-13) ձգտումներով: Քրիստոսի Հոգին մեր սրտերին է պարզեւում այն հույսը, որ Աստված գործում ու ամենայն բարու գործակից է դարձնում մեզ նույնիսկ այն ժամանակ, երբ մենք չենք տեսնում (Հռոմ. 8.28): Իսկ Հոգին խաղաղություն է տալիս, որը իշխում է՝ հակառակ մեր շուրջը եղող քառասային իրավիճակի (Կող. 3.15): Թող մեր սրտերում իշխող Տեր Հիսուսի ներկայությունը մեր միջոցով փայլի, որպեսզի ուրիշներն էլ տեսնեն նրան:

**Աղոթք** - Տեր Հիսուս, շնորհակալ եմ, որ իմ սիրտը դարձնում ես Քո բնակարանը: Խնդրում եմ օգնի՛ր, որ կյանքս Քո ներկայությունն արտացոլի: Ամեն:

**Հիսուսի ներկայությունը մեր սրտում թող փառալերի մեզ, որ Իրեն ցույց ասնի ուրիշներին:**

Նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար: (Եփ. 2.10)

## **ՓՈՔՐ, ԲԱՅՑ ԴՉՈՐ**

Հյուսիսային Ամերիկայի Սոնարան անապատում երբեմն-երբեմն լսվում է սկզբում մեղմ, բայց աստիճանաբար ուժեղացող մի գոռգոռոց: Դժվար է գտնել այդ ձայնն արձակողին, որովհետև դա փոքր, միաժամանակ ուժեղ մորեխամուկն է, որին անվանում են նաև «գայլամուկ»: Մթուկյան մեջ լուսնի վրա գոռալով՝ նա իր բնակության տարածքն է հաստատում:

Այս եզակի կրծողը նաև գիշատիչ է և ուտում է իր ճանապարհին հանդիպող այլ արարածներին: Իսկ օրինակ կարիճների դեմ կռվելիս նա նույնիսկ «հակաթույն» ունի. ոչ միայն դիմադրողականություն ունի այդ միջատի թույնի հանդեպ, այլև այն կարողանում է վերածել ցավազրկող դեղամիջոցի:

Վայրի միջավայրում այս փոքրիկ կենդանու գոյատևելու ձևի մեջ ինչ-որ ներշնչող բան կա: Ինչպես բացատրում է Պողոսը եփեսացիներին ուղղված նամակում, նույնաման մի վարդապետությունն էլ կա Աստծո՝ Իր ժողովրդին ձևակերտելու մեջ: Մեզանից յուրաքանչյուրը «Նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար» (Եփ. 2.10): Հոգ չէ, թե Աստված ինչ պարզեցրել է քեզ տվել, դու էլ շատ բան ունես վերադարձնելու: Վստահությամբ ընդունելով Իր արածները՝ պետք է դառնաս Իր մեջ եղած հույսի ու կյանքի կենդանի վկան:

Ուստի երբ քո կյանքում դիմագրավում ես որևէ սպառնալիքի, քաջալերվի՛ր: Կարող ես փոքր զգալ, սակայն Հոգու տված պարզեցրով ու զորությամբ Աստված կարող է քեզ օգտագործել հզոր բաներ անելու:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ հիանալիորեն կերտել ես, որպեսզի ապրեմ ուրախությամբ ու հատուկ նպատակով: Օգնի՛ր՝ հավատամ ու քաջություն ունենամ ինքս ինձ ճանաչելու: Ամեն:

**Ասված է մեզ ստեղծել ու ձև սվել, հեևաբար արժե կասարել Իր կամքը և մեր կյանքով ու գործերով փառաբանել Իրեն:**



Աղաչում եմ ձեզ... որ ինձ պատերազմակից լինեք՝ ինձ համար առ Աստված աղոթելով: (Յուդ.15. 30)

### **ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ ՇԱԼԸ**

**Ք**աղցկեղի կենտրոններից մեկում, որը մեր տնից շատ հեռու էր, մորս էի խնամում: Բարեկամներս խնդրեցի, որ աղոթեն մեզ համար: Ամիսներն անցնում էին, և միայնություն մեջ տազնապալի մտքերը հյուսվեցին էին ինձ: Ինչպե՞ս կարող էի հոգ տանել մորս մասին, երբ ինքս էի հոգնած ու սպառված: Մի օր բարեկամներիցս մեկից հոգատարություն մի ծրար ստացա: Ջողին մանուշակագույն մի շալ էր գործել և ուղարկել: Դա ջերմորեն հիշեցնում էր, որ մեզ համար ամեն օր աղոթող մարդիկ կան: Երբ այդ փափուկ, բրդյա շալն ուսիս էի առնում, թվում էր՝ Աստված է ինձ գրկում՝ իր ժողովրդի աղոթքներով: Ինձ մխիթարելու և զորացնելու համար մինչև այժմ էլ այդ շալն օգտագործում եմ:

Պողոս առաքյալը հաստատում է ուրիշների համար կատարված աղոթքի կարևորությունն ու հոգի նորոգող զորությունը: Իր ճամփորդությունների ժամանակ նա ցույց տվեց , որ այլոց համար աղոթողները կարող են պատերազմակից լինել (Հուդ.15. 30): Առաջարկելով հատուկ խնդրանքներ՝ նա ոչ միայն ցույց տվեց իր կախվածությունը հավատակից եղբայրների օժանդակությունից, այլև իր վստահությունը, թե Աստված զորություն էր կատարասխանի աղոթքներին (Հմ.31-33):

Մենք բոլորս էլ , երբ մենակ մնանք, կարող ենք ունենալ նման փորձառություն: Բայց Պողոսը ցույց է տալիս, թե ինչպես է պետք աղոթել ուրիշների համար: Երբ մենք պարզված լինենք Աստծո ժողովրդի բարեխոսության աղոթքներով, կատանանք Նրա զորությունն ու մխիթարությունը, ուր էլ որ կյանքը մեզ տանի:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, շնորհակալ եմ բարեխոսական աղոթքների պարզևի և այն վստահության համար, թե Դու լսում ես ինձ և հոգում իմ մասին, որտեղ էլ ես լինեմ: Ամեն:

**Ինչդեռ ուրիշներն են մեզ համար աղոթում, մենք էլ դասրաւս լինենք այլոց համար աղոթելու:**

Խրատ մերժողն ատում է իր հոգին, բայց հանդիմանություն լսողը խո-  
հեմություն պիտի ստանա: (Առ. 15.32)

## **ՍԻՐԱԼԻՐ ՍՐԲԱԳՐՈՒՄ**

**Ա**վելի քան Հիսուսն տարի հայրս խմբագիր էր և անընդհատ կատարելագործվում էր իր աշխատանքում: Նա ոչ միայն քերականական և ուղղագրական սխալներն էր ուղղում, այլև ամեն ինչ անում էր, որ հոգվածը հնարավորինս զրագետ, տրամաբանված ու դյուրընթեռնելի դառնար: Իր աշխատանքում կարմիրի փոխարեն օգտագործում էր կանաչ գրիչ՝ մտածելով, որ կանաչն «ավելի բարեկամական» է, իսկ կարմիրով արված կրճատումներն ավելի տեսանելի ու ուսանելի են սկսնակ գրողների համար:

Երբ Հիսուսը ուղղում էր մարդկանց, սիրով արեց դա: Փարիսեցիների կեղծավորութունը դիմագրավելիս (Մատթ. 23) նա թեև կոպտորեն հանդիմանեց, բայց նրանց օգտի համար արեց: Բայց իր բարեկամ Մարթային մեղմ ճշտումն էլ բավական էր (Ղուկ. 10. 38-42): Պատասխանն էլ համանման եղավ, մինչ փարիսեցիները անտեղի համարեցին իրենց արված հանդիմանութունը, Մարթան մնաց Նրա լավագույն բարեկամներից մեկը (Հովհ. 11. 5):

Խմբագրումը շատերին կարող է դուր չգալ: Մարդիկ ուղղումները ավելի հաճախ չեն ընդունում իրենց գոռոզության պատճառով: Առականների գիրքը խոսում է իմաստնության մասին և հորդորում, որ Սուրբ Հոգու զորությամբ «հանդիմանութուն լսողը խոհեմութուն պիտի ստանա»(15.32):

Աստծո՝ սիրով արված սրբագրումներն ու ուղղումները կօգնեն ճշտել մեր ուղղութունը և Իրեն ավելի մոտիկից հետևել: Իսկ ովքեր մերժում են, խստորեն կպատժվեն (Հմ.10):

**Աղոթք** - Հայր, օգնիր, որ ընդունեմ Քո սիրալիկ սրբագրումները, որպեսզի կարողանամ աճել իմաստնության ու խոհեմության մեջ: Ամեն:

**Ասված իր սիրով մոտենում է մեզ՝ սրբագրելու մեր սխալները:**  
**Պասրա՞ս ենք Իրեն լսելու:**

Ճշմարիտ որ սա Աստծու Որդի էր: (Մատթ. 27. 54)

## **ԱՍՏՎԱԾ ԳՈՐԾՈՒՄ Է**

«Աստված լալիս է»,<sup>-</sup> շնչաց տասնամյա Բիլլ Հեյլին, որը կանգնած էր հավատացյալների բազմության մեջ: Նրանք Աստծուն փնտրելու էին եկել Վիրջինիա նահանգի Շենանդուա հովտից և ուզում էին հասկանալ, թե ինչու է Ամերիկայում այդչափ տարածված ազգային և ռասայական անհավասարությունը: Նրանք կանգնած էին այնտեղ, որտեղ թաղված են նախկին ստրուկները, և ձեռք ձեռքի տված սկսեցին աղոթել: Հանկարծ քամի բարձրացավ ու անձրև սկսվեց: Երբ առաջնորդը ազգային հակամարտությունների լուծման կոչ էր անում, անձրևն ավելի ուժեղացավ: Հավաքվածները հավատացին, որ Աստված է գործում հաշտություն և ներում բերելու համար:

Նույնկերպ էլ Աստված Գողգոթա լեռան վրա էր գործում: Խաչված Քրիստոսի մահից հետո «երկիրը շարժվեց. ժայռերը ճեղքվեցին, գերեզմանները բացվեցին» (Մատթ. 27.51-52): Թեև ոմանք ուրացան Հիսուսին, բայց «Հարյուրապետն ու նրանք, ովքեր նրա հետ պահպանում էին Հիսուսին, երբ որ երկրաշարժն ու այն պատահածները տեսան, շատ վախեցան ու ասացին: «Ճշմարիտ որ սա Աստծու Որդի էր» (Հմ. 54):

Հիսուսի մահվամբ Աստված մեղքերի ներում էր շնորհում բոլոր նրանց, ովքեր հավատում էին Իր անվանը: «Աստված էր Քրիստոսի մեջ, որ աշխարհն իր հետ հաշտեցրեց, և նրանց հանցանքներն իրենց ներեց և հաշտության խոսքը մեր մեջ դրեց» (Բ.Կորնթ. 5.19): Մի՞թե կա իրար ներելուց ավելի լավ ձև՝ ցույց տալու համար, թե Աստված մեզ ներել է:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, աշխարհը այնքան սիրելի ու համար, որ Հիսուսին ուղարկեցիր մեր մեղքերը ներելու: Օգնիր, որ կարողանամ ես էլ ուրիշներին ներել: Ամեն:

**Ասված Իր Որդու միջոցով ներել է մեր բոլոր մեղքերը:  
Պահար՞ս եմք մեմք էլ մեր հերթին ուրիշներին ներել:**

Որքա՛ն քաղցր են քո խոսքերն իմ քիմքին՝ ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին: (Մաղմ. 118. 103)

## ՄԵՂՐԻՑ ԱՆՈՒՇ

**1** 893թ. Հոկտեմբերին Չիկագոյի օրվա առթիվ բոլոր թատրոն-ները փակվել էին, որպեսզի մարդիկ մասնակցեն Համաշխարհային այդ տոնավաճառին: Յոթ հարյուր հազար մարդ էր հավաքվել տոնահանդեսին: Դուայթ Մուդրին որոշեց հենց նույն օրը Չիկագոյի մյուս կողմում գտնվող համերգային դահլիճ հրավիրել մարդկանց՝ Աստծո խոսքը քարոզելու համար: Նրա բարեկամ Ռ. Թորրին թերահավատություն հայտնեց, թե նա կկարողանա մարդկանց հավաքել: Բայց Աստծո շնորհիվ Մուդրին դա հաջողվեց: Հետագայում Թորրին գրեց, թե բազմությունը եկել էր, որովհետև Մուդրին քարոզում էր այն գիտակցումով, որ «միակ գիրքը, որ այս հին աշխարհն ամենից ավելի է ուզում իմանալ, Աստվածաշունչն է»: Թորրին կամենում էր, որ ուրիշներն էլ Աստվածաշնչին վերաբերվեն այնպես, ինչպես Մուդրին էր կարգում՝ նվիրումով ու սիրով:

Աստված Սուրբ Հոգու միջոցով Չիկագոյի ժողովրդին 19-րդ դարավերջին բերեց դեպի Ինքը և մինչև այժմ էլ շարունակում է խոսել: Մենք կարող ենք արձագանքել Աստծո և Իր Խոսքի հանդեպ Սաղմոսերգուի ասածին. «Որքա՛ն քաղցր են քո խոսքերն իմ քիմքին՝ ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին (Մաղմ. 118. 103): Սաղմոսերգուի համար Աստծո ճշմարտության ու սիրո պատգամը «ճրագ է իմ ոտքերի համար, և լուսավորում է իմ շավիղները» (Հմ.105):

Երբ խորասուզվում ենք Աստծո Խոսքի մեջ, Աստված ավելացնում է մեր նվիրումը Իրեն և առաջնորդում է մեզ՝ Իր լույսը շողացնելով մեր անցած ճանապարհներին:

**Աղոթք** - Շնորհքի՛ Դայր, մեզ տվել ես Աստվածաշնչի պարգևը: Օգնի՛ր, որ կարդամ ու հասկանամ այն, որպեսզի կարողանամ հավատարմությամբ ծառայել Քեզ: Ամեն:

**Կարդա՛ և սովորի՛ր Աստվածաշունչը, որովհետև այն մեղրից  
բաղված է և լուսավորում է կյանքիդ ճակատները:**

Ի՞նչ է մնում մարդուս իր բոլոր չարչարանքից և սրտի տանջանքից, որ ջանք է թափել արեգակի ներքո: (Ժող. 2. 22)

### **ՀԱՆԳՍԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐ**

**Ե**թե ուզում ես երկար ապրել, արձակուրդ գնա՛, - հայտարարեցին Հելսինկիի գիտնականները՝ քառասուն տարի ուսումնասիրելով միջին տարիքի գործադիր տնօրեն եղած տղամարդկանց՝ սրտի տագնապ ունենալու հավանականությունը: Նրանք եկան այն եզրակացություն, որ մահվան ելքով հիվանդությունը ավելի քիչ էր այն մարդկանց մոտ, ովքեր օգտագործել էին իրենց արձակուրդը:

Աշխատանքը մեր կյանքի շատ կարևոր մասն է: Աստված Ծննդոց Յուսուսին հետ ունեցած հարաբերություն խզումից առաջ մեզ համար նախանշել էր այդ մասը: Իսկ Սողոմոնը գրել է նրանց գործի անիմաստ լինելու մասին, ովքեր չեն գործում Աստծո փառքի համար՝ անգրադառնալով նրանց «տանջանքին ու չարչարանքին» (Ժող. 2.22): Նույնիսկ այն պահին, երբ նրանք ոչինչ չեն անում, «գիշերն էլ նրանց սիրտը չի ննջում» (Հմ.23), որովհետև մտածում են դեռևս լինելիք բաների մասին:

Մենք էլ ենք երբեմն զգում, որ «ամեն ինչ ունայնություն է» (Հմ.17) և տանջվում ենք մեր գործերն ավարտելու անկարողությունից: Բայց երբ հիշենք, որ Աստված մեր կյանքի ու աշխատանքի մի մասն է, կկարողանանք և՛ ավելի շատ աշխատել, և՛ հանգստանալ: Կարող ենք վստահել Իրեն, որ լինի մեր հայթայթողը, որովհետև Ինքն է ամեն ինչի տվողը: Սողոմոնն էլ է ընդունում, որ «Ո՞վ կարող է ուտել և խմել առանց Նրա» (Հմ.25):

**Աղոթք** - Աստված, միայն Դու՛ կարող ես իմաստ ու արժեք տալ իմ արած գործերին: Ամեն:

**Երբ աշխատում ես, հի՛շի՛ր, որ առանց Ասծո ոչինչ չես կարող անել, ուստի հրավիրի՛ր Իրեն քեզ խրատելու և զորացնելու համար:**

Մենք Աստու գործակիցներ ենք: (Ա.Կորնթ.3.9)

## **ՇԱՏ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԲԱՆ**

**Ա**նգլիայի Սաութհեմփթոն քաղաքի «Հոկտեմբեր» անունով Հայտնի գրախանութի գրքերը հարկավոր էր տեղափոխել նույն փողոցի մեկ այլ գրախանութ: Երկու հարյուրից ավելի կամավորներ շարվեցին մայթին ու, յուրատեսակ «կենդանի շղթա» կազմելով ու մեկը մյուսին փոխանցելով, գրքերը տեղափոխեցին: Տեսնելով կամավորների աշխատանքը՝ խանութի աշխատակիցներից մեկն ասաց. «Իսկապես հուզիչ է տեսնել օգնող մարդկանց, որոնք ցանկացել են մի մեծ գործի մասնակցել»:

Մենք կարող ենք շատ ավելի մեծ գործի մասնակցել: Աստված մեզ օգտագործում է, որ Իր սիրո պատվերով հասնենք աշխարհին: Երբ մեկը մեզ հետ բաժնեկցում է պատգամը, մենք էլ կարող ենք այն ուրիշին փոխանցել: Պողոսը Աստծո թագավորության շինությունը համեմատում է պարտեզ տնկելու հետ, երբ ոմանք սերմերն են ցանում, մյուսները ջրում են: Նա ասում է. «Մենք Աստծու գործակիցներ ենք» (Ա.Կորնթ.3.9):

Յուրաքանչյուր գործ կարևոր է, բայց բոլորն էլ կատարվում են Աստծո Հոգու զորությունով: Աստված Իր Հոգով մարդկանց կարողություն է պարգևում, որպեսզի նրանք հոգևոր առումով աճեն, երբ լսեն, որ Նա սիրում է իրենց և Իր Որդուն ուղարկել է իրենց համար մեռնելու, որպեսզի իրենք ազատվեն մեղքերից (Հովհ. 3.16):

Աստված աշխարհի վրա Իր գործերի մեծ մասն անում է ինձ ու քեզ նման «կամավորների» միջոցով: Մենք մի մասն ենք այդ մեծ հավաքականության, որը շատ ավելի մեծ է, քան մեր որևէ ներդրումը: Բայց միասին գործելով ու Իր սերը միմյանց փոխանցելով՝ մենք կարող ենք օգնել, որ այն աճի:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ ինձ նկատի ես ունենում քո ծրագրերում, որպեսզի բոլորին պատմեմ քո սիրո մասին: Օգնիր, որ կարողանամ իմ խոսքերով ու գործերով Քեզ լավագույնս ներկայացնել: Ամեն:

**Երբ ծառայում ես Աստու, դու քեզ քե՛ս որդես Աստծ ծրագրի մի մասը:**

Ես եմ Բարի հովիվը, և ես ճանաչում եմ իմ ոչխարներին, ու նրանք էլ ճանաչում են ինձ: (Քով. 10.14)

## **ՃԱՆԱԶԻՐ ԻՐ ԶԱՅՆԸ**

**Մ**ի տարի Ամառային Սուրբ Գրոց վարժարանի ծրագրով եկեղեցին որոշեց Սուրբ Գրքի պատմությունները ներկայացնելու համար կենդանիներ բերել: Կենին խնդրեցին, որ ոչխարը ներս բերի: Նա պետք է պարանով կապված բողբոս կենդանուն բառի բուն իմաստով քարշ տալով հասցներ մարզաբաժնի: Մեկ շաբաթ անց, սակայն, ոչխարը սովորել էր Կենի հետևից գնալ, ու նույնիսկ առանց պարանի էր հետևում տղային:

Նոր Կտակարանում Հիսուսն Իրեն համեմատում է Հովվի հետ՝ հաստատելով, որ Իր ժողովուրդը՝ ոչխարները, Իրեն են հետևելու, որովհետև նրանք ճանաչում են Իր ձայնը (Հովհ. 10.4): Սակայն այդ նույն ոչխարները «օտարի հետևից չեն գնում, այլ նրանից փախչում են, որովհետև օտարների ձայնը չեն ճանաչում» (Հմ.5): Ոչխարների նման մենք՝ Աստծո որդիներս, Իր հետ ունեցած հարաբերությունները ճանաչում ենք մեր Հովվի ձայնը: Եվ տեսնելով Իր նկարագիրը՝ սովորում ենք վստահել Իրեն:

Հոգևոր առումով աճելով, Իրեն ճանաչելով ու սիրելով՝ մենք կճանաչենք Իր ձայնը և ավելի լավ կկարողանանք խուսափել գողից, որը «գալիս է միայն գողանալու, սպանելու և կորցնելու» (Հմ.10), խաբեբայից և բոլոր նրանցից, ովքեր մեզ հեռացնում են Իրենից: Մենք կկարողանանք վստահել միայն մեր Հովվի ձայնին, որը մեզ կառաջնորդի ապահով տեղեր:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ Դու ես սիրող Հովիվը: Օգնիր, որ կարողանամ ճանաչել Քո ձայնը և հետևել Քեզ: Ամեն:

**Ավելի մոտ ծանոթանալով Բն Տիրոջ հետ՝ դու կկարողանաս ճանաչել Նրա ձայնը:**

Պիտի վերադառնան ու ցնծությամբ գան Սիոն, և նրանց գլխի վրա հավիտենական ուրախություն պիտի լինի: (Ես. 35.10)

**ԵՐԳԵՐ ԿԵՂՏՈՏ ՓՈՂՈՑԻՑ**

**Կ**ատյուրան Պարագվայի մայրաքաղաքի աղբավայրին հարող շրջանն է, որտեղ ապրող աղքատ մարդիկ գոյատևում են աղբանոցից գտած իրերով: Սակայն այդ կեղտի ու հուսահատության մեջ նույնիսկ գեղեցիկ բան է ծնվել. նվազախումբ: Երբ ջուլթակն ավելին արժե, քան այդ թաղամասում գտնվող բնակարանը, նվազախումբն ունի այդ և այլ երաժշտական գործիքները: Զուլթակները պատրաստել են աղբի միջից հավաքած թիթեղներով ու ծոված պատառաքաղներով, սաքսոֆոնը՝ կոյուղու խողովակների մնացորդներով՝ չչի կափարիչները դարձնելով բանալի և կոճակ: Թավջութակներ են ստացել թիթեղյա տակաոներով՝ բարակ գրտնակներն օգտագործելով որպես լարերը սեղմող գամ: Պատկերացրեք, որ այդ գործիքներով կարող է Մոցարտի երաժշտությունը հնչել և մարդկանց հաճույք պարգևել: Այս տարօրինակ նվազախումբը շրջել է աշխարհի շատ երկրներում՝ իր երիտասարդ անդամներին ներշնչելով նոր հույս: Զուլթակներ՝ աղբից և երաժշտություն՝ աղքատ փողոցից: Սա Աստծո գործի խորհրդանիշն է: Երբ Եսայի մարգարեն նախատեսում է Աստծո նոր ստեղծագործությունը, հայտնվում է աղքատությունից գեղեցկություն առաջանալու մի հրաշալի պատկեր. երբ ցնծում է անապատը (Ես. 35.1-2), ջուր է բխում անապատում և գետ՝ ծարաված հողում (Հմ.6-7), «Նրանք իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն, և իրենց սվիններից՝ մանգաղներ» (2.4) և աղքատ ժողովրդի «գլխի վրա հավիտենական ուրախություն, օրհնություն ու ցնծություն պիտի լինի» (35.10): Կատյուրայի նվազախմբի ղեկավարն ասում է. «Աշխարհը մեզ աղբ է ուղարկում, մենք այն փոխարինում ենք երաժշտությամբ»: Նրանք արտացոլում են ապագայի մի նշույլը. երբ Աստված բոլոր արցունքները կսրբի և աղքատություն այլևս չի լինի:

**Աղոթք** - Սուրբ Հոգի, իմ կյանքում եղած աղքատությունը վերածի՛ր գեղեցկության: Ամեն:

**Ցավ, վիճ, առադանք մի՛ս էլ կունենանք, սակայն Աստված կարող է դրանցից գեղեցկություն առաջացնել:**



Ամենքդ Աստուծու որդիներ եք՝ Քրիստոս Յիսուսին հավատալով:  
(Գաղ. 3.26)

### **ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ**

**Ս**կովտիայում Անգլիայի թագուհուն հանդիպելուց հետո Սիլվիան ու ամուսինը լուր ստացան, որ թագավորական ընտանիքն ուզում է իրենց հյուրընկալվել: Սիլվիան սկսեց պատրաստութուն տեսնել: Նա շատ էր հուզվում նախքան հյուրերի գալը՝ նա դուրս ելավ սեղանի համար ծաղիկներ քաղելու և հանկարծ զգաց, որ Աստված իրեն հուշում է, թե ինքն է թագավորների թագավորը և իր հետ է ամեն օր: Անմիջապես խաղաղվեց ու մտածեց.«Ի վերջո, նա ընդամենը թագուհին է»:

Սիլվիան ճիշտ է: Ինչպես Պողոս առաքյալն է նշել, Աստված է «Թագավորների Թագավորն ու տերերի Տերը» (Ա.Տիմ. 6.15) և Նրան հավատացողները «Աստծո որդիներն են» (Գաղ. 3.26): Քրիստոսին պատկանելով՝ Աբրահամի ժառանգներ կլինենք (Հմ.29): Սեռային, ազգային կամ սոցիալական տարբերությունները կարևոր չեն, որովհետև մենք «Մեկ ենք Հիսուս Քրիստոսով» (Հմ.28): Մենք Թագավորի զավակներն ենք:

Սիլվիան ու ամուսինը հիանալի ժամանակ անցկացրին թագուհու հետ, բայց այն հիշեցումը, որ ամենավերևում եղող բարձրագույն Թագավորը իրենց հետ է ամեն վայրկյան, ավելի էր ջերմացնում նրանց սրտերը: Բոլոր նրանք, ովքեր ամբողջ սրտով հավատում են Տեր Հիսուսին (Հմ.27), կարող են միասնական լինել՝ իմանալով, որ իրենք Աստծո որդիներն են:

Այս ճշմարտությունը կառչելը ինչպե՞ս կարող է ձևավորել մեր ապրելակերպը:

**Աղոթք** - Թագավորների թագավոր և տերերի Տեր, հզոր ես ու փառավոր: Շնորհակալ եմ, որ իջնում ես ցած՝ ինձ սիրելու և որպես Քո զավակ ընդունելու համար: Ամեն:

**Եթե Աստծո ընձանիփ անդամ ես, ուրիշներին էլ հրավիրի՛ր, որ քեզ միանան:**

Մանուկների ու կաթնակերների բերանով օրհնություն կատարեցիր: (Մատթ. 21.16)

**ԼԱՅԻՐ ԻՆՁ**

**Ե**րեք տարեկան թոռնուհիս, ուրախ վազվզելով մեր բակում, բացականչեց. «Տատի՛կ, տե՛ս՝ ինչպես եմ ես պարում»: Նրա պարը զվարճացրեց ինձ, իսկ եղբոր դիտողությունը, թե «ոչ թե պարում է, այլ՝ վազում», չխամբեցրեց մանկան ուրախությունը:

Առաջին Ծաղկազարդի կիրակին լավ ու վատ բաների օր էր: Երբ Հիսուսը, էջի վրա նստած, մտավ Երուսաղեմ, բազմությունը հրճվանքով բացականչեց. «Օվսաննա՛, ...Օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը» (Մատթ. 21.9): Ամբոխի մեջ, սակայն, շատերն սպասում էին, որ Փրկիչն իրենց ազատի հռոմեացիներից և ոչ թե լինի լուկ Փրկիչ, որ մեռնելու է իրենց մեղքերի համար:

Նույն օրը, հակառակ քահանայապետերի բարկության, որոնք հարցականի տակ դրեցին Հիսուսի հեղինակությունը, տաճարում եղող մանուկները, ցատկոտելով և իրենց ձեռքերի արմավենու ճյուղերը շարժելով, իրենց ուրախությունն արտահայտեցին և բացականչեցին. «Օվսաննա՛ Դավթի Որդուն» (Հմ. 15.): Տեսնելով մանուկների փառաբանումը՝ Նա դիմեց վրդովված առաջնորդներին. «Դուք երբեք չե՞ք կարդացել, թե՛ «Մանուկների ու կաթնակերների բերանով օրհնություն կատարեցիր» (Հմ.16):

Հիսուսը մեզ հրավիրում է տեսնելու, թե Ինքը ով է: Ու երբ տեսնենք, մանկան նման, չենք կարող չուրախանալ Իր ներկայությունը:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմ, հիանում և ուրախանում եմ Քո կատարած բոլոր բաներով: Խնդրում եմ՝ օգնի՛ր, որ կարողանամ կենտրոնանալ Քեզ վրա: Ամեն:

**Ուշադրություն դարձրու՛ Տեր Հիսուսին և ուրախությունդ հայցնի՛ր ու Իրեն գովեցի՛ր փառաբանության ոգով:**

Հուլյսս դրի Տիրոջ վրա: (Սաղմ. 10.2)

## ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՂԹԱՅԱՐԵԼ ԱՍՏԾՈՆ ՀԵՏ

2016-ին նկարահանված «Հաքսո Ռիչ» ֆիլմում արտացոլված են Միացյալ Նահանգների բանակի զինվոր Դեսմոնդ Դոսսի հերոսական արարքները: Նրա համոզմունքները թույլ չէին տալիս զենք վերցնել ու մարդ սպանել, ուստի պատերազմի ժամանակ դարձավ բանակի հիվանդապահ և նվիրվեց վիրավորների կյանքերը փրկելուն: 1945թ. հոկտեմբերի 12-ին պարզևատրման ժամանակ այսպես բնութագրեցին նրան. «Առաջին կարգի պարզ զինվոր Դոսսը մերժեց իրեն ապահովել և մնաց կրակոցների մեջ, վիրավորների մոտ՝ նրանց բոլորին օգնելով ու հասցնելով ապահով վայր: Նա անվարան զնաց թշնամական ռումբերի դեմ՝ ազատելով հրամանատարին»:

10-րդ սաղմոսում Դավթի համոզումը, թե իր հույսը Տիրոջ վրա է, ստիպեց, որ նա փոխանակ փախչելու՝ դիմազրավի իր հակառակորդներին (Հմ.2-3): Նրա հավատո հանգանակը այս պարզ բառերն էին.«Հուլյսս դրի Տիրոջ վրա»(Հմ.2): Եվ այդ լավ արմատավորված համոզմունքով էլ նա առաջնորդվելու էր:

Հաջորդ համարներում Դավթի բառերը ավելի են զորացնում Աստծո մեծութունը: Այո՛, կյանքը երբեմն լինում է պատերազմական դաշտի նման (նյութական, առողջական խնդիրներ, հոգևոր ճնշումներ), որը քեզ ստիպում է ապահով մի տեղ գտնել: Ի՞նչ անել: Ընդունենք, որ Աստված տիեզերքի թագավորն է (Հմ.5), հրճվենք ճիշտ քննելու Նրա կարողությունը(Հմ.6) և վստահենք Նրա արդարամտությունն ու ճշմարտասիրությունը(Հմ.8):

**Աղոթք** - Հայր, օգնիր, որ կարողանամ ավելի հստակ Քե՛զ տեսնել, քան ինձ հանդիպած որևէ ուժ, և ապահովության ու պաշտպանվելու համար վազեմ Քեզ մոտ: Ամեն:

**Դիմագրավելիք վսանգներ ու դժվարություններ կլինեն, բայց վստահե՛նք Աստծուն, որը կարող է մեզ յաճաճեցնել ու ազատել:**

Եգիպտացիների բոլոր աստվածներից վրեժ պիտի լուծեն: (ԵԼՔ 12.12)

### **ՔԻԹԴ ԲՈՆԵԼ ԵՄ**

**Բ**րուքլին քաղաքի Եգիպտական արվեստի թանգարանի զարմացած այցելուների առաջին հարցն այն է, թե արձաններն ինչու<sup>՞</sup> են առանց քթի: Թանգարանի աշխատակիցը այդ հանգամանքը չի կարող պայմանավորել բնական մաշումով կամ պատահականությամբ, որովհետև նույնիսկ գծագրված դեմքերը քիթ չունեն: Ասել է, թե՛ դա գիտակցաբար է արված: Բացատրությունն այն է, որ թշնամիները Եգիպտոսի աստվածներին սպանելու ցանկություն ունեին և վարվեցին այնպես, կարծես նրանց հետ խաղալիս լինեին «քիթդ բռնել եմ» խաղը: Կտրեցին այդ կուռքերի քթերը, որպեսզի նրանք չկարողանան շնչել: Իսկապե՞ս այդպես էր: Փարավոնը կիմանար, թե նման աստվածներով ինքը ինչ գովարությունների մեջ կհայտնվեր: Այո՛, նա ուներ բանակ և ամբողջ ազգի հավատարմությունը: Իսկ հրեաները հոգնած ստրուկներ էին, որոնց առաջնորդում էր երկչոտ փախստական Մովսեսը: Բայց Իսրայելն ուներ կենդանի Աստված, իսկ փարավոնի աստվածները կեղծ էին: Տասը հարվածից հետո դրանց երևակայական կյանքերը խորտակված էին:

Իսրայելն իր հաղթանակը նշեց Բաղարջակերաց տոնով, երբ մարդիկ մեկ շաբաթ անթթիմոր հաց կերան (ԵԼՔ 12.17, 13.7-9): Թթիմորը մեղք էր խորհրդանշում, և Աստված ուզեց, որ Իր ժողովուրդը միշտ հիշի, որ իրենց կյանքը Իրեն է պատկանում:

Մեր Հայրը կուռքերին ասում է «Քիթդ բռնել եմ», իսկ Իր գավակներին՝ «Կյանքդ բռնել եմ»: Ծառայի՛ր այն Աստծուն, որն Իր սիրալիբ թևերի մեջ քեզ շունչ ու հանգիստ է տալիս:

**Աղոթք** - Կյանքի՛ Դայր, կյանքս տալիս եմ Քեզ: Օգնի՛ր՝ հասկանալ, որ իմ կյանքում երբևէ «թշնամի» ընկալվածները ոչինչ են Քո զորության համեմատ: Ամեն:

**Սուտ ասվածները շնչառեղծ են անում մեր կյանքը, բայց մենք վստահում ենք մեր հոգր Ասծուն:**

Փորձիր ինձ, Աստված, ու ճանաչիր իմ սիրտը: (Սաղմ. 138. 23)

## **ԻՍԱՍՏՆՈՒԹՅԱՄՔ ՊՈԿԵԼ ՎԱՅՐԻ ԽՈՏԵՐԸ**

**Թ**ոռնիկներս վազվզում էին մեր տնամերձ հողամասում և ոչ թե որևէ խաղ էին խաղում, այլ մոլախոտերն էին պոկում: Ամենափոքրը, ցույց տալով իր ձեռքի խոտը, ասաց. «Պետք է արմատներով պոկել»: Նա ուրախացել էր, որ լավ էր սերտել իրեն բացատրածը: Բայց ուրախանալուց զատ հարկավոր էր նաև ճիշտ զանազանել լավ և վատ խոտերը: Մոլախոտերը նպատակադրված արմատախիլ անելը առաջին քայլն է նաև անձնական մեղքերից ձերբազատվելու ճանապարհին: Ուստի Դավիթը աղոթեց՝ ասելով. «Փորձիր ինձ, Աստված, ու ճանաչիր իմ սիրտը, քննիր ինձ ու ճանաչիր իմ շավիղները, և տե՛ս, եթե իմ ճանապարհին անօրինություններ կան, առաջնորդիր ինձ քո հավիտենական ճանապարհներով» (Սաղմ. 138. 23-24): Իմաստուն մտտեցում է Աստծուց խնդրելը, որ գտնի մեր մեղքերն ու մատնացույց անի: Որովհետև ամենից լավ և ամեն ինչ մեր մասին Նա գիտե: Ինչպես ասում է Սաղմոսերգուն. «Տե՛ր, ինձ փորձեցիր ու ճանաչեցիր ինձ: Դու իմացար իմ նիստուկացը, հեռվից հասկացար իմ մտածումները» (Հմ. 1-2): Ապա ավելացնում. «Զարմանալի է քո իմացությունն իմ մասին, այնքան զորեղ, որ չեմ կարող հասու լինել դրան» (Հմ. 6): Նույնիսկ մեղքը դեռ չարմատավորված՝ Աստված կարող է զգուշացնել այդ վտանգի մասին: Նա ճանաչում է մեզ ու «մեր բնակավայրը»: Ուստի երբ որևէ մեղավոր կեցվածք փորձի արմատավորվել մեր հոգում, Նա առաջինն է իմանում այդ մասին ու մատնանշում: Դավիթը գրել է. «Ո՞ւր գնամ ես քո հոգուց, կամ քո դեմքից ո՞ւր փախչեմ»: Մտտիկից հետևենք մեր Փրկչին, որպեսզի կարողանանք բարձր տեղեր հասնել:

**Աղոթք** - Սիրող Հայր, երբ ցույց ես տալիս իմ անձնական մեղքերը, մատնանշիր նաև այդ մեղքի մոլախոտերը պոկելու Քո ծրագիրը: Ամեն:

**Դիմիր Ասծուն՝ խնդրելով, որ քեզ ցույց տա արժանի արմատավորված մեղքերը և արմատախիլ անի դրան:**



## Նյութերի ցանկ

Աղոթք.....	Հուն. 7, փետ. 3, 11, 14, 26, 28, մարտ 7, 19
Աղքատություն.....	մարտ 11
Անարդարություն.....	Հուն. 28, 21, փետ. 25
Աստծուն մեծարել.....	Հուն. 20
Աստվածաշունչ՝ հեղինակություն.....	մարտ 1, 8, 15, 22
Աստվածաշունչ՝ ներշնչում.....	մարտի 15
Աստվածաշնչի ուսումնասիրություն.....	փետ. 11
Աստծո գորությունը.....	մարտի 30
Աստծո սերն ու գուրգուրանքը.....	Հուն. 1, 2, 6, 11, փետ. 7, 13, մարտ 2, 3, 5, 12, 13, 15, 16
Աստծուն սպասել.....	փետ. 3, 10, 20
Աստծուն վստահել.....	Հուն. 16, 17, 19, փետ. 5, 18 ,26 ,մարտ 5, 29
Ավետարանչություն .....	Հուն. 4, 22, փետ. 6, 23, մարտ 24
Բախում եւ առճակատում. ....	Հուն. 10, մարտ 20
Բարեկամություն.....	փետ. 24
Դատել.....	մարտ 6
Երջանկություն... ..	Հուն. 9, մարտ 17, 28
Ինքնապատկեր.....	փետ. 21
Խորհրդատվություն... ..	Հուն. 25, փետ. 4
Ծառայություն... ..	Հուն. 25, մարտ 24, 27
Ծերանալ.....	փետ. 18
Կյանքի պայքարներ.....	փետ. 2, մարտ 29
Կեղծ ուսուցիչներ.....	մարտ 25
Կուսակաշտություն.....	մարտ 30
Հավածանք... ..	Հուն. 30,Հուն. 3, 29
Հանգիստ.....	Հուն. 29, մարտ 3
Հեզություն.....	փետ. 19, մարտ 20
Հիվանդություն դիմադրել.....	Հուն. 17
Հնազանդություն... ..	Հուն. 26, մարտ 1
Հոգատարություն.....	փետ. 18
Հոգևոր աճ.....	փետ. 4, մարտ 10



Հոգևոր բարեփոխում	Հուն. 12, փետ. 2
Հոգևոր կարգապահություններ	Հուն. 5, մարտ 19, 22, 31
Հոգևոր պատերազմ	Հուն. 30
Հպարտություն	փետ. 19
Հանցանք	Հուն. 27
Հավիտենական կյանք	փետ. 12, մարտ 26
Հուսահատություն	մարտ 14, 16
Մատակարարում	մարտ 11
Մեղքի թողություն	Հուն. 27, փետ. 12, մարտ 13, 21
Մենակություն	փետ. 24
Մտահոգություն	Հուն. 27
Ներել ուրիշներին	Հուն. 10, 31
Շնորհակալություն	մարտ 12
Զարաշահում	Հուն. 12
Պաշտամունք	Հուն. 7, 13, փետ. 18, 19, մարտ 9
Սիրել ուրիշներին	Հուն. 14, 18, մարտ 6
Սուրբ Հոգի	փետ. 22, մարտ 17, 22
Ստեղծագործություն	Հուն. 20, մարտ 9, 16
Սրբություն	մարտ 31
Վախ	Հուն. 17, 30
Վարդանանք	փետ. 11
Վիշտ	Հուն. 26, փետ. 25
Տանջանք	Հուն. 2
Ցեղապաշտություն	Հուն. 17, 18, 28, մարտ 21
Փրկություն	Հուն. 15, 21, մարտ 21
Քրիստոս՝ Աստվածություն	մարտ 4
Քրիստոս՝ կյանք և ուսուցում	փետ. 8
Քրիստոս՝ մահ	փետ. 14
Քրիստոս՝ Հարություն	Հուն. 22, փետ. 14
Քրիստոս՝ վերադարձ	մարտ 26
Քրիստոս՝ Փրկիչ/Մեսիա	Հուն. 14, 15, մարտ 25, 28
Քրիստոսի համար ապրել	Հուն. 18, 24, փետ. 20, 27, մարտ 8, 18
Քրիստոսի նման ապրել	Հուն. 2, 4, փետ. 2, 9, 8, 9, 15, 16, 17, 22, 23



## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեներով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռախոս՝ +374 10 543576; +374 10 543578  
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am  
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. +374 47 945275

-----  
Անուն, ազգանուն .....

Հասցե.....

.....

Հեռախոս.....

-----



## Նշումների համար

## Նշումների համար



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ  
Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի և  
Արցախի մասնաճյուղերին

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78  
Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)  
Էլկայք՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Արցախ  
375000 ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան 7ա  
Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95